

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

մ.թ.ա. XV-VII դարերում

(Հայոց հին դատնություն)



ԵՐԵՎԱՆ 1998

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՑԵՂԱՍԴԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Ն. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ

մ.թ.ա. XV-VII ԴԱՐԵՐՈՒՄ

(Հայոց հին պատմություն)

A
85/09



ԵՐԵՎԱՆ
1998

Աշխատությունը հրատարակության է նրաշխավորել
ՆՆ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիրներ՝
պարմ. գիտ. դոկտոր **Լ.Ա.Բարսեղյան**
բան. գիտ. թեկնածու **Մ.Ա.Աղաբեկյան**

Խաչատրյան Վ. Ն.

Խ 282

Նայաստանը մ. թ. ա. XV-VII դարերում
(Նայոց հին պատմություն) - Եր.: Զանգակ-97,
1998 - 164 էջ.

Ժամանակակից պատմաբանները գտնում են, որ հայոց պետականությունը Նայկական լեռնաշխարհում սկսվում է Ուրարտուի կործանումից հետո (մ. թ. ա. VI դար.):

Աշխատության մեջ հեղինակը խեթական, ասսուրական, ուրարտական սեպագիր աղբյուրների և Մովսես Խորենացու «Նայոց պատմության» համապատասխան նյութի համեմատական վերլուծությամբ պարզում է, որ հայոց պետականության մասին առաջին վկայությունները վերաբերում են մ. թ. ա. XV դարի վերջերին:

Նա, փաստերի վրա հենվելով, վերականգնում է մ. թ. ա. XV-VII դարերի հայոց արքաների ժամանակագրությունը և Նայկական թագավորության այդ շրջանի պատմությունը, որը մ. թ. ա. 782-680 թթ. ընդհատվել է Վանի փիրակալության (Ուրարտու) նվաճումների հետևանքով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Գլուխ առաջին: Ժամանակագրություն	16
1. Մովսես Խորենացու հայոց հին պատմության ժամանակագրական հենքը	16
2. Նայկյան ժամանակաշրջան	22
3. Արևելահայկական թագավորության ժամանակաշրջան	24
4. Վանի թագավորության արքայացանկը Մովսես Խորենացու և վաղ միջնադարի հայ պատմիչների աշխատություններում	27
5. Սկայորդու և Պարույրի ժամանակաշրջան	32
Գլուխ երկրորդ: Նայասա, Տեղագրություն, ազգաբնակչություն և ռազմաքաղաքական պատմություն	34
1. Նայասա երկրի փարածքը	34
2. Նայասա երկրի ազգաբնակչությունը	38
3. Նայասա թագավորության ռազմաքաղաքական պատմությունը ժամանակագրության հարցեր	46
Նայասա-խեթական ռազմական ընդհարումները մ. թ. ա. XV դարի վերջերին և XIV դարի սկզբներին	50
Նայասա-խեթական ռազմական ընդհարումները մ. թ. ա. XIV դարի առաջին քառորդում	55
Նայասա-խեթական նոր դաշնակցություն մ. թ. ա. XIV դարի երկրորդ քառորդում	58
Նայասա-խեթական հարաբերությունների սրումը մ. թ. ա. XIV դարի երրորդ քառորդում	68
Նայասա-խեթական ռազմաքաղաքական փոխհարաբերությունները մ. թ. ա. XIV դարի վերջին և XIII-ի առաջին կեսին	78
Նայքը աստուրական թագավոր Թուրուլթի-Նինուրթա I-ի մ. թ. ա. 1244 թ լեռնաշխարհ կապարած արշավանքի ժամանակ	81
Նայասա-խեթական ռազմաքաղաքական փոխհարաբերությունները մ. թ. ա. XIII դարի վերջին քառորդում	87
Գլուխ երրորդ: Նայաստանը մ թ ա XII դարում	95

1. Նաիրի երկրների փարսաձրը	95
2. Նաիրի երկրների ազգաբնակչությունը	98
3. Քաղաքական պայմանության հարցեր	101
Գլուխ չորրորդ: Արևելահայկական թագավորությունը	
մ. թ. ա. XI-IX դարերում	102
1. Նայկական թագավորության հիմնադրումը Արարափյան դաշտում	102
2. Արևելահայկական թագավորության հզորության ժամանակաշրջանը . .	105
3. Արևելահայկական թագավորության անկումը և օտար՝ քիայնական պետության վերելքը	109
4. Արևելահայկական թագավորության կործանումը	114
Գլուխ հինգերորդ: Նայասփանը Ուրարտական թագավորության հզորության ժամանակաշրջանում	118
1. Ուլքեր էին ուրարտացիները և երբ նրանք հայտնվեցին Վանի նահանգում	118
2. Նայկական լեռնաշխարհի ազգաբնակչությունը մ թ ա IX-VII դարերում	121
3. Նայերի պայթարը օտար ուրարտական բռնակալների իշխանության դեմ մ. թ. ա. 782-681 թթ.	130
Գլուխ վեցերորդ: Նայասփանը մ. թ. ա. VII դարում	133
1. Նայկական թագավորության վերականգնումը մ թ ա 680 թ և Բիայնիլիի անկումը	133
2. Նայկական թագավորությունը Պարույրի օրոք և Ուրարտուի անկումն ու կործանումը	138
3. Նայասփանի իրադարձությունները մ. թ. ա. VII դարում ըստ «Սասունցի Դավիթ» էպոսի	140
Եզրակացություններ	143
Գրականության ցանկ	150
Անձնանուններ	153
Տեղանուններ	155

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց հին պատմությունը գրավոր ավանդված է V և ավելի ուշ դարերի հայ պատմիչներ Մովսես Խորենացու, Սեբեոսի, Հովհաննես Դրասխանակերպոցու և այլոց աշխատություններով: Դրանցում մեր պատմությունը սկսվում է Հայկ նահապետի գործունեությամբ: Հայկի և նրան հաջորդած այլ թագավորների իշխանության փարիների քանակը և դրանց թվագրումը միջնադարի մեր պատմիչների կողմից չի փրվել: Առաջինը այդպիսի փորձ է կատարել XVIII դարի եշանավոր պատմաբան Մ. Չամչյանը:

Միջնադարի մեր պատմիչները հայոց հին պատմությունը որոշ լրացումներով ներկայացնում են նույն ձևով: Մեզանում այդ պատմությունը հիմնական գծերով համարվել է հավաստի և դասավանդվել է մեր դպրանոցներում: Սակայն XIX դարից ի վեր հայտնաբերվող ասուրաբարելական և հափկապետ ուրարտական սեպագիր արձանագրությունների ուսումնասիրությամբ բացահայտվող փաստերի ոչ ճիշտ մեկնության հետևանքով պատմաբաններն աստիճանաբար հարցականի փակ դրեցին հին ժամանակաշրջանին վերաբերող մեր պատմիչների հաղորդած փյալները՝ դրանք համարելով մտացածին, ժողովրդական բանահյուսության պարադիկներ: Այդպիսով, հայոց պատմությունից դուրս նեփվեց մեր Հայկ, Արմենակ, Արամայիս, Ամասիա, Գեղամ, Հարմա, Արամ, Արա Գեղեցիկ, Արայան Արա, Անուշավան, Սկայորդի և Պարույր թագավորների ու առաջնորդների փիրակալության ժամանակաշրջանը: Այսինքն՝ Մերժվեց Ուրարտու պետության կործանումից (մ. թ. ա. 591թ.) առաջ Հայկական թագավորության գոյության գաղափարը (58):

Ինչև է հիմք ծառայել այդպիսի մոտեցման համար:

Նախ, սեպագիր աղբյուրները փաստում են, որ մ. թ. ա. IX-VII դարերում Հայկական լեռնաշխարհում գոյություն ուներ ոչ թե Հայկական, այլ Ուրարտական թագավորություն՝ Բիայնիլին, ինչպես ուրարտներն էին այն կոչում: Երկրորդ, ուրարտները հայկական ցեղեր չէին, և նրանց լեզուն հայերեն չէր: Երրորդ, սեպագիր արձանագրություններում **հայ** կամ **արմեն** էթնոսի մասին ոչ մի փեղեկություն չկա: Չորրորդ, այդ ժամանակահատվածի վերաբերյալ հայ պատմիչների հաղորդած և սեպագիր աղբյուրներում հիշատակված փաստերը միմյանց չեն համապատասխանում: Հինգերորդ, հայ պատմիչները Ուրարտուի (Բիայնիլի) և ուրարտացիների մասին ոչինչ չեն գրում և այլև:

Սեպագիր աղբյուրների ընձեռած պատմական փաստերի հավաստիությունն, ինչ խոսք, վիճելի չէ: Սակայն դրանց բացարձականացումը և մյուս, փյալ դեպքում հայկական, աղբյուրների մերժումը կարող են հանգեցնել հենց այդ փաստերի աղավաղումների: Բոլոր աղբյուրների փյալների համակողմանի և

համեմատական քննությամբ միայն կարելի կլինի խուսափել եզրահանգումների միակողմանիությունից:

Այս սկզբունքով էլ աշխարհել ենք բնեն Ա. թ. ա. VI դարից առաջ Հայկական լեռնաշխարհի բնակչության ու վարչաքաղաքական միավորներին վերաբերող գրավոր աղբյուրները՝ առանց գերազնահատելու մեկը ի հաշիվ մյուսի:

Թուրքիայի մայրաքաղաք Անկարայից բիչ արևմուտք գտնվող Բողազքոյ գյուղի մոտակայքում հայտնաբերված Խեթական թագավորության (մ. թ. ա. XVII-XIII դարեր) հնադարանի՝ մոտ երկու տասնյակ հազար սեպագիր կավե տախտակների բնագրերը մեծ մասամբ հրատարակվեցին:

Լույս են տեսել նաև մ. թ. ա. XIII-VII դարերի ասսորական սեպագիր աղբյուրների վերծանություններ և թարգմանություններ: Հրատարակվել են մ. թ. ա. IX-VII դարերի ուրարտական սեպագիր արձանագրությունների թարգմանությունները: Դրանց ընձեռած կյուրի վերաբերյալ կապարվեցին բազմակողմանի ուսումնասիրություններ: Լույս տեսան մի շարք խիստ արժեքավոր գիտական աշխատություններ:

Այդ բոլորը հիմք ստեղծեցին նաև հայ ժողովրդի հին պատմությունը ուսումնասիրելու համար, որն ընդգրկում է մ. թ. ա. VI դարից առաջ ընկած ժամանակաշրջանը և կապված է Հայկից մինչև Պարոյր հայոց թագավորների անվան հետ:

Քննադատները իրենց սլաքն ուղղում են Մովսես Խորենացու դեմ՝ մերժելով, ինչպես վերը նշվեց, հայոց հին պատմությունը, որը վերաբերում է մ. թ. ա. VI դարից առաջ ընկած ժամանակաշրջանին:

Մեր մատենագիրները Ուրարտուի մասին փաստերը չեն կեղծում: Նրանք այդ մասին գրում են, որ արևելյան Հայաստանի մայրաքաղաք Արմավիրում օտար բռնակալները գահընկեց են անում հայոց Անուշավան արքային և փրկում երկրին մինչև Ասորեստանի թագավոր Սենեքերիմի մահվան փարին, այսինքն՝ մ. թ. ա. 681թ.: Այդ ժամանակ հայերն ապստամբում են այդ օտարների փրակալության դեմ և ազատագրում երկրի մեծ մասը (74, Ա, էջ 25 և 68, էջ (19-20)):

Լեռնաշխարհի արևելյան շրջանները՝ Էփիունին գրավելու մասին վկայում են նաև ուրարտական սեպագիր աղբյուրները: Այսպես, մ. թ. ա. 782թ. առաջին անգամ Վանի թագավոր Արգիշտի I-ը նվաճում է այն՝ Արարատյան դաշտով հանդերձ, որպես ի թիվս այլ ամրոցների ավերում է նաև մի բերդ և տեղը կառուցում նորը՝ այն կոչելով իր անունով՝ Արգիշտիխինիլի:

Հնագիտական ուսումնասիրությունները պարզել են, որ դա Մովսես Խորենացու հիշատակած Արմավիր բերդաքաղաքն է, որի կողքի բնակավայրը առայսօր կոչվում է նույն անունով:

Այդ նույն տարում Ասորեստանում գահը փոխանցվում է Սալմանասար IV-ին (ըստ Մովսես Խորենացու Զամեսես), որին էլ Անուշավանը դիմում է օգնություն ստանալու հույսով:

Մ. թ. ա. 782-681թթ. Վանի թագավորության (Ուրարտու) հզորության ժա-

մանակաշրջանն է ևղել, որը համընկնում է օտար բռնակալների կողմից Այրարատի (Էփիունի) կործանման և մինչև մ. թ. ա. 681թ. Նայկական թագավորության իսպառ բացակայության ժամանակահատվածի հետ:

Փաստերի այս ակնառու համապատասխանությունը պարմաբանները գանց են առել: Ի դեպ, մեր պարմիչների այս կարգի հաղորդումներին առաջին անգամ անդրադարձել է Ն. Էմինը, որին ուրարապական սեպագիր աղբյուրները հայտնի չէին (44): Այդ պարճառով էլ ևս զուգահեռներ չի անցկացրել:

Ուրարապական սեպագիր աղբյուրներում հայ (կամ արմեն) անունը չի հիշարակվում: Շար հայագերների համար դա ծառայում է փաստարկ, ասելու որ այդ ժամանակ լեռնաշխարհում հայեր չեն ապրել: Ի դեպ, ևշվամ արճանագրություններում վկայված չէ ևս ուրարագիների ինքնանունը, այսինքն՝ թե նրանք իրենց ինչպես էին կոչում: Նրանց համար մեր օգտագորճած ուրարներ կամ ուրարագիներ անվանումը աստորական հորջորջում է:

Նայոց հին պարմության մերժման փաստարկներից մեկն էլ այն է, որ հայ թագավորների մասին սեպագիր աղբյուրներում տեղեկություններ չկան:

Մովսես Խորենացին դրա մասին գրում է. «Բայց թե ինչու այս բաները (հայ թագավորների գորճերի մասին - Վ. Խ.) թագավորների բուն մարյաններում կամ մեհենական պարմություններում չհիշարակվեց, թող այս մասին ոչ որ չարարակուսի, կասկաճի չգնա: Նախ՝ որ այս ժամանակը Նինոսի թագավորությունից առաջ էր, նրբ ոչ որ այսպիսի բաների հոգ չէր տանում, երկրորդ՝ որ նրանք հարկավոր և կարևոր չէին համարում օտար ազգերի, հեռավոր աշխարհների հին յուրերն ու նախնական գրույցները իրենց թագավորների կամ մեհյանների մարյաններում գրել, մանավանդ որ պարճանք և պարիվ չէր օտար ազգերի բաջության և արիական գորճերը հիշարակել: Բայց թեպետ և (սրանք) բուն մարյաններում չկան, սակայն, ինչպես Մար Աբաս Կարիևան պարմում է, փորբ և աննշան մարդկանց ճեռքով գուսանական (երգերից) ժողովված են արբունի դիվանում (71, 1, ժդ):

Ուրեմն սեպագիր աղբյուրներում որոնել հայոց արբաների մասին հանգամանալից տեղեկություններ ավելորդ է: Ի դեպ, ոչ խեթերն են գրում Ատրեսարանի տիրակալների մասին և ոչ էլ ասորեսարանցիները նրանց մասին: Ուտրի ուրարապական, ինչպես ևս աստորական տիրակալների սեպագրերում չէին կարող հանդիպել իրենց ժամանակակից հայ թագավորների մասին տեղեկություններ՝ բացառությամբ որոշ առիթների:

Մովսես Խորենացուն առարկում են ևս, որ ևս Վանի թագավորության հուշարճանները վերագրում է Ատրեսարանի թագուհի Շամիրամին (29, էջ 185, ճան. 196):

Ակնհայտ է, որ այդ մշակույթը կրում է Ատրեսարանի խիստ ազդեցությունը, իսկ սեպագրերը աստորական են: Բացի այդ, հնարավոր է, որ պարմասիայը տորբ է տվել այդ թագուհուն վերաբերող որոշ ավանդապարմների:

Ոմանք խիստ կասկաճի տակ են դնում Մովսես Խորենացու օգտագորճած

աղբյուրի: Մար Աբաս Կապիանան Հայոց պարմությունը դուրս է գրել «Սկիզբն մատենին» հունական գրավոր աղբյուրից: Բայց քանի որ ոչ մեկը, ոչ մյուսը չեն պահպանվել, ուրեմն նրա ներկայացրած պարմությունը, ըստ նրանց, հորինված է (29, էջ 185):

Արդյոք այդ քննադատներին հայտնի չէ, որ շար այլ հին հեղինակների աշխատություններ, որոնք ժամանակի ընթացքում կորել են, բայց դրանցից որոշ մասունքներ պահպանվել են ավելի ուշ պարմիչների գործերում, գիտության համար խիստ կարևորություն ունեն:

Այդ գրավոր աղբյուրի հավասարի լինելու մասին Մովսես Խորենացու «Հայոց պարմության» մեջ կարդում ենք. «Սա (Վաղարշակ) իր իշխանությունը լիովին կարգի բերելով և իր թագավորությունը հաստատելով՝ կամեցավ իմանալ, թե ովքեր արդյոք և ինչպիսի մարդիկ տիրելիս են են եղել Հայաստանի վրա իրենից առաջ...: Նա գրավ մի ուշիմ ասորի՝ Մար Աբաս կապիանա անունով, քաղղեական ու հունական գրության մեջ վարժ, և նրան ուղարկեց իր եղբոր՝ Արշակ Մեծի մոտ արժանավայել ընծաներով, (խնդրելով) բանալ նրա առաջ արքունական դիվանը...:

Նա (Մար Աբաս) աչքի անցկացնելով բոլոր մատյանները՝ գտնում է մի մատյան հունարեն գրված, որ ուներ, ասում է, այսպիսի վերնագիր «Սկիզբն մատենին»: Այս մատյանը Ալեքսանդրի հրամանով քաղղեներեն լեզվից թարգմանված է հունարենի և պարունակում է բուն հների և նախնիների պարմությունները...: Մար Աբաս Կապիանան այս մատյանից հանելով միայն մեր ազգի հավասարի պարմությունը հույն և ասորի գրերով՝ բերում է Մծբին Վաղարշակ թագավորին» (71, I, ը. թ.):

Մովսես Խորենացին նշում է, որ Մար Սբասը հայոց Վաղարշակ թագավորի պարվերով պարսից արքունական դիվանում գտնում է «Սկիզբն մատենին» անունով մի աշխատություն, որը ժամանակին Ալեքսանդր Մակեդոնացին Նինվեում թարգմանել էր փվել հունարեն՝ քաղղեական լեզվից, այսինքն՝ ասսուրական սեպագիր աղբյուրներից: Դրանք, ինչպես նախորդ հաղորդման մեջ գրված է, գրի էին առնվել «աննշան դպիրների» ձեռքով, քանի որ թագավորները թույլ չէին փախա իրենց հնադարաններում օտար երկրների առաջնորդների մասին փնդեկություններ պահպանել: Ուստի և այդ սեպագիր փախապակները ոչնչացել և չեն հասել մեզ:

Պարզ է, որ ինչպես նշված աշխարհակալը, այնպես էլ Վաղարշակ թագավորը, որոնք փնդական արքայական և իշխանական փնդի մասին հավասարի փվյալներ չունեին, ցանկացել են այդպիսիք ձեռք բերել, որպեսզի փնդերում դեկավարությունը հանձնվի նրանց սերունդներին և ոչ պարահական մարդկանց:

Այս գուր գործնական նպատակով ձեռք բերված փվյալները արքունական դիվանում պահպանվել են որպես փաստեր և գրիչների կողմից ընդօրինակման ենթակա չեն եղել: Դրա համար էլ, չբազմացվելով, որպես եզակի օրինակներ կարող էին և չպահպանվել:

Վերջին հարյուր փարվա ընթացքում հեփազոփողները հայոց թագավորներին Նայկից մինչև Պարույր, համարել են առասպելական անձնավորություններ, նրանց հեփ կապված պարմությունները՝ բանասիրություն: Այնինչ նրանք և իրենց գործունեությունը ներկայացված են խիստ ռեալիստական գծերով:

Մի շարք լեզվաբաններ հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը որոնում էին Եվրոպայի այս կամ այն փարածաշրջանում: Ինչպես գրվում են որոշ ուսումնասիրողներ, հայերը՝ որպես հնդեվրոպական ցեղեր, լեռնաշխարհ են եկել դրսից (29, էջ 203): Այնինչ XIX դարից ի վեր այլ հեփազոփողներ ավելի ու ավելի համոզիչ փաստարկներ են բերում հնդեվրոպական նախահայրենիքը Փոքր Ասիայում և Նայկական լեռնաշխարհում փեղադրելու օգտին (23):

Նայերի ներգաղթի փեսության առաջ քաշմամբ ձևավորվեց մի փեսակեփ, որի կիրառման հեփանքով Նայկական լեռնաշխարհի մ. թ. ա. XV-VII դարերի պարմությանը վերաբերող փվյալների ուսումնասիրության ասպարեզում առաջ եկան մի շարք կնճռոփ հարցեր: Դրանց պարասխանները այդ փեսության հեփնորդները առ այսօր չեն կարողանում փալ: Այսպես, նրանք մ. թ. ա. XV-XIII դարերի Նայասայի բնակչությունը անհիմն կերպով համարում են խուռիական, այն դեպքում, երբ խեթական սեւպազիր աղբյուրներում այդ երկիրը էթնիկապես հսփակ գանազանվում է խուռիական երկրներից:

Մ. թ. ա. XII դարի ասսուրական սեւպազիր արձանագրություններում հիշափակված լեռնաշխարհի արևմտյան հսփվածի Նաիրի երկրները նույնպես պարմաբանները դիփում են որպես խուռիներով բնակեցված փարածք: Մակայն այդ նույն գրավոր աղբյուրների փեղեկությունների համաձայն դրանք այդպիսիք չեն:

Այնուհեփան, Ուրուարի երկիրը, հիշափակված մ. թ. ա. XIII-X դարերի ասսուրական սեւպազիր աղբյուրներում, իր գավառներով հանդերձ մասնագեփները փեղադրում են լեռնաշխարհի ծայր հարավում Ատրեսփանի սահմաններին առընթեր, ժամանակակից Ջեզիրե և Ջախո բնակավայրերի և դրանց շրջակա փարածքներում:

Ուրարփու պեփությունը կազմավորվել է մոփ մ. թ. ա. 859 թվին Վանի նահանգում և ասփիճանաբար նվաճումներով իր կազմի մեջ ընդգրկել որոշ լեռնաշխարհ: Նրա անունը, ինչպես ընդունում են բոլոր ուսումնասիրողները, Ուրուարիի (հմմ. Ուրարի, Ուրարփու) հեփագայի ձևափոխությունն է: Մակայն նրանք ձգփում են նույնացնել Ուրուարիին և Ուրարփուն նաև փարածքային առումով: Այսպես, Ուրուարիի Ջինգուն գավառը, որը, ինչպես հիմնավորում է Ն. Մանանդյանը, ժամանակակից Ջենգան բնակավայրն է՝ իր շրջանով: Ի. Դյակոնովը այն նույնացնում է Վանա լճի հյուսիսային ափին մոփ գրկված Ջիուկունի բերդի և նրա շրջակա փարածքի հեփ, այն դեպքում, երբ վերջինս Ուրուարիից բաժանվում է նշված լճով, Այադու, Ուայայիս, Խուրուշկիա և Խաբիս երկրներով: Այս փեսակեփան, իհարկե, անընդունելի է:

Նայերի՝ այլ փարածաշրջանից լեռնաշխարհ թափանցելու մասին առաջ

քաշված ներգաղթի փեսությունը ներկայացվել է զանազան ձևերով ու մեկնաբանություններով: Դրանցից շարքերը, ժամանակին քննություն չբռնելով, մերվժել են: Նայ ժողովրդի ծագման ու կազմավորման հարցերին վերաբերող փեսակետներին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ L. Բարսեղյանի աշխատության մեջ (57ա):

Սակայն այժմ ընդունված է մի փաթեթակ, որին և կարևոր ենք համարում անդրադառնալ: Դա Ի. Դյակոնովի փեսակետն է, որի համաձայն հայերը թրակափոյուզիական ցեղերից մեկն են: Այդ ցեղերը մ. թ. ա. XIII դարի վերջերին մուտք են գործել Փոքր Ասիա, բնակություն հաստատել նրա կենտրոնական փարածաշրջանում, այնուհետև կործանել են Խեթական թագավորությունը: Դրանցից մուշկերը՝ իբրև «նախահայերենի կրողներ», մ. թ. ա. XII դարում թափանցել են Նայկական լեռնաշխարհ, հաստատվել նրա արևմտյան հարվածում, ապա Վանի թագավորության կործանումից հետո, իրենց մեջ ձուլելով փեղի խոռոխորարական և լուվիական ցեղերին, հնդեվրոպական լեզուն՝ նախահայերենը, պարտադրել են բնիկներին: Դրանով բոլորն էլ դարձել են հայեր (29, էջ 214-216):

Ի. Դյակոնովն ըստ էության զարգացնում է Պ. Ենսենի փեսությունը: Նա գրում է, թե շարք հավանական է, որ մուշկերը բնակություն են հաստատել Եփրատ գետի ոչ միայն աջ, այլ նաև ձախ ափին: Նկարի նույն Մալաթիան և Արածանիի ստորին ավազանը (29, էջ 181):

Սակայն մուշկերը թափանցել են Տիգրիսի արևմտյան ակունքի և Եփրատ գետի միջև գտնվող Նայկական Տավրոսի հարավային լանջերին ընկած Ալզի և Պուրուկուզի երկրները: Նրանց՝ նշված փարածքից դեպի հյուսիս հաստատվելու մասին այլ փաստ վկայված չէ:

Նեղինակը հայերի փոյուզիացի լինելու մասին վկայակոչում է հին հույն հեղինակներին (29, էջ 194 և ծան. 16): Ըստ Ներոդոտոսի «արմենները ևս լինելով փոյուզիական վերաբնակիչներ, զինված էին փոյուզների նման» (VII, N 73): Այս փնդեկությունը հանդիպում ենք նաև Եվդոքոսու Կնիդացու աշխատության մեջ, որտեղ հեղինակն ավելացնում է, թե հայերի լեզվում շարք բան կա փոյուզերենից:

Բնականաբար հնդեվրոպական երկու լեզուների՝ հայերենի, փոյուզերենի միջև կարող էին գոյություն ունենալ ընդհանրություններ, որոնք մ. թ. ա. V-III դարերում ավելի ցայտուն պետք է լինեին: Այդպիսի ակնառու նմանություններ կային հին հայերենի և հնդեվրոպական այլ լեզուների միջև, որոնք կարող էին շփոթեցնել հին պարսիկներին: Նրանք, լեզվաբանական գիտելիքների բացակայության պարճառով, չէին էլ կարող լեզուների ցեղակցությունը ճիշտ որոշել: Օրինակ, Սարաբոնը հայերին, ասորիներին, արամեացիներին և արաբներին ցեղակից է համարում վկայակոչելով նրանց միջև եղած լեզվական, մարդաբանական, կենցաղային ընդհանրությունները, որոնք անշուշտ կային (XIV, 4, 27):

Թրակափոյուզիական ցեղերը, որոնք մ. թ. ա. XIII դարի երկրորդ կեսին մուտք գործեցին Առաջավոր Ասիա, եգիպտական գաղափարագիր արձանագ-

րություններում կոչվում են «Ծովի ժողովուրդներ»: Նրանք Միջերկրականի հյուսիսային ափերի և կղզիների բնակիչների մի մասն էին, որոնք շարժվեցին դեպի արևելք, խոշոր թագավորությունները կործանելով, հարստություն ձեռք բերելու նպատակով: Նրանցից škrš կոչվածները Պիզիդիայի Սագալուսի բնակիչներից էին, šrdn` Լիդիայի Սարդից էին, trš` Էպրուսկների նախնի թիրսեսներն էին, škrš՝ Սիկուլները, djmj` դանապացիները, prst` պաղեստինցիները և այլն (29, էջ 103):

Այդ եգիպտական ցուցակում, որտեղ թվարկված են «Ծովի ժողովուրդների» անունները, արմեններ չկան հիշարակված:

Ի. Դյակոնովը գրում է, որ մուշկերի զբաղեցրած շրջանները համընկնում են հնուց հայերին վերագրվող փարաժքների հետ (29, էջ 215): Ինչպես վերը նշեցինք, մուշկերը հաստատվել էին Ալզի և Պուրուկուզգի երկրներում, որոնք ընկած էին Հայկական Տավրոս լեռների արևմտյան հարավաձի հարավային փեշերին, որտեղից նրանք փեղափոխվել են Կադմուսի գավառ ժամանակակից Տուռ-Աբդին լեռների հյուսիս-արևելյան լանջեր: Հայտնի է, որ վերոհիշյալ երեք երկրներն էլ այդ ժամանակ ոչ թե հայկական, այլ խուռիական են եղել: Այդ մուշկերի մասին երկրորդ և վերջին անգամ հիշարակում է Ասորեստանի թագավոր Աշշուրնաժիթապալ II-ը (մ. թ. ա. IX դարի II քառորդ) և, ինչպես ինքն է նշում, կոտորում է նրանցից շարերին, իսկ մնացածներին ներառում իր երկրի սահմանների մեջ:

Ի. Դյակոնովը գրում է, որ մուշկերի հետ միասին Տիգրիսի վերին ավազան ներթափանցած ուրումայացիները, որոնց զբաղեցրած փարաժքը կոչվում էր Ուրումու, թերևս Ուրմեն է (Արմեն), (29, էջ 227):

Ասորեստանի թագավոր Աշշուրնաժիթապալի փարեգրության մի հաղորդման համաձայն, երբ նա գտնվում էր Տուշխայում, հարկ է ստանում Բիթ-Ջամանիի, Շուպրիայի, Նիրդուսի առաջնորդներից և «ներսի» Ուրումու երկրից (28, N23):

Ինչպես հայտնի է, ասորեստանցիները ուրարտացիների հիշարակված Ուրմեն (Արմեն) երկիրը (ուշ Սասուն) կոչել են Շուպրիա: Իսկ փվյալ փեղեկությունից պարզ երևում է, որ Ասորեստանի թագավորը չի նույնացնում Շուպրիա (Ուրմեն) և Ուրումու երկրները:

Նեղինակի կարծիքով մուշկերը բնակություն են հաստատել Իսուվա, Ծուխմա, Պախուվա երկրներում, որոնց բնակչությունը, իբր, խուռիական էր, մասամբ էլ լուվիական (29, էջ 229):

Վերև արդեն նշվեց, որ ոչ մի փաստ գոյություն չունի, որը ինչ-որ չափով թույլ փա մտածելու, թե մուշկերը հաստատվել են Արածանի գեպի ստորին ավազանում: Նույնը կարելի է ասել այդ փարաժաշրջանում խուռիների առկայության մասին:

Ինչ վերաբերում է նշված փարաժքում լուվիացիների գոյությանը, որը հիմնավորելու համար հեղինակը վկայակոչում է խեթական թագավոր Արնուվանդաս III-ի դաշնագիրը (29, էջ 86, ծան. 30), ապա պետք է ասել, որ դա աղբյուրի ոչ ճիշտ ընկալման արդյունք է: Խաթիի փիրակալը ուղարկում է ավագներ,

որոնք՝ որպես վերակացուներ, պետք է մնային Իսուվա, Պախուվա, Շուխմա և Կումախա երկրներում: Բնական է, որ նրանց անունները, որոնք էլ մաքնացույց է անում Ի. Դյակոնովը, պետք է լինեին խեթալուվիական: Կարծում ենք, այդ ներկայացուցիչներն էլ գրել են փվել գաղափարագիր արձանագրություններ, որոնք գրվել են այդ տարածաշրջանում:

Այս բոլորից հետևում է, որ Արածանի գետի ստորին ավազանը և Եփրատի վերին հովիտը բնակեցված չեն եղել խուռիներով, լուվիացիներով, և այնպեղ մուշկեր չեն հաստատվել, որոնցից էլ առաջանար հայ ժողովուրդը:

Այնուհետև Ի. Դյակոնովը նախահայերի՝ մուշկերի բանակի մասին գրում է, որ փեղական բնակչությունը լեռնաշխարհում նրանցից գերազանցում էր ընդամենը չորս անգամ (29, էջ 230): Մուշկերը Կադմուխի երկրում Թիզլաթալալասար I-ի դեմ դուրս էին բերել 20 հազար, իսկ կասկերը կամ արեշլայցիները և ուրումայացիները՝ 4 հազար զինվոր: Ուրարտուն Սարգուրի II-ի ժամանակ ուներ 350 հազար ռազմիկ: Եթե նկատի ունենանք հեղինակի իսկ փաստարկը, որի համաձայն այն ժամանակ բնակչության յուրաքանչյուր չորրորդն էր վերցվում զինվոր, ապա եկվորները պետք է ունենային մոտ 100 հազար, իսկ Ուրարտուն՝ մոտ մեկ ու կես միլիոն բնակչություն: Ուրեմն քանակով փեղացիները փաստինք անգամ գերազանցում էին եկվորներին: Ուստի հասկանալի չէ, թե ինչ ձևով այսպիսի փոքրամասնություն կազմող եկվորները իրենց լեզուն պարտադրեցին փեղացիներին:

Ի. Դյակոնովի կարծիքով մուշկերի միջոցով հայերենի տարածմանը աջակցեցին ուրարտական թագավորները: Որպես օրինակ նա նշում է հետևյալ փաստը: Արգիշտի I-ը մ. թ. ա. 782թ. Խապե (ուշ Կիլիկիա) և Շուպանի (Շուփք) երկրներից բերում է ռազմագերիներ և բնակեցնում Արարատյան դաշտի Էրեբունի ամրոցի շրջակայքում (29, էջ 233): Այդ ռազմագերիները պաշտել են, ինչպես ուրարտական սեպագիր աղբյուրն է վկայում, Իվարշա աստվուն, որը լուվիական է: Այս փաստից, բնականաբար, կարելի է եզրակացնել, որ դրանք լուվիացիներ էին, մինչդեռ հեղինակը նրանց համարում է մուշկեր, այսինքն՝ փոյուզիացիներ՝ հայերեն լեզվի կրողներ:

Ի. Դյակոնովը, զարգացնելով այդ տեսակետը, գրում է, թե Եփրատի վերին ավազանի այդ խառը բնակչությունը, որն իբր բաղկացած էր լուվիացիներից, խուռիներից և մուշկերից, ընդհանուր անուն չունեք: Դրա համար հարևանները նրանց կոչում էին իրենց սահմանակից այդ անանուն երկրի որևէ գավառի անունով. արամեացիները՝ արմեն, Արմեի, հին վրացիները՝ սոմեխի, Սուխմուի (Շուխմա), իսկ ուրարտացիները՝ հայ, Խապե երկրների անուններով (29, էջ 234-236 և 30, էջ 149-178):

Սրացվում է, որ ուրարտացիները վարվել են հեղինակի նշած սկզբունքին հակառակ ձևով՝ այդ ցեղին կոչելով իրենց ոչ սահմանակից մեկ այլ երկրի անունով, որը գրվել է նշված տարածաշրջանի ճիշտ արևմտյան կողմում: Ընդ որում խապե բառը ուրարտերենի հնչյունական օրենքներով չէր դառնա հայ: Նա ինքն էլ է նշում, որ ուրարտերենում $t > j$ հնչյունական անցում դժվար է

պարկերացնել (29, էջ 236, ծան. 119):

Ի. Դյակոնովը եզրակացնում է, թե հայ ժողովրդի այդ շրջանի պատմությունը ոչ միայն նախահայերին է վերաբերում, այլ նաև լուվիացիներին, խուռիններին և ուրարտացիներին (29, էջ 242-243):

Այսպիսով, հեղինակը մի կողմ թողնելով վաղ միջնադարի հայ պատմիչների բոլոր հաղորդումները, որոնք վերաբերում են մ. թ. ա. VI դարից առաջ ընկած ժամանակաշրջանի հայոց պատմությանը, սեպագիր աղբյուրների փվյալների կամայական մեկնաբանությամբ ներկայացնում է անհիմն եզրահանգումներ:

Պատմական փաստերին կանխակալ մոտեցումը առաջացրել է մեկ այլ հակասություն ևս: Նայոց հին պատմությունն, ըստ էության, այդ պատմաբանները սկսում են Ուրարտուի կործանումից՝ մ. թ. ա. 591 () թվից անմիջապես հետո: Եթե անգամ մի կողմ թողնենք հայերի կազմավորմանը վերաբերող ակնհայտ աղավաղումներն ու կեղծումները, հայոց պեպականության սրեղծման հարցը նրանց ներկայացմամբ դարձյալ մնում է առեղծվածային: Ուրարտուի անկումից հետո Նայկական լեռնաշխարհում սրեղծվում է Երվանդունիների հայկական թագավորությունը: Ջարմանալի է, որ այս նոր «եկվոր» թագավորները, ի փարբերություն ուրարտականների, փեղի բնակչությանը իրենց ենթարկելու համար ոչ մի ճիգ չեն գործադրել: Ողջ լեռնաշխարհը կամովին հնազանդվել է այս նոր իշխանությանը: Մինչդեռ Ուրարտուի տիրակալները, որոնք, իբր, փեղացիներ էին, դրան հասնելու համար, փարեկան ևույնիսկ մի քանի անգամ արշավանքներ էին ձեռնարկում՝ ապստամբներին իրենց հնազանդեցնելու համար: Ինչը և Ուրարտական պեպության ուժերը ջլափեց ու բերեց նրա կործանման:

Այս բոլորը հաստատում են, որ մ. թ. ա. VI դարից առաջ եղած հայոց հին պատմությունը մատուցվում է խեղաթյուրված և անհիմն եզրակացությունների ձևով: Սույն աշխատության մեջ աշխատել ենք առաջին հերթին վերականգնել հայոց հին պատմության ժամանակագրությունը: Վերջին հարյուրամյակում փորձ չի արվել մատենագրությամբ ավանդված հայկական արքայացանկը հեքագրություն, հաղորդվող փվյալները այլ գրավոր աղբյուրների փեղեկությունների հետ համեմատելու և համապատասխան եզրահանգումներ անելու ուղղությամբ:

Նայոց արքաներին ոչ իրական՝ առասպելական հերոսներ համարելով՝ պատմաբանները չեն փորձել դա հիմնավորել գիտական քիչ թե շատ լուրջ փաստարկներով: Այդ փեսակեպը ներկայացրել են կանխակալ ձևով:

Նայկական թագավորության կազմավորման գործում Նայասային հարկացնելով ոչ էական փեղ՝ հեքագրությունները այն՝ իր փարածքով, էթնոսով, վարչաքաղաքական կառուցվածքով և պատմությամբ հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձրել:

Մենք մեկ այլ ուսումնասիրությամբ (39) աշխատել ենք պարզել Նայասայի փեղագրության հարցերը: Այս աշխատանքում բնականաբար ընդգրկել ենք դրա եզրահանգումները՝ ավելացնելով նորերը: Փորձում ենք նաև վեր հանել այդ թագավորության ռազմաքաղաքական պատմության մի շարք հարցեր՝

աշխատելով աղերսներ գրելով միջնադարի հայ պատմիչների ներկայացրած սկզբնական շրջանի հայոց պատմության հեփ:

Աշխատության մեջ հեփագործվում են Արնելսահայկական թագավորությանը վերաբերող գրավոր աղբյուրները, որոնց հիման վրա առաջին անգամ փորձ է արվում վերականգնել այդ պեփական կազմավորման պատմությունը: Ներկայացվում է այդ թագավորության սփեղծման, վերելքի, հզորության, անկման և կործանման ընթացքը:

Լեռնաշխարհում Ղայկական պեփականության կորուստը այդ ժամանակ փնել է 102 փարի: Ուրարտական սեպագիր աղբյուրների փվյալների համադրմամբ բացահայտվել է, որ դա համընկնում է Վանի թագավորության հզորության ժամանակաշրջանի:

Ուրարտագիփությունը, որն անմիջապես առնչվում է հայոց հին պատմության հեփ, լուրջ հաջողությունների է հասել փեքսփերի վերծանման, փեղագրության, քաղաքական և փնրեսական պատմության ու կրոնի ուսումնասիրության բնագավառներում: Սակայն որոշ խնդիրներ դեռևս մնում են չուծված: Ինչպես օրինակ, այդ թագավորության սփեղծման, կործանման հանգամանքներն ու ժամանակագրության հարցերը: Մեր ուսումնասիրությամբ ձգփել ենք գրնել դրանց պատասխանները, որոնք սերփ կապ ունեն այդ ժամանակաշրջանի հայոց պատմության հեփ:

Փասփերի ուսումնասիրությամբ աշխատել ենք պարգել նաև Ուրարտոի կործանման և հայոց պեփականության վերականգնման պատմությունը: Աշխատության մեջ օգփագործված որոշ բառաձևերի ու շումերագիր ցուցիչների վերաբերցյալ հարկ ենք համարում փալ որոշ բացափրություններ:

Խեթերը իրենց երկիրն ու պեփությունը հիշատակում են Խափի անուևով, որը մենք օգփագործում ենք նաև Խեթական թագավորություն ձևով: Եփրոպական գիփնականները Խափի երկրի ազգաբնակչությանը կոչում են հիթիթներ, իսկ ռուս մասնագեփները՝ խեփեր (хеты), որից էլ՝ հայերեն խեթ (խեթեր): Դրանք պայմանական անվանումներ են, որպեսգի խեթերին հնարավոր լինի զանազանել խաթերից՝ նույն փարածքի վրա նախկինում ապրած բնակչությունից, որի անուևը անցել է խեթերին:

Անիրաժեշտ է նշել նաև այն մասին, որ խեթական սեպագիր աղբյուրներում երկիրը, նահանգը և զավառը առանձին ցուցիչներով իրարից չեն զանազանվում: Այդ բոլորի համար օգփագործվում է շումերական KUR «երկիր» զաղափարագիրը: Դա հաճախ իրեն արդարացնում է այն փեսակեփից, որ զավառները շափ դեպքերում հանդես են զալնիս որպես ինքնուրույն վարչաքաղաքական միավորներ՝ առանց մփնելու որևէ այլ մեծ երկրի կազմի մեջ: Սակայն նկատվում է նաև հակառակ մի երևույթ:

Այսպես, Խափիի պեփական սահմանների մեջ գրնելող զավառներն ու նահանգները նույնպես սեպագիր աղբյուրներում հաճախ հիշատակված են շումերական KUR «երկիր» ցուցիչով: Դրա համար էլ դրանցում հանդիպում է «Խա-

փի երկրներ» արտահայտությունը:

Նույնը վերաբերում է LUCAL «Թագավոր» շումերական գաղափարագրին, որը որպես ցուցիչ դրվում է և մեծ երկրների, և նահանգների, և գավառների առաջնորդների անուններից առաջ: Խեթերը գրության հապուկ նշանով չեն գանազանել թագավորին արքայից կամ նահանգապետից ու իշխանից: Միայն որոշ դեպքերում մայրաքաղաքի փիրակալին կոչում են «Մեծ թագավոր» արտահայտությամբ: Նույն երևույթը նկատվում է նաև ասսուրական սեպագիր աղբյուրներում:

Շումերերեն URU «բաղաք, բնակավայր» գաղափարագիրը խեթական սեպագիր տեքստերում սովորաբար որպես որոշիչ դրվում է բնակավայրերի անուններից առաջ: Սակայն այն օգտագործվում է, ի տարբերություն ասսուրական արձանագրությունների, նաև էթնիկական միավորները իրարից զանազանելու համար: Օրինակ, Խապի, Խուռի, Կասկա, Արծավա, Նայասա երկրների անունները հաճախ հանդիպում են այդ ցուցիչով, որը վկայում է դրանց իրարից տարբեր ազգաբնակչություն ունենալու մասին:

Այդ նույն որոշիչով խեթերը տեքստերում աշխարհել են զանազանել իրարից նաև միևնույն ազգաբնակչություն ունեցող երկրի ցեղերի գավառները: Օրինակ, Իսուվա երկրիը (Շուփք), հաճախ գրված է այդ ցուցիչով, այն դեպքում, երբ համանուն բաղաք գոյություն չի ունեցել:

Խեթական սեպագրության մեջ օգտագործված են միայն S պարունակող վանկանշանները: Մասնագետները գտնում են, որ այն պետք է կարդալ s: Սեպագրերում չեն գանազանվում h և խ հնչյունները, որոնք արտահայտված են միևնույն ձևով՝ h պարունակող վանկանշաններով: Ուսումնասիրողները պայմանականորեն այն ընթերցում են խ:

Սեպագիր աղբյուրներում միևնույն բառերը հանդիպում են նաև կրկնակ բաղաձայններով: Սակայն դա օրինաչափ երևույթ չէ, և ուսումնասիրողները տառադարձում են մեկ բաղաձայնով:

Խեթերը գրության մեջ չեն տարբերակել նաև z և s հնչյունները, դրանք բոլորը արտահայտված են z պարունակող վանկանշաններով:

Նամենապության համար օգտագործված բոլոր հայկական պարունական տեղանունները մենք վերցրել ենք Ղ. Ալիշանի (48-50), Ապրպետի (57), Թ. Նակոբյանի (62), Ն. Նյուբմանի (66), Ս. Օրբելյանի (78), հայոց լեզվի արմատները՝ Ն. Աճառյանի (53) և Գ. Զահուկյանի (75) աշխատություններից, որոնք նշված են գրականության ցանկում:

Խեթական սեպագիր աղբյուրների հղումները տրված են կրճատ ձևով, օրինակ, 13, III, I, 1-10, որը պետք է ընկալել հետևյալ կերպ՝ գրականության ցուցակի համար (13), հատոր (III), տեքստ (72), սյունակ (II) և տողեր (1-10):

Աշխատության մեջ օգտագործվում են մեր և այլոց կողմից նախապես վերծանված ու թարգմանված խեթական սեպագիր տեքստեր:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**1. Մովսես Խորենացու հայոց հին պատմության
ժամանակագրական հենքը**

Ժամանակագրությունն այն արագձև է, որով հյուսվում են պատմական իրադարձություններն ու դեպքերը: Դրանով են հանգուցվում քաղաքական անցքերը: Ժամանակագրությունն չունեցող պատմական անձերն ու երևույթները դատապարտված են մոռացության: Այս կամ այն ժողովրդի պատմությունը, որը ներկայացվում է դեմքերի ու դեպքերի հաջորդականությամբ՝ իրենց ժամանակի մեջ, ընկալվում է որպես ճշգրիտ: Սակայն խնդիրը բարդանում է, երբ փվյալ ժամանակահատվածի պատմության վերաբերյալ գրավոր վկայությունները սակավաթիվ են կամ իսպառ բացակայում են: Այդ դեպքում գիտնականները դիմում են թե՛ այդ ժողովրդի և թե՛ հարևանների մասին եղած գրավոր կամ բանավոր կյոթի համեմատական քննությանը: Վերականգնումները, ինչ խոսք, բացառիկ ճշգրտություն կարող են չունենալ, բայց դրանց հավաստիության մեծ չափի դեպքում կարելի է ներկայացնել այս կամ այն ժողովրդի ևույնքան ճշմարտացի պատմությունը:

Սովորաբար պատմական իրադարձությունները ժամանակահատվածների մեջ ճշգրիտ գեղեղելու և դրանց իրական փարեթվերը գրնելու համար Տին Արևելքի ուսումնասիրության բնագավառում և ընդհանրապես մասնագետները հենվում են ամեն մի թագավորի իշխած փարիների քանակի և դրա թվագրման վրա:

Վաղ միջնադարի հայ պատմիչ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ մ. թ. ա. VI դարից առաջ իշխած թագավորների համար որպես ժամանակակիցներ թվարկում է քաղղեական (ասսուրաբաբելական) և հրեական արքաների անունները: Դրանք կան թե՛ IV դարի հույն փարեգիր Եվսեբոս Կեսարացու «Քրոնիկոնում», որը ժամանակին թարգմանվել է հայերեն և դրանով իսկ պահպանվել (59, էջ 46-48) և թե՛ XII դարի հայ պատմիչ Սամվել Անեցու աշխատության մեջ (77, էջ 28-29):

Այդ հեղինակները նշում են յուրաքանչյուր փիրակալի իշխանության փարիների քանակը:

XVIII դարի անվանի պատմաբան Մ. Չամչյանը ներկայացնում է այդ գահակալների և նրանց իշխանության փարիների վերաբերյալ ավելի ճշգրտված փվյալներ (73, հ. III, ժամանակագրություն, էջ 22-32):

Խորհրդային գիտնական Ի. Դյակոնովը գրնում էր, որ Մովսես Խորենացու առաջարկած արքայացանկը վերցված է Եվսեբոս Կեսարացու աշխատությունից (29, էջ 185-186 և ծան. 296): Այդ ցուցակը ևս հավաստի չի համարում հիմ-

նականում այն պարճառաբանությամբ, որ թվարկված անունների մեծ մասը աստորական սեպագիր արձանագրություններում չի հանդիպում:

Սակայն վաղուց բացահայտված է, որ Տիև Արևելքի փիրակալներից շարքերը այլ երկրներում կոչվել են ուրիշ անուններով: Նույն հույները, ինչպես հայտնի է, շապ հաճախ օգտար անձնանունները թարգմանում էին կամ հարմարեցնում իրենց լեզվի բառակազմական կաղապարներին, երբեմն էլ դրանց փոխարեն յուրովի կոչումներ ստեղծում:

Գերմանացի գիտնական է. Բիկերմանն, օրինակ, պարզել է, որ Ատրեսպանի թագավոր Թիզլաթպալասար III-ին Բարբելոնում անվանել են Պուլո, իսկ Սալմանասար III-ին՝ Ուլուլայ (22, էջ 188-189): Աշտորբանապարի հին հույն պարմիչներիև, ինչպես նաև Մովսես Խորենացուն հայտնի էր որպես Թոնոս Կոնկոդոնոս կամ Սարդանապալ, իսկ Միդիայի փիրակալ Կիակասը՝ Վարբակես անունով (71, I, Ժթ, իա) և այլն: Սինախներիբին սպանող կրա որդիները, որոնք ըստ աստորական սեպագիր աղբյուրների Արադ-Նիկիլև ու Նարուշարուստուն են, «Ասովաճաշեզում» վկայված են Ադրամեյեթ և Սարասար, իսկ «Սասունցի Դավիթ» էպոսում Սանասար ու Բադդասար անուններով (46, էջ 130):

Նգրևարբար հին հույն պարմիչների աշխատություններում բերվող Միջագեբրի թագավորների անունների ցանկը, որն օգտագործել է հայ պարմիչը, մեծ մասամբ դրանց կոչելու հունարեն ձևեր են: Այնուամենայնիվ այդ արքայացանկում կան նաև աստորական սեպագիր աղբյուրներում վկայված փիրակալների անուններ: Դրանք են՝ Շամմուրամթա (Շամիրամ), Թիզլաթպալասար (Թակղաթաղասար), Սալմանասար (Սաղմանասար), Սինախներիբ (Սենկերիմ) և Բարբելոնի թագավոր Կանդալանոն (Քինալադանոն):


Այս և հաջորդ բոլոր տվյալները, որոնք վերաբերում են Ատրեսպանի թագավորներին և վերցված են հին հույն պարմիչների աշխատություններից, մենք բաղել ենք Մ. Չամչյանի ներկայացրած արքայացանկից, որը եղածների մեջ ամենակատարյալն է (73, հ. III, ժամանակագրություն, էջ 22-32):

Այդպեղ Կանդալանոնի անվան առկայությունը ցույց է տալիս, որ ցուցակում հիշատակված են ոչ միայն Ատրեսպանի, այլ նաև Բարբելոնի թագավորները: Սակայն ցանկը սկսվում է աստորական փիրակալների անունների թվարկումով:

Փաստերի բացակայության պարճառով չենք կարող անդրադառնալ Քամի և Քուշի պարմակալության հետ կապված հարցերին: Ինչպես ներկայացնում է Մ. Չամչյանը, Քուշին հաջորդել է Ներբովթը կամ Բելը, որը 75 տարի «ապրելուց» հետո իշխել է 126 տարի: Այս հերթակալությամբ փոխել են Բարբ 88, Աներիսը 63, Արբել I-ը 40, Քայադը 55, Արբել II-ը 38 և Նինոսը 52 տարի մինչև Շամիրամը:

Այդ ամբողջ ժամանակաշրջանը տևել է 537 տարի, որի ընթացքում գահակալել են, ինչպես տեսնում ենք, յոթ արքաներ, ընդ որում ոմանց իշխանության տարիներն ավելի շատ են, քան իրականում հնարավոր է:

Այս առեղծվածը պարզելու համար դիմենք Մովսես Խորենացու հաղորդում-



A 85109

ներից մեկին. «Սրանց (արքաների) մասին վկայում է Կեփաղիոնը, բանի որ մի գլխում այսպես է, ասում,- սկզբում մեր աշխարհության մեջ սկսեցինք գրել արքունի դիվանի ազգաբանությունը ամենայն մանրամասնությամբ. հրաման ստացանք թողնել թագավորներից աննշան և հնուց վաթահամբավ մարդկանց և գրել միայն բաշ և իմաստուն ևսխնի աշխարհակալների մասին» (71, I, Կ):

Պարզվում է, որ հին հույն պատմիչ Կեփաղիոնը որոշ թագավորների անուններ ցանկից դուրս է հանել: Բնականաբար կրճապված փրակալների իշխանության փարիները ևս պետք է վերագրեր նշանավորներին: Ուստի ստացվել է, որ Բելը, օրինակ, իշխել է 126 փարի:

Վ. Ավդիևը գտնում է, որ Աշտուրուբայիթ I-ի օրոք (մ. թ. ա. 1365-1330թթ.) Ասորեստանը որպես պետություն, դեռևս նոր էր ձևավորվում, իսկ Ադադներարի I-ի իշխանության փարիներին (մ. թ. ա. 1307-1275թթ.) այն սկսում է հզորանալ (18, I, 2 358-360):

Կարծում ենք, Արիկդենիլիի ժամանակ (մ. թ. ա. 1319-1308թթ.) այդ թագավորությունը արդեն կազմավորվել էր: Այդ դեպքում, եթե Ասորեստանի թագավորության սկիզբը պայմանականորեն համարենք նշված փրակալի առաջին փարին՝ մ. թ. ա. 1319թ., ապա մինչև Շամիրամի գահակալելը՝ մ. թ. ա. 810թ., փրկել է 509 փարի: Իսկ Մ. Չամչյանին հասած փեղեկությունների համաձայն Թուշից հեկո մինչև Շամիրամի գահակալելը անցել է 537 փարի:

Թագավորների իշխանության փարիները հաշվելիս պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք: Ամեն մի փրակալ սովորաբար սկսել է իշխել կամ գահընկեց եղել փարվա որևէ ամսում: Ժամանակագիրները այդ փարին բնականաբար մոռնում էին թե՛ նախորդի և թե՛ հաջորդի գահակալության փեղեկության մեջ: Այդ դեպքում յուրաքանչյուրի համար մեկ փարի ավել էր ստացվում: Մ. թ. ա. 1319-811թթ. Ասորեստանում փրկել են 29 արքաներ: Նիս ժամանակագիրները դրանցից ամեն մեկի համար մեկ փարի ավել են հաշվել և, ցուցակից կրճատելով աննշան արքաների անունները, նրանց փարիները վերագրել են աշխարհակալներին, որոնց իշխանության ընդհանուր փեղեկությունը դարձել է 537 փարի (այսինքն՝ 509+29=538):

Ուստի եթե այն պակասեցնենք 29 միավորով և մնացորդը՝ 508-ը, ավելացնենք 810թ. վրա, կստացվի 1318թ., որն ընդամենը մեկ փարվա փարբերությամբ համընկնում է Արիկդենիլիի գահը ժառանգելու փարեթվին՝ մ. թ. ա. 1319թ., հետ: Դա էլ հին հույն պատմիչները համարել են Ասորեստանի թագավորության կազմավորման սկիզբը:

Թուշից անմիջապես հեկո 75 փարի վերագրվել է Բելին: Ներկաբար մ. թ. ա. 1319-1245թթ. հաջորդաբար իշխած Ասորեստանի թագավորներ Արիկդենիլիի, Ադադներարի I-ի և Սալմանասար I-ի անունները հանվել են ցուցակից, և նրանց փարիները վերագրվել են Բելին:

Մ. Չամչյանի ներկայացրած ժամանակագրական փոյալների համաձայն ևս սկսել է իշխել այդ 75 փարիներից հեկո, որը փրկել է 126 փարի: Ուրեմն Բե-

լը դարձել է թագավոր մ. թ. ա. 1244թ.: Ճիշտ այդ ժամանակ Ասորեստանում Թուրքոյթի-Նիևուրթա I-ն է սկսել տիրել: Ուրեմն Բել անունը, որը ասսուրերեն բառ է և նշանակում է «պեր», փոխարինում է նրան: Մովսես Խորենացու վկայությամբ Բելի անունը Ներքովթ է (Նարբութ):

Թուրքոյթու բառը ասսուրերեն նշանակում է «հզոր, հզորություն»: Նիևուրթան, որն աստիճան անուն է, կարող էր հեթանոսական հնչել Ներքովթ: Տեղնաբար Բելը Ներքովթը, ևույնանում է Թուրքոյթի-Նիևուրթա I-ի հետ ոչ միայն գահ բարձրանալու թվականով, այլ նաև անունով: Վերջինս տիրել է 37 տարի՝ մ. թ. ա. 1244-1208թթ. , իսկ Ներքովթին վերագրվում է 126 տարի:

Ենթադրվում է, որ մ. թ. ա. 1208թ. հեղու մինչև մ. թ. ա. 1115թ. Ասորեստանում հաջորդաբար իշխած ութ թագավորների անունները հին ժամանակագիրները հանել են ցուցակից և նրանց տարիները վերագրել Թուրքոյթի-Նիևուրթային: Արդյունքում ստացված 129 տարին (մ. թ. ա. 1244-1116թթ.) երևի միավորով քարբերվում է Ներքովթին վերագրված իշխանության տևողությունից՝ 126-ից:

Ի դեպ, Ներքովթի (Բել) առիթով մեկ տարի ավել հաշվելու սովորությունը, ինչպես տեսնում ենք, ժամանակագիրները չեն կիրառել:

Ըստ հին արքայացանկի հերթականության հաջորդ թագավոր Բաբր, որին վերագրված է իշխանության 88 տարի, ևույնանում է Թիգլաթպալասար I-ի հետ, որն ըստ Է. Բիկերմանի ցանկի մյուս տիրակալն է, որը ևույնպես նշանավոր է:

Նա իշխել է մ. թ. ա. 1115-1077թթ. , որից հետո հերթականությամբ գահակալել են հինգ տիրակալներ՝ մինչև մ. թ. ա. 1032: Նրանց բոլորի իշխանությունը տևել է 83 տարի: Եթե Բաբրին վերագրված 88 միավորը պակասեցնենք վեցով, քանի որ այդ արքաների թիվը ևույնքան է, կստացվի 82, որը մեկ տարվա տարբերությամբ համընկնում է Է. Բիկերմանի նոր ցանկի արվայելերին:

Տեղնաբար հին և նոր արքայացանկերի հերթականությանը՝ Աներիսը, որն իշխել է 63 տարի, Սալմասասար II-ն է (մ. թ. ա. 1031-1020թթ): Նրանից հետո տիրած երկու թագավորների իշխանության 47 տարիները ավելացնելով առաջինի վրա՝ կստացվի 59: Իսկ 63-ը պակասեցնելով երեք միավորով՝ մեկ տարվա տարբերությամբ կհամընկնի առաջինի (59) հետ: Տեղնաբար հին ժամանակագիրները երեք արքաների անունները հանել են ցուցակից և նրանց տարիները վերագրել Սալմասասարին՝ վերջինիս անունը հիշատակելով Աներիս ձևով:

Հաջորդ տիրակալը Աբբել I-ն է, որն իբր իշխել է 40 տարի: Նոր ցուցակի հերթականության համաձայն նա Աշշուրբեշի II-ն է, որը գահակալել է հինգ, իսկ նրան հաջորդող Սալմասասար II-ը՝ 33 տարի: Աբբելին վերագրվող 40 տարին նվազեցնելով երկու միավորով՝ կստացվի 38: Ուրեմն երկրորդ թագավորի անունը հանվել է ցանկից, և նրա տարիները վերագրվել են առաջինին:

Մյուս արքան Բայադն է, որը տիրել է իբր 55 տարի: Նա նոր է. Բիկերմանի ցուցակում Աշշուր-դան II-ն է, որը գահակալել է 23, իսկ նրանից հետո՝ Ադադ-ուն-բարի III-ը՝ 21 և ապա Թուրքոյթի-Նիևուրթա II-ը՝ յոթ տարի: Երեքի իշխանությունը միասին վերցված տևել է 51 տարի: Եթե Բայադին վերագրված 55 միավորը

պակասեցնելը երևոյ՞, կտարացվի 52, որը մեկ միավորով կտարբերվի նոր ցուցակի քվայից: Տեքնապար ցանկից հանվել են վերջին երկու արքաների անունները և նրանց տարիները վերագրվել Աշշուր-Դանին, որին կոչել են նաև Քայալ:

Այնուհետև, Արբլ II-ը գահակալել է իբր 38 տարի: Ըստ նոր ցուցակի հերթականության ևս Աշշուրնամծիրապալ II-ն է, որն իշխել է 25 տարի: Առայժմ մեզ չի հաջողվել պարզել յրանց փոխակալության ժամանակահատվածների բանակային տարբերությունը:

Նրանից հետո Նինուը փիրել է 52 տարի: Ըստ հերթականության ևս Սալմանասար III-ն է (մ. թ. ա. 858-824թթ.), որին հաջորդել է Շամշի-Ադադ V-ը, որը գահակալել է 13 տարի: Երկուսի իշխանությունը միասին տևել է 48 տարի: Եթե Նինուսի 52 տարին պակասեցնելը երկու միավորով, քանի որ հին ժամանակագիրները մեծ մասամբ ամեն մի արքայի համար մեկ տարի ավել են հաշվել, ապա կտարացվի 50, որը նույնքան տարբերությամբ համընկնում է նոր ցուցակի քվայներին: Ուրեմն հին ցանկից հանվել է երկրորդի անունը և նրա տարիները վերագրվել են առաջինին:

Այս կրճատման պատճառով սրացվում է, որ Ասորեստանի թագուհի Շամնուրամարը Նինուսի՝ Սալմանասար III-ի կինն է եղել, այնինչ ևս Շամշի-Ադադ V-ի այրին էր:

Մ. Չամչյանի բերած ժամանակագրական քվայներով Շամիրամը իբր իշխել է 42 տարի: Այնինչև, աստուրական սեպագիր աղբյուրների փնդեկություններով ևս ամուսնու մահից հետո գահակալել է հիւզ տարի (մ. թ. ա. 810-806թթ.)՝ իր դեռահաս որդի Ադադներարի III-ի փոխարեն: Տին հույն ժամանակագիրը վերջինիս 28 և նրան հաջորդած Սալմանասար IV-ի 10 իշխանության տարիները գումարելով իրար և ամեն մեկի համար վերը նշված պատճառներով մեկական միավոր ավել հաշվելով՝ դրանք վերագրել է Շամիրամին: Այդ դեպքում հին և նոր ցուցակների քվայները իրարից երկու տարով են տարբերվում: Կարծում ենք, այս խախտումը կատարվել է այն պատճառով, որ Շամիրամը մեծ համբավ է ունեցել, նրա մասին նույնիսկ բազմաթիվ առասպելներ են ստեղծվել: Ուստի նրա իշխանության, այն էլ իր որդու փոխարեն, հինգ տարին ժամանակագիրը շարքից է համարել:

Բացառության կարգով կատարած այդ շեղումից հետո հին ժամանակագիրը նորից շարունակել է հավատարիմ մնալ իր ընդունած սկզբունքներին: Նա Ադադներարի III-ի անունը, որպես Նինուս, թողել է ցուցակում իսկ հաջորդ արքա Սալմանասար IV-ին հանել ցանկից, որի 10-ը տարիները վերագրել է առաջինին: Սրացվել է, որ Նինուսան իշխել է 38 տարի:

Տին ցուցակի համաձայն Ասորեստանի հաջորդ արքան Ադիոս է, որն իշխել է 30 տարի: Նա նոր ցուցակում վկայված է Աշշուր-դան III-ն է, որը փիրել է 18, իսկ նրանից հետո Աշշուր-ներարի V-ը՝ 10 տարի: Տին ժամանակագիրը վերջինիս անունը հանել է ցանկից, նրա տարիները վերագրել առաջինին երկուսի համար էլ մեկական տարի ավել հաշվելով:

Առիոսից հետո հին ցուցակում թվարկված են Բաբելոնի 31 արքաների անուններ: Քանի որ Է. Բիկերմանի սոր ցանկում (22, էջ 184-185) նրանց մասին ժամանակագրական լիարժեք տեղեկություններ չկան, դա դժվարացնում է համապատասխան տվյալների համեմատությունը:

Դրանցից հետո Մ. Չամչյանի արքայացանկում հիշատակված է Ասորեստանի թագավոր Թակդարթալասարի անունը, որին վերագրվում է իշխանության 19 տարի: Նա սոր ցուցակի Թիզարթալասար III-ն է՝ 18 տարի գահակալությամբ:

Նրան հաջորդում է Սաղմանասարը, որն իշխել է 15 տարի: Նոր ցուցակով դա Սալմանասար V-ն է, որը թագավորել է հինգ տարի: Կարծում ենք, հին ցուցակում ժն (15) թիվը գրիչի կողմից թույլ տրված վրիպում է. ժ-ն ավելորդ է:

Մ. Չամչյանի մոտ Սարգոն II-ը չի հիշատակվում: Այդ թագավորի անունը դուրս են թողել՝ առանց նրա իշխանության տարիները որևէ մեկի վերագրելու, գուցե այն պատճառով, որ ասսորական այդ արքան հայտնի էր անկրկնելի դաժանությամբ՝ ցուցաբերած մ. թ. ա. 714թ. Վանի թագավորության դեմ մղած պատերազմում: Իսկ Կեփաղիոնի ընդունած սկզբունքի համաձայն արքայացանկի մեջ տեղ չունեին ոչ միայն աննշան, այլ նաև վաղախամբավ արքաները:

Չին ցանկի հաջորդ արքան Սենեթերիմն է (չորս տարի): Ինչպես հայտնի է, նա ասսորական աղբյուրներում հիշված Սինախներիբն է՝ 24 տարի գահակալությամբ: Նավասարար հին ցուցակում տվյալ դեպքում նույնպես գրիչները թույլ են տվել վրիպակ՝ իդ (24) թիվը գրելիս բաց է թողնվել ի-ն (20), և մնացել է դ:

Երկու ցուցակների հերթականության համաձայն Ասորդանը, որն իշխել է 14 տարի, Ասարխադդոնն է (12 տարի): Նրանից հետո Սարդանապալը թագավորել է 40 տարի, որը սեպագիր աղբյուրների Աշշուրբանապալն է՝ իշխանության 41 տարով: Սակայն այս դեպքում առաջին անգամ ցուցակում խախտվել է հերթականությունը և Սարդանապալի անունը հիշատակված է Թակդարթալասարից առաջ:

Չին արքայացանկի տվյալներով Ասորեստանի վերջին տիրակալը Սամսոդ-խինն է եղել, որն իշխել է 20 տարի: Դա ընդգրկում է մ. թ. ա. 626-606թթ. միջև ընկած ժամանակաշրջանը, երբ այդ երկրում հերթականությամբ գահակալել են չորս արքաներ: Դրանցից երեքի անունները ցուցակից հանվել են և տարիները վերագրվել մեկին:

Այսպիսով, հին հունական արքայացանկում հիշատակված Ասորեստանի թագավորների իշխանության տևողության մասին տվյալները, որոնք վերցրել ենք XVIII դարի նշանավոր պատմաբան Մ. Չամչյանի աշխատությունից, համընկնում են Է. Բիկերմանի սոր ցուցակի այդ կարգի փաստերին ամբողջությամբ, կամ էլ շեղվում են մեկ-երկու տարով:

Դրանց համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ երկու՝ հին և նոր, արքայացանկերը լուրջ զիջական արժեք ունեն, հաստատում ու ճշգրտում են միմյանց: Դա էլ իր հերթին հաստատում է Արվեստ Խորենացու հայոց հին պատմության ժամանակագրական հենքը:

2. Հայկյան ժամանակաշրջան

Հայագիտության մեջ իշխում է այն կարծիքը, ըստ որի Հայկ կահապետը հայերի առասպելական կախնին է (63, էջ 227. 257):

Ի. Դյակոնովը գտնում է, որ Հայկի և նրա հաջորդների մասին եղած տեղեկությունները հին հույն պատմիչներն են հնարել (29, էջ 185 և ծան. 296): Սակայն անտիկ հեղինակների աշխատություններում այդ անձնավորությունների մասին որևէ վկայություն չկա: Մովսես Խորենացու և վաղ միջնադարի մյուս հայ պատմիչների աշխատություններում Հայկի և Բելի պատերազմը ներկայացված է որոշ գեղարվեստական երանգներով, բայց դրանցում անիրական ոչինչ չկա: Պատմահայրը հստակ զանազանել է առասպելը իրականությունից: Նա գրում է, «թե սիրում են առասպել, դա այն է, որ Շամիրամը քար դարձավ» (71, I, ժր): Բարեխիղճ հեքիաստները կույնիսկ հրաշապատումներից աշխատում են կորզել այս կամ այն ժողովրդին վերաբերող պատմական փաստեր:

Հայկ կահապետը Բելի Ներքովթի ախոյանն է եղել: Վերջինս, ինչպես վերը տեսանք, Ատրեստանի թագավոր Թուրուլթի-Նինուրթա I-ն է, որը գրավելով Բարելոնը բուսկանաբար, փրակալ է կոչվել կան նրա համար: Ուստի գարմանալի չէ, որ հայ պատմիչները Բելին համարում են մերթ Բարելոնի, մերթ էլ Ատրեստանի թագավոր:

Ըստ աստորական սեպագիր աղբյուրների Ատրեստանի փրակալներից առաջին անգամ Թուրուլթի-Նինուրթան է: մուրք գործել լեռնաշխարհի խորքերը՝ հասնելով Արածանիի ավազան: Դրա մասին նշված է նրա տարեգրության մեջ:

Հայ պատմիչների հաղորդումների համաձայն Բելը առաջին թագավորն էր, որ գործով թափանցեց Հայկական լեռնաշխարհի խորքերը: Նրանից առաջ, փաստորեն, Միջագետքի երկրների ոչ մի նվաճող այդ տարածաշրջան չէր մտել (71, I):

Փաստերի այս գուցադիպությունը չի կարելի անտեսել:

Թուրուլթի-Նինուրթա I-ը, ինչպես նրան վերաբերող սեպագիր աղբյուրներն են վկայում, իր գործով կովել է Նաիրի երկրների 43 թագավորների միացյալ բանակի դեմ (28, N 6): Փաստերի վերլուծությունից պարզվում է, որ դրանք գտնվել են Հայկական Տավրոս լեռների, Եփրատ գետի (Մալաթիայից մինչև ոլորան) և Սև ծովի միջև՝ լեռնաշխարհի արևմտյան հարավում: Ավելացնենք նաև այն, որ Նաիրի անունը, ինչպես մեր մի այլ աշխատանքում ենք ցույց տվել, աստորերեն բառ է և նշանակում է «լեռնաշխարհ» (41, էջ 37-46): Ուրեմն կասկած չի կարող լինել, որ Թուրուլթի-Նինուրթա I-ը այլ հորջորջմամբ Բելն է, որը մ. թ. ա. 1244թ. մտել է Հայկական լեռնաշխարհ:

Խնթական պետության թագավոր Թուրխալիյաս IV-ը (մ. թ. ա. 1255-1233թթ.) այս փրակալի ժամանակակիցն է, որին հասցեագրված նամակը պահպանվել է: Նա, ինչպես կրեսնենք ստորև, նշված տարածքը հիշատակում է Հայաստանում, որի մեջ առկա է խնթերենի -asa ստանականակրտ անանցը:

Մովսես Խորենացին գրում է, որ Նայկը իշխում էր լեռնաշխարհի արևմտյան հատվածում. նրա նստավայրը գտնվում էր Նարբ գավառում (այն ընկած էր Վանա լճից քիչ դեպի հյուսիս): Այդ երկիրը նահապետի անունով կոչվել է Նայբ (71, I, ժա, ժր):

Այս փաստերի համադրումից ակնհայտ է դառնում, որ մ. թ. ա. XIII դարի աստուրական սեպագիր աղբյուրներում հիշատակված Նաիրի երկրները նույն ժամանակի խեթական տեքստերում վկայված են Նայասա, իսկ հայ ավանդական պատմության մեջ՝ Նայբ անուններով (41, էջ 37-41):

Ուրեմն Նայկը Նայասայի (Նայբ) այն թագավորն է եղել, որը մ. թ. ա. 1244թ. առաջևորդել է 43 գավառների իշխաններին և նրանց հավաքական գործին նրկիր ներխուժած Ասորեստանի բանակի և նրա առաջնորդ Թուքուլթի-Նինուրթա I-ի դեմ: Ցավոք, խեթական սեպագիր աղբյուրները նշված ժամանակի համար Նայասայի որևէ թագավորի անուն չեն հիշատակում:

Մ. Չամչյանը նշում է, որ Նայկը Բեյի դեմ պայքերազմելուց (մ. թ. ա. 1244թ.) առաջ սպրել է 166 փարի, իսկ դրանից հետո՝ 80 (73, հ. I, էջ 66): Անշուշպ այսպնեղ մենք գործ ունենք այն փաստի հետ, որ հայ ժամանակագիրները, ինչպես հին հույները Ասորեստանի արքայացանկը կազմելիս են վարվել, ցուցակից հանել են շատ թագավորների անուններ և նրանց իշխանության փարիները վերագրել են ամենաանշանավորին, փվյալ դեպքում Նայկին: Սրանցով է, որ Նայկը «սպրել է» մ. թ. ա. 1410-1165թթ.: Դա համըկնում է Նայասա թագավորության գոյության ժամանակաշրջանի հետ, որը սլայմանականորեն կարելի է կոչել հայկյան:

Խեթական սեպագիր աղբյուրներում հիշատակվող Նայասայի առաջին փրակալ Մարիյան խեթական արքա Թուդիսալիյաս III-ի ժամանակակիցը, սկսում է գահակալել մոտ մ. թ. ա. 1410թ.: Նրա անունը, ինչպես թագավոր Լաբարնայինը Խաթի երկրում, իր հաջորդների համար դարձել է փիտղոս (40, էջ 52-67), (հմմտ. Կեսար, ապա՝ կայսր): Դա նշանակում է, որ Մարիյան իրոք այդ երկրի հիմնադիր արքան է եղել (ավելի մանրամասն փես ստորև):

Մ. թ. ա. 1165թ. , որն իբր Նայկի իշխանության վերջին փարին է եղել, համըկնում է թրակափոյուզիական ցեղերի՝ մուշկերի լեռնաշխարհ մուտք գործելու փարվա հետ: Դրա մասին Ասորեստանի փիրակալ Թիգլաթպալասար I-ը (մ. թ. ա. 1115-1077թթ.) գրում է. «Իմ թագավորության սկզբին քան հազար մուշկեր և նրանց հինգ թագավորներ, որոնք հիսուն փարի է, (ինչ) նվաճել էին Աշուրին՝ իմ փիրոջը հարկ ու փուրք բերող Ալզի և Պուրուլումզի երկրները, (և) ոչ մի թագավոր ճակատամարտում չէր խոնարհեցրել նրանց կործանող, հույս դրեցին իրենց հզորության վրա (և) եկան ու նվաճեցին Կադմուխի երկիրը» (28. N 10):

Բերված հաղորդման համաձայն Թիգլաթպալասարի թագավոր դառնալուց (մ. թ. ա. 1115թ.) հիսուն փարի առաջ՝ մ. թ. ա. 1165թ. , մուշկերը մուտք էին գործել Ալզի և Պուրուլումզի երկրներ: Դրանք գտնվել են Նայկական Տավրոսի հարավային լանջերին՝ Տիգրիսի արևմտյան ակունքի և Եփրատ գետի միջև (21, էջ 161-162): Այս Ալզին փոքր երկիր է և. մասն է կազմել նախկին Ալմիյայի, որն

ընդգրկել է Տիգրիսի վերին ավազանը (21, էջ 18-19): Ասորեսպանի թագավորը նշում է նաև, որ մինչ այդ բոլոր թագավորները մուշկերից պարտություն էին կրել: Եվ իրոք, նրանք մ. թ. ա. XII դարի սկզբին, ինչպես հայտնի է, կործանել են Խապի (Խնթական) պետությունը Փոքր Ասիայում: Բերված տեքստից պարզվում է նաև, որ մ. թ. ա. 1165թ. նրանք կործանել են նաև Նայասա թագավորությունը և այնուհետև շարժվել են դեպի հարավ: Ուրեմն Նայկյան արքայապետին իշխանությունը ավարտվել է այդ ժամանակ. Նայասան կործանվել է մ. թ. ա. 1165թ.:

Այսպիսով, Նայք (խեթ. Նայասա) երկրի մասին սեպագիր առաջին տեղեկությունները վերաբերում են մոտ մ. թ. ա. 1410 թվին: Այսինքն՝ Նայկ նահապետից առաջ էլ այդ երկիրը փաստորեն գոյություն է ունեցել: Նայոց հին պատմության մեջ մնացել է միայն այդ գործը թագավորի անունը: Եվ հետևաբար կարելի է ենթադրել, որ ոչ թե երկիրն է կոչվել Նայկի անունով, ինչպես հայ պատմիչներն են գրում, այլ շարժանավոր թագավորի համար որպես փիլոզոս օգտագործվել է իր երկրի անունը: Այդպես, օրինակ, մարերն են վարվել՝ իրենց քաջ առաջնորդ Նյուբարին կոչելով Մադեն՝ մար:

Նայկ անձնանունը, որը ժողովրդի մեջ այսօր էլ հաճախ օգտագործվում է Նայիկ ձևով, կազմված է հայ ցեղանունից (հմմտ. պարսիկ, հնդիկ) ու նշանակում է «հայ» (32, էջ 70):

Այս բոլորից հետևում է, որ Նայկը պատմական անձնավորություն է՝ նա Նայասայի թագավորներից մեկն է, որը մ. թ. ա. 1244թ. կռվել է երկիր ներխուժած Նեբրոպթի՝ Ասորեսպանի փիրակալ Թուբուլթի-Նինուրթա I-ի և նրա զորքի դեմ:

Ասորեսպանի պետության պատմական ասպարեզ մտնելուց (մ. թ. ա. 1319թ.) 75 փարի հետո (մ. թ. ա. 1244թ.) Բելը՝ Նեբրոպթը, Ասորեսպանում դառնում է թագավոր: Այդ փարում աստորական գրավոր աղբյուրների համաձայն, այնպեղ գահ է բարձրանում Թուբուլթի-Նինուրթա I-ը: Նեպուբար Բելը Թուբուլթի-Նինուրթա I-ն է, որը նույն թվականին կռվում է Նաիրի երկրների՝ Նայասայի մի թագավորի դեմ: Նայ ավանդական պատմության հաղորդումների համաձայն նրա ախոյանը Նայկ Նահապետն է եղել, որն «ապրել է» այդ թվականից առաջ 166, իսկ դրանից հետո՝ 80 փարի: Մ. թ. ա. 1410 թվականը Նայասա թագավորության սկիզբն է, իսկ մ. թ. ա. 1165 թիվը՝ նրա կործանման փարին:

3. Արևելահայկական թագավորության ժամանակաշրջան

Ժամանակագրության հարցերը պարզաբանելու նպատակով հակիրճ ներկայացնում ենք Արևելահայկական թագավորության պատմությունը, ըստ Մովսես Խորենացու «Նայոց պատմության» մեջ պահպանված հաղորդումների:

Այսպես, Նայկից հետո Արմենակը (Արամանյակ), արևմուտքում թողնելով

Նարբ գավառը, իր փոհնով փեղափոխվում է Արարարյան դաշտ և հասարակ-
վում Արագածոտն գավառում: Նրա որդի Արամայիսը (Արմայիս) հիմնում է
Արմավիր քաղաքը, որը դառնում է: Լան ևրա հաջորդների համար ևս փառավայր:
Նրանից հետո հաջորդաբար իշխում են Ամասիան, Գեղամը և Նարման իրենց
իշխանությունը ասփիճանաբար փարսեելով լեռնաշխարհի արևելյան շրջան-
ներում: Այնուհետև Արամը այդ թագավորության կազմի մեջ ներգրավում է ոչ
միայն արևմտյան Նայասփանը, այլ ևս Տիգրիսի վերին ավազանի երկրներն
ու Կասպաղովկիան: Արա Գեղեցիկի ժամանակ Նայկական թագավորությունը
ևորից ամփոփվում է: Լեռնաշխարհի արևելյան շրջանների սահմաններում և
ևրա անունով կոչվում Այրարապ:

Քանի որ Արա Գեղեցիկի հետ կապված փեղեկությունները ժամանակագ-
րության առումով խիստ արժեքավոր են, ուստի հետազոտությունը սկսենք
դրանցից:

Ասորեստանի թագուհի Շամնուրամաթը ամուսնու մահից հետո իշխել է մ. թ.
ա. 810-806թթ. դեռահաս որդու՝ Ադադներարի III-ի փոխարեն:

Սեպագիր աղբյուրները չեն հիշատակում այդ հիևգ փարիների ընթացքում
Ասորեստանի և Ուրարտուի միջև թշնամական հարաբերության որևէ փաստ:
Ուրարտական արձանագրությունները վկայում են, որ Վանի հռչակավոր
ջրանցքը կառուցել է Ուրարտուի թագավոր Մենուան, իսկ Մովսես Խորենացին
գտնում է, որ այն իրագործել է Շամիրամը: Ուստի պետք է ենթադրել, որ Շամի-
րամը սերտ հարաբերություններ է ստեղծել Վանի թագավորության հետ: Ամե-
նայն հավանականությամբ թագուհին իր իշխանության սկզբի փարիներին մեծ
օգնություն է ցույց տվել ևրան ջրանցքի կառուցման գործում: Իհարկե, առանց
հզոր և զարգացած Ասորեստանի գործուն օժանդակության Ուրարտուն չէր կա-
րող այդպիսի հրաշակերտ կառուց իրականացնել:

Մենուան այդ ժամանակ ձեռնարկել է արշավանք դեպի Արարարյան դաշտ
միայն մեկ անգամ մ. թ. ա. 809 թվին: Նա, գրավելով Էրիկուախի երկիրը (Մա-
սիսի հյուսիս- արևելյան փեշերին), հասնում է Արաքս գետը, սակայն հետ է վե-
րադառնում (18, էջ 155-156): Կարծում ենք, Շամիրամը, գուցե փոքրաթիվ զո-
րախմբով, ևրա հետ է եղել, որի ժամանակ էլ զոհվել է Արա Գեղեցիկը (71, 1,
Ժե): Ներկաբար կարելի է ենթադրել, որ մ. թ. ա. 809 թվը հայ թագավորի
իշխանության վերջին փարին է եղել:

Մովսես Խորենացին գրում է, որ Շամիրամը Արա Գեղեցիկի փասներկու
փարեկան որդուն, որին թագուհին Արա է կոչում, նշանակում է Արմավիրում վե-
րակացու: Վերջինս զոհվում է Շամիրամի հետ միասին (71, 1, ի):

Ուրեմն Արայան Արան նշված պաշտոնում եղել է մ. թ. ա. 809-806թթ.: Նրա-
նից հետո Արմավիրում սկսում է իշխել Անուշավանը, որի մասին Նովիաննես
Դրասխանակերպցին (IX դար) գրում է. «Սրա ցեղից և զավակներից փիրող
չղարձան հայրենի իշխանությանը, այլ ուրիշ ոմանք բռնակալներ փիրեցին
Թորգոմյան աշխարհին» (68, էջ 25-26):

Վանի փիրակայ Արգիշտի I-ը մ. թ. ա. 782թ. իր նախորդներից առաջինն է, որ նվաճում է Ազա երկիրը Արարապյան դաշտում և իր գործով հասնում Սևանի ալվազան: Արևելահայկական թագավորությունը ևս հիշապակում է Էփրոնի անունով, որն ուրարտերեն բառ է և փոխարինում է հայկական Այրարապ անվանը (տես ստորև):

Նկրևաբար հայ պատմիչի հիշապակած օտար բռնակալը Արգիշտի I-ն է, որը փաստորեն կործանել է այդ ժամանակ լեռնաշխարհի արևելյան շրջանների սահմաններում ամփոփված հայկական պետությունը: Նրա վերջին թագավորը եղել է Անուշավանը:

Ելևելով այս փվյալներից՝ Անուշավանը պետք է իշխամ լինի մ. թ. ա. 806-782թթ.:

Հիմք ընդունելով հիշյալ թվագրումները և Մ. Չամչյանին հասած հայոց յուրաբանչյուր թագավորի իշխանության տևողության մասին տեղեկությունները՝ փորձենք որոշել նրանց ժամանակագրությունը:

Արմենակ, փիրել է 46 փարի, մ. թ. ա. 1085-1040թթ.

Արամայիս՝ 40փ., մ. թ. ա. 1040-1001թթ.

Ամասիա՝ 32փ., մ. թ. ա. 1001-970թթ.

Գեղամ՝ 50փ., մ. թ. ա. 970-921թթ.

Նարնա՝ 31փ., մ. թ. ա. 921-891թթ.

Արամ՝ 58փ., մ. թ. ա. 891-834թթ.

Արա Գեղեցիկ՝ 26փ., մ. թ. ա. 834-809թթ.

Արայան Արա՝ 4փ., մ. թ. ա. 809-806թթ.

Անուշավան՝ 25փ., մ. թ. ա. 806-782թթ.:

Ի դեպ, ըստ Մ. Չամչյանի ցուցակի, Արայան Արան իշխել է 18 փարի, իսկ Անուշավանը՝ 63, որը փաստերով չի հաստատվում: Այդ թվերը, հավանաբար, վերաբերում են նրանց փարիքին:

Այս թվագրումը ցույց է փայլա, որ Արմենակը Նայկի անմիջական ժառանգորդը չի եղել, բանի որ ևս սկսել է իշխել Նայկից 80 փարի հետո: Նա գահը արևմուտքից փոխափոխել է Արարապյան դաշտ: Փաստորեն մ. թ. ա. 1165-1086թթ. լեռնաշխարհի արևմուտքում միասնական թագավորություն չի եղել: Այդ մասին Մովսես Խորենացին «Հայոց պատմության» մեջ ոչինչ չի գրում:

Արամը, պատմաժողով փվյալներով, եղել է Ասորեստանի թագավոր Բարշամի ժամանակակիցը: Վերջինս, կարծում ենք, Թուրոլթի-Նիևուրթա II-ն է, որը փիրել է մ. թ. ա. 890-884թթ.: Արամը իշխել է ևս Նիևուրթա III-ի ժամանակ (մ. թ. ա. 858-824թթ.), որի օրոք Արմավիրում հայոց գահը փոխանցվել է Արա Գեղեցիկին:

Արայան Արան Ճամիրամի ժամանակակիցն է, եղել, իսկ նրա հաջորդը՝ Անուշավանը, գահընկեց լինելով, օգևության համար դիմել է Ասորեստանի թագա-

վոր Չամնսնսին: Դա փրկի է ունեցել մ. թ. ա. 782թ. , թակի որ Արգիշտի I-ը Էփրոսին՝ Այրարափը, գրավել է այդ թվին: Նույն փարում Ասորեստանում գահ է բարձրացել Սալմանասար IV: Ներկաբար Մովսես Խորենացու հիշարակած Չամնսնսար Սալմանասար IV-ն է:

4. Վանի թագավորության արքայացանկը Մովսես Խորենացու և վաղ միջնադարի հայ պատմիչների աշխարհություններում

Մովսես Խորենացին «Տայոց պատմության» մեջ Անուշավանից հետո որպես թագավորներ է հիշարակում հետևյալ անձանց՝ Պարսեր, Աբբակ, Ջավան, Փառուակ, Սուր, Տավանակ, Վաշփակ, Տայկակ, Ամպակ, Առնակ, Շավարշ, Նորայր, Վսփասկար, Գոռակ, Տրաներ, Ընձակ, Գդակ, Տորո, Ջարմայր, Պերճ, Արբուն, Բագուկ, Տոյ, Տուսակ, Կայպակ և Սկայորդի (71, I, Ժբ):

Արայան Արային և Անուշավանին վերաբերող որոշ փոփոխություններ հաղորդելուց հետո հայ պատմիչը թվարկված արքաների մասին հաջորդ բաժնում ավելացնում է. «Բայց չափազանց շար կլիներ, եթե այս պատմության մեջ ասենք վերը նշված մարդկանց բոլոր արժանահիշարակ գործերը և խոսքերը» (71, I, ի):

Նա հրաժարվում է նշված թագավորների մասին գրել: Ի դեպ, արքայացանկի մի ծանոթագրությունում պատմահայրը գրում է. «Մրանից առաջ ոչ ըստ ազգի, այլ ըստ այրերի առաջադիմության (իշխեցին)» (71, I, Ժբ, ծան.): Ի սկստի ունենալով ծանոթագրության փոփոխությունը վերագրվել է Արայան Արայից առաջ եղած թագավորներին: Սակայն նրանից առաջ, ըստ Մովսես Խորենացու, իշխել են Արա Գեղեցիկը, Արամը, Տարման և այլն, որոնց նա համարում է հայոց թագավորներ և ներկայացնում է նրանց պատմությունը: Ուրեմն ծանոթագրությունը վերաբերում է Սկայորդուն: Ի սկստի, ընդհարված հայոց պատմությունը պատմահայրը վերսկսում է հենց Սկայորդու որդի Պարույրի գործունեության սկստագրությամբ: Դա հաստատում են նաև մյուս հայ պատմիչները: Տավանաբար վերը նշված նախադասությունը գրիչները էջում ճիշտ փոփոխել են դրել: Այս բոլոր փաստերը ցույց են փայլիս, որ Մովսես Խորենացին Անուշավանից հետո մինչև Սկայորդի իշխած արքաներին, որոնց մասին նա խուսափում է գրել, համարում է օտարներ՝ ոչ հայոց ազգի մարդիկ, որոնք երկրում իշխել են «ըստ յառաջադիմության»:

Այդ առիթով Մովսես Խորենացին ավելացնում է. «Թողնենք ինչ-որ առավել կարևոր չլ՝ ասենք ինչ որ հարկավոր է: Մրանից հետո, որոնք ասորեստանցիների ժամանակ թագավոր էին, որոնք Շամիրամի կամ թե Նինուսի ժամանակներից էին (իշխում), մեր Պարույրի մասին կպատմեն՝ Մարդաստանի ժամա-

նակակիցի (71, I, ի):

Նայ պարմիչը բաց է թողնում այդ 25 թագավորների հետ կապված իրադարձությունների պարմությունը և անցնում Պարույրի վերաբերող անցքերին՝ վերջինիս համարելով «մեր»: Ակնհայտ է, որ այդ արքաներին նա օտար է համարում, ուստի և դրանց մասին չի գրում: Դրանք ուրարտական թագավորներն են եղել:

Մովսես Խորենացին մեզ հաղորդում է նաև շար կարևոր մի փաստ. այդ արքաները իշխում էին Շամիրամի (մ. թ. ա. 810-806թթ.) և Նիևոսի, այսինքն՝ Ասորեստանի փիրակալ Սալմանասար III-ի (մ. թ. ա. 859թ.) ժամանակներից: Նա մի դեպքում մաքևացույց է անում Ուրարտուի հզորության սկիզբը, մյուսում՝ նրա կազմավորման ժամանակը:

Նովհանես Դրասխանակերպցին (IX դար) այդ թագավորների մասին գրում է. «Ուրիշ ոմանք բռնակալներ փիրեցին Թորգոմյան աշխարհին, որոնց անունները այսպիսիք են» (68, էջ 25-26): Նա այնուհետև թվարկում է Անուշավակից հետո Մովսես Խորենացու հիշարակած անունները՝ մինչև Կայապեղ ներառյալ:

Սամվել Անեցին (XII դար) Պարույրի կապակցությամբ նշում է. «Սրանից առաջ ոչ ըստ ցեղի, այլ բռնակալ մարդիկ հանդես գալով՝ փիրեցին աշխարհին, և նրանց անունները այսպիսիք են» (77, էջ 44-45):

Նայ պարմիչները այդ արքաներին, որոնք փիրել են Նայաստանում մինչև Պարույրը, համարում են ոչ ցեղակիցներ, օտար բռնակալներ: Սակայն նրանք, ինչպես և պարմահայրը, նշում են այդ օտար թագավորների անունները, որովհետև այնուամենայնիվ դրանք իշխել են Նայաստանում:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ վաղ միջնադարի հայ պարմիչները գիպելին, որ Սալմանասար III-ի ժամանակից սկսած մինչև Սիևախներիբի մահը (մ. թ. ա. 681թ.) սկզբում արևմտյան, ապա ողջ Նայաստանում իշխել են օտար բռնակալներ:

Սալմանասար III-ը սկսել է իշխել մ. թ. ա. 859 թվից (ըստ է. Բիկերմանի՝ 858): Այդ փոքրին նա ձեռնարկում է արշավանք դեպի հյուսիս և այդ մասին պարմող արձանագրության մեջ առաջին անգամ հիշարակում է Ուրարտու պետության մասին: Իսկ երբ Ասորեստանում գահ բարձրացավ Շամիրամը (մ. թ. ա. 810թ.), Վանի այդ թագավորությունը սկսեց հզորանալ (37, էջ 63):

Այդ օտար թագավորների անունների ստուգաբանության վերաբերյալ Ն. Աճառյանը նշում է, որ դրանց մի մասը իրանական, իսկ մյուսները հայկական ծագում ունեն: Ընդ որում հայկականները, ինչպես հեղինակն է գրում, մեր պարմահոյ հորինածն են (54):

Սակայն այլ առիթով Ն. Աճառյանը նշում է, որ այլ ժողովուրդների անձնանունները հայկական միջավայրում երբևէն օգտագործվում են թարգմանաբար (հմմտ. Գրիգոր Արթուր, Սյրեփանոս Պոսակ և այլն, փես 54, հ. Ա, էջ 391):

Դա ընդունված էր նաև այլ ազգերի մոտ: Ինչպես վերը նշեցինք, հին Խույն

պարմիչները Ասորեստանի թագավորների անունները մեծ մասամբ թարգմանել են կամ հարմարեցրել իրենց լեզվի օրինաչափություններին:

Խնդրո առարկա արքայացանկը Մար Աբաս Կապիկան վերցրել է հին հունարեն լեզվով շարադրված «Սկիզբն մարենիս» աշխարհությունից և բերել հայոց արքունիք: Ամենայն հավանականությամբ այդ անունները ժամանակին թարգմանված են եղել հունարենի, իսկ Վաղարշակի դպիրները դրանք բնականաբար վերածել են հայերենի (հմմտ. Գոռակ, Ամպակ, Վաշտակ, Արբուն և այլն): Այս ձևով այդ օտար բռնակալների իրական անունները հայոց մարենագրության մեջ չեն պահպանվել:

Այդ ցանկում անունների կրկնություններ չկան: Իսկ Ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշարակված են Սարդուրի, Ռուսա, Արգիշտի անուններ կրող մի քանի արքաներ: Կարծում ենք, դրանց հայերեն թարգմանությունները կապարվել են նրանց փիլոզոսներից:

Օտար բռնակալների անունների այդ ցուցակը ուրարտականից տարբերվում է նաև դրանց քանակով: Առաջինը պարունակում է 25-27, իսկ երկրորդը, որը վերաբերում է մ. թ. ա. 859-645թթ.՝ 14 անուն: Ինչպես վերը տեսանք, թե՛ Եվսեթիոս Կեսարացու և թե՛ հայ պարմիչների աշխարհություններում Ասորեստանի արքայացանկում հիշարակված են նաև նրան ենթակա Բաբելոնի թագավորների անունները: Նույն երևույթը նկատվում է նաև խեթական Նին թագավորության արքաների անունների ցուցակում: Ներկայումս Վանի թագավորների հայկական ցանկում հավանաբար թվարկված են նաև ենթակա ասիական և առաջնորդների անունները:

Պարզելու համար, թե թարգմանված անուններից որոնք են ներկայացնում Վանի թագավորներին, դիմենք երկու դեպքում էլ դրանց վերագրվող իշխանության փարիների փոփոխության մասին եղած տվյալներին: Դրանց համապատասխանություններն էլ թույլ կրան այդ առեղծվածը լուծել:

Մ. Չամչյանի աշխարհության մեջ այդ հին արքայացանկը ներկայացված է ավելի համալրված ձևով՝ իշխանության փարիների փոփոխության մասին նշումներով: Ուստի բերենք այդ ցուցակը՝ համեմատելով դա ուրարտականի հետ.

Պարեպը իշխել է 50 փարի,

Արբակը՝ 44

Չավակը՝ 37

Փառնակը՝ 53

Սուրը՝ 45

Նավանակը՝ 30

Վաշտակը՝ 22, հմմտ. Սարդուրի I, իշխել է 21 փարի:

Նայկակը՝ 18, Արամն՝ 17

Ամպակը՝ 14, Իշպուիսի՝ 14

Առնակը՝ 17

Շավարշը՝ 6
 Նորայրը՝ 24, Մենուա՝ 25
 Վսփամը՝ 14
 Կարը՝ 4
 Գոռակը՝ 18
 Տրակարը՝ 25, Արգիշտի I՝ 23
 Ընծակը՝ 14
 Գդակը՝ 30
 Տորոն՝ 3
 Զարմայրը՝ 22, Ռուսա I՝ 22
 Պերճ I-ը՝ 35
 Արբուկը՝ 27, Արգիշտի II՝ 29
 Պերճ II-ը՝ 40, Ռուսա II՝ 41
 Բագուկը՝ 50
 Նոյը՝ 44
 Նուսակը՝ 31
 Կայսակը՝ 45:

Նայկական ցանկում միայն Նայկակի անունն է, որը Վաչագակից առաջ լինելու փոխարեն հիշված է կրակից հեկո:

Ի դեպ, Մովսես Խորենացին Նայկակի մասին նույն ծանոթագրության մեջ կշում է. «Իսմանէ յառաջ՝ ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմության, գի և ամենեքեան զՆայկակ ասեն լինել առ Բելոքոսիվ, և ամբոխս իմն արարեալ անխորհուրդս, և մեռանել ի նմին» (71, I, ժթ):

Նայ պարամիջը վկայում է, թե այդ ոչ հայազգի թագավորներից առաջինը Նայկակն է եղել, այսինքն՝ Արամեն, որը անխոհեմ վարվելով ժողովրդի հեք, կրա կողմից սպանվել է:

Իսկապես, Արամեից հեկո Ուրարտուի հաջորդ թագավորը Սարդուրի I-ն էր, որն իր մասին հիշատակում է որպես Լուրիպրիի և ոչ Արամեի որդի: Այս փաստը հիմք է տվել պարամարանների եզրակացնելու, որ Արամեի օրոք երկրում արքայապոռնը աստուրական արշավանքների ճնշման փակ փոխվել է (19, էջ 120-121):

Սակայն պետք է նկատի ունենալ, որ կրա օրոք Սալմանասար III-ի վերջին արշավանքի ժամանակ աստուրական զորքը չի կարողացել խորանալ Ուրարտու թագավորության մեջ, Արամեն պարպություն չի կրել: Տեղևարար մ. թ. ա. 844թ. այդ արշավանքը պարճառ չէր կարող լինել երկրում կրա քաղաքական դիրքերի թուլացմանը: Ուրեմն ավելի հավանական է Մովսես Խորենացու վկայությունը, ըստ որի Նայկակը՝ Արամեն սպանվել է ներքին ապստամբության հետևանքով: Դա օգտագործել են հակառակորդ ուժերը՝ փոխելով թե՛ մայրաքաղաքը (Արամեի օրոք այն Արժաշկուն էր, իսկ Սարդուրիի ժամանակ՝ Տուշպան)

և թե՛ արքայապոռոհը:

Այս փաստերի համապատասխանությունը ևս հաստատում է մեր այն ենթադրությունը, որ Արամեն հայկական աղբյուրների Նայկակն է: Իսկ Վաշփակին վերագրված 12 փարին (ժբ), հնարավոր է, որ գրիչների կողմից թույլ տրված վրիպակ է. իբ (22) նշելու փոխարեն գրել են ժբ (12):

Նայ պատմիչների հիշատակած այն թագավորները, որոնք իշխած փարիների բանակով գտնում են իրենց համապատասխանները ուրարտական արքայացանկում, միասին փիրել են 222 փարի: Ճիշտ այդքան է Վանի 14 փիրակների զահակալության փարիների ընդգրկանուր բանակը:

Երկու ցուցակներում էլ ամեն մի արքայի համար մեկ միավոր ավել է հաշվված. բաժանարար փարին և նախորդին, և հաջորդին է վերագրվել:

Սակայն հայտնի է, որ Ռուսա II-ից հեկո մինչև Ուրարտուի կործանվելը՝ մ. թ. ա. 645-591 թթ. իշխել են ևս մի քանի թագավորներ, որոնցից Սարգուրի IV-ի արքա լինելը Ն. Նարությունյանը կասկածի փակ է առնում (19, էջ 328-330): Նշված ժամանակաշրջանում Վանում հերթականությամբ փիրել են Սարգուրի III-ը, Էրիմենան, Ռուսա III-ը և Ռուսա IV-ը, որոնք իշխած ժամանակահատվածների մասին վերջնական փվյալներ առայժմ չկան:

Մովսես Խորենացին «Նայոց պատմության» մեջ Պարուրիից հեկո մինչև Երվանդ Սակավակյացը թվարկում է վեց արքաների անուններ, որոնց մասին դարձյալ ոչինչ չի գրում:

Մ. Չամչյանի ժամանակագրական փվյալների համաձայն դրանցից Նրաչյան իշխել է 22 փարի, Փառնավազը՝ 14, Պաճույճը՝ 35, Կոռնակը՝ 8, Փավոսը՝ 17, Մյուս Նայկակը՝ 36 փարի: Կարծում ենք դրանցից պեպք է ընտրել այն չորս արքաներին, որոնց փիրած փարիների ընդհանուր գումարը փեղավորվի մ. թ. ա. 645-591 թթ. սահմաններում:

Այդ դեպքում ըստ երկու ցուցակների հերթականության Սարգուրի III-ը Նրաչյան է, որը իշխել է 22 փարի (մ. թ. ա. 645-624 թթ.), Էրիմենան Փառնավազն է՝ 14 (մ. թ. ա. 624-611 թթ.), Ռուսա III-ը Կոռնակն է՝ 8 (մ. թ. ա. 611-604 թթ.), իսկ Ռուսա IV-ը Փավոսը՝ 14 փարի (մ. թ. ա. 604-591 թթ.): Եթե ընդունենք, որ վերջինիս վերագրված ժե (17) փարին գրիչների սխալի արդյունք է և պեպք է լինի ժե (15), ապա մեր ընտրած արքաների փարիները ճիշտ կերպով գեպեղվում են մ. թ. ա. 645-591 թթ. սահմաններում:

Այսպիսով, Մ. Չամչյանի ներկայացրած՝ Նայաստանում իշխած թագավորների արքայացանկի ժամանակագրական փվյալները կասկածի ենթակա չեն, դրանք խիստ սրժենքավոր են ու համապատասխանում են սեպագիր աղբյուրների ընձևոած նույն կարգի փեղեկություններին: Նավասարի է դառնում մասնագետների այն խիստ թեակյան ենթադրությունը, որ Ուրարտուն կործանվել է մ. թ. ա. 591 թվին: Սակայն մեծանուն գիտնականը, ձեռքի փակ չունենալով սեպագիր աղբյուրների փվյալներ, որոշ վրիպումներ է թույլ փվել թվագրելու հարցերում: Նա ուրարտական արքաներին, ի թիվս որոնց ընդգրկված են նաև փե-

ղական իշխաններ, գեպեղեյ Է Անուշավանի և Սկայորդու միջև ընկած ժամանակահատվածում (102 փարի): Նրանց համարելով հայ թագավորներ ու ելևելով յուրաքանչյուրի իշխան փարիների քանակից՝ որոշել է հայոց պետականության սկիզբը՝ այն հասցնելով մ. թ. ա. XXV դարը: Այս հանգամանքը ևս նպաստել է, որպեսզի Մ. Չամչյանի հայոց արքայացանկը և ժամանակագրական փվյալները հնարագոյողների կողմից անփասվեն: Այնինչ ճիշտ մոտեցման դեպքում նրա բերած ժամանակագրական փվյալները գիտության համար մեծ արժեք են ներկայացնում:

Այսպիսով, Մովսես Խորենացու և վաղ միջնադարի հայ պատմիչներին հայրենի է եղել Ուրարտուի մասին՝ նրա առաջ գալու, հզորանալու, անկում ապրելու և կործանվելու ժամանակները, թարգմանաբար հիշատակում են նրանց թագավորների անունները: Իսկ Մ. Չամչյանի աշխատությունների մեջ պահպանվել են այդ արքաների իշխան փարիների քանակի վերաբերյալ ճշգրիտ փվյալներ:

5. Սկայորդու և Պարույրի ժամանակաշրջան

Մովսես Խորենացին «Հայոց պատմության» մեջ գրում է, թե Ասորեստանի թագավոր Սենեթերիմի երկու որդիները սպանում են իրենց հորը և փախչում Հայաստան, որոնց ընդունում է հայոց քաջ ևսիսի Սկայորդին (71, I, իգ): Հայրաստանի որդիների մասին հաղորդում են նաև սեպագիր աղբյուրները: Բարեխական ժամանակագրության վրա հենվելով՝ ուսումնասիրողները գրկում են, որ այդ դեպքը փեղի է ունեցել մ. թ. ա. 681 թ. դեկտեմբեր ամսին: Նեպոսարար մ. թ. ա. 680 թ. Սկայորդին արդեն հայոց առաջնորդ էր:

Մ. Չամչյանի բերած արքայացանկում նրան վերագրվում է իշխանության 17 փարի: Ուրեմն Սկայորդին կառավարել է Հայաստանում մ. թ. ա. 680-664 թթ.:

Մովսես Խորենացին գրում է, որ նրա որդի Պարույրը եղել է Ասորեստանի թագավոր Սարդասապալի, այսինքն՝ Աշշուբանուսապալի ժամանակակիցը (71, I, իա): Հայրենի է, որ վերջինս փրկել է մ. թ. ա. 668-627 թթ.: Պարամահոր մեկ այլ վկայությամբ հայոց այս թագավորը դաշնակցել է մարացի Վարբակեսի (Կիսկասար) հետ՝ Սարդասապալի թագավորությունը կործանելու համար (փնս նույն փեղը): Իսկ Ասորեստանի պետությունը վերջնականապես դադարել է գոյություն ունենալուց մ. թ. ա. 606 թվին:

Նովհանես Դրասխանակերպոցին Պարույրի մասին գրում է. «Այս բոլորից հետո Հայկի ցեղից Պարույր անունով (մեկը) այսպեղ ոչ ցեղակիցներին հանելով մերժեց և իր ցեղի իշխանությունը հաստատելով ժառանգեց» (68, էջ 23): Նեպոսարար մ. թ. ա. 591 թվին Վանի թագավորությունը կործանել ևս հայերը՝ Պարույրի զինավորությամբ:

Ըստ Մ. Չամչյանի ևս իշխել է 49 փարի: Եթե պայմանականորեն ընդունենք, որ Պարույրի պիրակայությունը ավարտվել է Ռուարտուի կործանումից քիչ անց, ապա ևս գահակալել է մոտ մ. թ. ա. 639-591 թթ.: Դա, կարծես, հաստատվում է ևս վերը բերված փվյալներով, որոնց համաձայն Պարույրը եղել է Աշտորբանուսպալի ժամանակակիցը և Ատրևստանի կործանման (մ. թ. ա. 606 թ.) մասնակիցը: Սակայն այս թվագրմամբ ևս իր նախորդից՝ հորից բաժանվում է 25 փարով: Նայ պատմիչները նրանց միջև ոչ մի այլ արքայի չեն հիշարկում:

Ուրեմն կարևոր է ներառել, որ Պարույրը իր հոր՝ Սկայորդու մահից հետո անչափահաս է եղել: Այս դեպքում մենք գործ ունենք գահակալության բացակայության՝ պարապորդի հետ: Ի դեպ այս վարկածը հիմնավորվում է ևս «Սասունցի Դավիթ» էպոսի փվյալներով, որոնց մենք անդրադառնում ենք վերջին գլխում:

Հ Ա Յ Ա Ս Ա

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՌԱԶՄԱՔԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Նայասա երկրի փարածքը

Նայասա անունը հիշատակված է միայն խեթական սեպագիր աղբյուրներում, որոնց համաձայն այն իրենից ներկայացրել է խեթական պետության արևելյան հարևան մի երկիր: Նրա սահմանները հստակ նշված չեն: Մակայն խեթա-հայասական ռազմաքաղաքական փոխհարաբերություններին վերաբերող սեպագիր փեքսիների փվյալներով հեկազոփողները փորձել են պարզել Նայասայի ընդգրկած փարածքը:

Գերմանացի գիտնականներ Է. Ֆոտերը և Յ. Ֆրիդրիխը գտնում են, որ այն ընկած է եղել Եփրատի վերին հոսանքի ավազանում (3, էջ 10-26. 4, էջ 103 և ծան. 3):

Գ. Ղափանցյանը եզրակացնում է, որ Նայասայի մեջ մտել են Գայլ գետի ակունքները, Եփրատի, Ճորոխի և Արաքսի վերին ավազանները (32, էջ 27, 30, 37-64): Ա. Գյոպցևն նույնպես այդ փարածքում է փնդադրում Նայասա երկիրը (9, բարբելգ):

Ի. Դյակոնովի կարծիքով այն պետք է որոնել Սև ծովի հարավային ափին (29, էջ 81-82):

Այսպիսով, համարյա բոլոր մասնագետները Նայասան փնդադրում են Եփրատ, Ճորոխ և Արաքս գետերի վերին ավազաններում մինչև Սև ծով:

Մեր ուսումնասիրությունների արդյունքները նույնպես հանդեգրել են այն եզրակացության, որ Նայասա երկիրը իսկապես զբաղեցրել է նշված փարածքները՝ սակայն ավելի մեծ ընդգրկումով:

Մ. թ. ա. XIV-XIII դարերի խեթական սեպագիր աղբյուրները Նայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում, բացառությամբ Տիգրիսի վերին ավազանի, որտեղ ապրում էին խուռիական ցեղեր, հիշատակում են Ազի, Իսուվա, Պախուվա, Ծուխմա և «Բարձր» երկրները: Դրանցից Ազին հաճախ հանդես է գալիս նաև Նայասա անունով: Նրա Ուրալ քաղաքը գտնվել է Բաբերդի մոտ: Այն հեպազայի Ռոնն բնակավայրն է (42, էջ 70):

խեթական թագավոր Մուրալիլա II-ը Ազիի (Նայասա) վրա հարձակվել է Սև ծովի կողմից: Ուրեմն այն հյուսիսում ձգվել է մինչև այդ ծովը: Այնուհետև այդ արքան իր ճանապարհին զորապետ է արել Ինգալալա քաղաքում (39, էջ

133-135): Քանի որ նա եկել էր ծովի կողմից, ուրեմն նրա ճանապարհը պետք է անցներ Ճորոխի սարոփն հովտով: Այդ շրջանում մեզ հայտնի է հայկական Նիգալ գավառը համանուն կենտրոնով: Եթե նկարի ունենանք այն, որ Ինգալավա անվան մեջ առկա է - awa (r) խեթերենի ամանցը, ապա հիբըն՝ **Ինգալ**, դրափոխությամբ նույնանում է հայկական Նիգալի հետ:

Այսպեղից Մուրսիսի II-ը, խորանալով երկրի ներքը, հարձակվում է **Արիսաս** քաղաքի վրա: Այն, բնականաբար պետք է որոնել Ճորոխի միջին ավազանում: Կարծում ենք, Արիսասն հեթազայի Արաբ-կայե բերդն է՝ Սպերից քիչ դեպի հյուսիս-արևելք՝ Ճորոխի մի թևի վրա, որպեղ առ այսօր դեռ պահպանվում են դրա ավերակները:

Այնուհետև թշնամին գրավում է **Դուկամա** քաղաքը, որի անունը, ինչպես պնդում են հեթազոտողները, խեթերենի dukk - արմալն է՝ -ama (r) ամանցով և նշանակում է «տեսանելի լինել» (75, 92 335):

Կարելի է ենթադրել, որ խեթերը թարգմանել են նշված փարսիցի որևէ տեղանուն: Կարծում ենք, այն Ազորդ գավառի ուշ միջնադարի **Տայ** տեղանունն է, որը նույնպիսի իմաստ ունի (հմմտ. հայել «տեսնել» և այլն):

Ի դեպ **Ազի** անունը պահպանվել է Ճորոխի ավազանի կենտրոնում գտնվող միջնադարի հայկական **Ազորդ** գավառի հորջորջման մեջ (39, էջ 138):

Այսպիսով, Ազի երկիրը, որի մեջ են գտնվել Ինգալավա, Արիսաս, Դուկամա և Ուրա քաղաքները, ընկած է եղել Ճորոխի ավազանում հյուսիսում ձգվելով մինչև Սև ծով: Այն հարավում սահմանակից է եղել «Բարձր» երկրին (ժմյ. Երզնկայի և Երզրումի շրջաններ):

«Բարձր» երկրի մեջ մտել են **Խալսենա**, **Խախանի** և **Իսպիպինա** գավառները: Դրանցից առաջինը **Կումախա** քաղաքով, որը հեթազայի **Կամախն** է, գտնվել է Եփրատի հովտում ոլորանից մինչև Երզնկայի շրջանը: Իսկ վերջինս **Խախանին** է՝ **Խախա** (հայկ. Խախ), **Դանկուվա** (միջնադարի **Մթնի**, ժմյ. **Միպինի**) և **Քիբեյարիգա** (հայկ. **Քթայառիճ**) քաղաքներով: Իսպիպինան ընկած է եղել Երզնկայի շրջանից անմիջապես դեպի արևելք՝ մինչև Եփրատի ակունքները (39, էջ 49, 54, 58-60):

Իսպիպինա գավառի բնակավայրերից է **Չագիսան**, որը Երզրումի շրջանի **Չագան** է (39, էջ 57-58): Իսկ նրա Արծիյա քաղաքը միջնադարի հայկական Արծնն է՝ Երզրումից քիչ հեռու (39, էջ 64-67):

Այդ շրջանում է գտնվել նաև **Խալիմանա** բնակավայրը: Մուրսիսի II-ը, նվաճելով Ազի երկիրը, հաջորդ փարին գնում է այնպեղ՝ ամրություններ կառուցելու և դրանցում խեթական զինվորական ջոկատներ գեպտեղելու: Երբ Ազի երկրի մարդիկ լսում են, թե խեթական թագավորը գալիս է, նրան ընդառաջ են ուղարկում Խալիմանա քաղաքի առաջնորդ Մուպիին՝ խնդրանքով, որ արքան այնպեղ չգնա, քանի որ նրան արդեն խոստացվել է զինվորներ փալ և այլն (39, էջ 135):

Ազին ընդգրկել է Ճորոխի ավազանը: Ուրեմն Խալիմանան պետք է որոնել Եփրատի հովտում՝ Երզրումի շրջանում, որպեղով էլ այդ արքան հավանաբար

անցել է: Տաշվի առնելով այս հանգամանքը՝ մենք հսկված ենք խալիմանան նույնացնելու նշված փարսիքի միջնադարի հայկական Մանյա այրք փղանվան հետ: Կարծում ենք, խնթրը դրա երկրորդ բաղադրիչը փոխարինել են իրենց լեզվի հալ «պահակ, պահակախումբ» բառով (75, էջ 334):

Կանուվարա բնակավայրը գտնվել է Իսփիփիսայի մեջ (39, էջ 61): Նկարի ունենալով այն պարագան, որ այդ գավառը Երզրումի շրջանն է եղել, մենք առաջարկում ենք Կանուվարան նույնացնել այդ նույն փարսիքի միջնադարի հայկական Կան բնակավայրի հետ: Ի դեպ, առաջինի անվան մեջ - *uwara* բաղադրիչը խնթրենի ածանց է՝ ավելացված հայկական փղանվան վրա:

Խնթրական թագավոր Խարուսիխ III-ի հաղորդումներից մեկի համաձայն, երբ իր պապը՝ Սուպիլուլիումաս I-ը գործով հասնում է Տայասա, այդ երկրի արքա Կարանիսի գալիս է **Կումախա**՝ նրան ճակատամարտ փալո: Ն. Ադոնցը այս փաստից եզրակացնում է, որ Կումախան հայաստանյան քաղաք է (46, էջ 34-35):

Ներևարար Ազիից բացի Տայասա երկրի մեջ է մտել նաև «Բարձր» կոչված նահանգը, որն, ի դեպ, միջնադարի հայկական Բարձր Տայքն է:

Տաշորը երկիրը **Պախուվան** է, որի անունը հնրագոյությունը նույնացնում են ժամանակակից **Պախ** բնակավայրի հետ (7, էջ 196): Այն գտնվել է Բյուրակի լեռների արևմտյան հարավաօձի վրա (39, էջ 116-119):

Խնթրական թագավոր Արնուվանդաս III-ը Պախուվայում խնթրի իշխանության դեմ բարձրացրած ապստամբության մասին գրում է, որ Միսրան գինվորական ջոկարներ էր ուղարկել Իսուվայի վրա հարձակվելու համար, որոնք և գրավել էին այն և ապա ներթափանցել Կումախա (տես ստորև):

Այդ սեպագիր փնթսպի մի այլ հարվածում նշված է, թե **Արխիտա** քաղաքի մարդիկ մուսք էին գործել Իսուվա: Փաստորեն երկու հաղորդումներն էլ վերաբերում են միևնույն հարձակմանը: Ուրեմն **Արխիտան** գտնվել է Պախուվա երկրում:

Խնթրական փրուսկալ Սուպիլուլիումաս I-ի և Տայասայի արքա Խուկանայի միջև կնքված դաշնագրի վերջում ի թիվս այլ քաղաքների Արխիտան ու Պախուտեյան հիշարակվում են որպես հայաստանյան պաշտամունքային կենտրոններ (39, էջ 148): Երկրորդ փղանվան մեջ առանձնանում է խոռոհերենի լեզա «մեծ» բառը: Ոսփի հնարավոր է, որ այն ժամանակակից Պախն է: Այս փաստերը ցույց են տալիս, որ Պախուվան Տայասայի բաղկացուցիչ մասն է եղել:

Այդ նահանգի կազմի մեջ են մտել, ինչպես վկայված է Արնուվանդաս III-ի դաշնագրի մեջ, նաև **Խալմեսնա**, **Խուրլա**, **Պախուրա** և **Ապարխուլա** բնակավայրերը (տես ստորև):

Իսուվան ընդգրկել է Արամանի գետի ստորին ավազանը: Այն հին հույն պարսիցների հիշարակած Սոֆենեն է, ուրարտական սեպագիր աղբյուրների Ծուպանին, հայկական Ծոփըրը (39, էջ 107-112): Այդ նահանգի կազմի մեջ մտել են **Լիլիման**՝ Արդանամադենի **Լիլիկ** գյուղը, **Խալման**՝ Խարբերդի մոտի **Խալ** բնակավայրը, **Հինձուրան**՝ նույն փարսիքի Տանձիթ գավառակի համանուն կենտրոնը, **Պախիսան**՝ ժամանակակից Պաղինը, **Խալարան**՝ Դերսի-

մի Խալար գյուղը, Դուրովադուրովան, Նենիսանկովան, Իկսունան և Մուլաման՝ հեփազայի Մղամը (39, էջ 110-112):

Տարածաշրջանի հաջորդ վարչաքաղաքաբանական միավորը Ծուխման է: Ա. Գյուրցեն այն նույնացնում է աստուրական արձանագրություններով վկայված Ծուխմու (Մուխմու) երկրի հետ, որը գրկվել է վերին Եփրատ և Արամսի գետերի միջև՝ Բյուրակի լեռների արևելյան հարվածում (9, էջ 47 և ծան. 181):

Խեթական սեպագիր աղբյուրներում այն հանդիպում է նաև Ծուխասպա ձևով: Ավետիսյան է. որ երկուսի մեջ էլ առկա է **ծուխ** բաղադրիչը, որին մի դեպքում խեթերը ավելացրել են իրենց լեզվի -ma ածանցը, մյուսում՝ apa «այն կողմ» բառը:

Մուսիլույիումսա I-ի փարեգրության փյույկներով, որը կազմել է փվել նրա որդի Մուրսիխը, Ծուխման գրկվել է Իսուվայի և Նայասայի միջև (39, էջ 113):

Ուրարտական սեպագիր արձանագրությունները նշված փարսիցի վրա հիշաբանում են **Տուարածինի** խուրի երկիրը, որն, ինչպես հայտնի է, նույնացվում է հայկական **Տուարածափ** գավառի հետ: Ատրեսպանի փիրակալ Սալմա-նասար III-ի (մ. թ. ա. 859-824 թթ.) Տուշխայում թողած արձանագրության համաձայն Ծուխման իր **Ուաշփալ** քաղաքով գրկվել է Իսուվայի և Դայանեկի միջև (21, էջ 174):

Եթե նկատի ունենանք, որ աստուրական սեպագիր աղբյուրներում չի հիշաբանվում Տուարածինի երկիրը, իսկ ուրարտականում՝ Ծուխման, բայց այդ աղբյուրներում նկատվում է առկված նույն փարսիցը, ապա դրանց նույնությունը կասկածից վեր է:

Ավելին, Ուաշփալ քաղաքի անունը, կարծում ենք, կազմված է խեթերենի waš- «արածեցնել» ամրափից և նույն լեզվի -talla գործողություն կապարող նշանակությամբ ածանցից: Ուրեմն աստրեսպանցիները օգտագործել են դրա խեթական անվանումը: Եվ իրոք, Սալմանասար III-ի ժամանակ հյուսիսային Սիրիան լցված էր խեթական գաղթականներով: Այդ բառաձևը իր իմաստով հիշեցնում է Տուարածինի տեղանունը, որի մեջ առկա է ուրարտերենի - (i) ու ածանցը: Իսկ **փուարած** բառը հայերեն է և նշանակում է նախրապան, որը և օտարները թարգմանել են: Նեփուսար Ուաշփալը Տվարածափի գավառի համանուն կենտրոնն է եղել (21, էջ 185-186 և 60, քարտեզ):

Ծուխմայի և Իսուվայի, ինչպես նաև վերը նշված մյուս առհասկների՝ Նայասայի կազմի մեջ գրկվելու մասին վկայում է Արևուվանդասի դաշնագիրը. «Իսուվա երկրի ավազները, Պախուվա երկրի ավազները, Ծուխմա երկրի ավազները, [Կումախա] երկրի ավազները, Մալդիյա քաղաքի ավազները Բիտեյարի[գա] քաղաքի Արիխայիժիի հետ բոլո[րը] երդումի մեջ [են]: [Նրանք բոլ]որը Արևայինիս ժառանգն են: Նրանցից ով թագավորի դեմ, թագուհու դեմ, [թագավորի] թոռների, ծոռների դեմ, [թագավորի եղբայրների դեմ], թագավորի որդիների, թոռների դեմ, [Արևայինիս] դեմ և Խալարի երկրի դեմ [իր երկր]ում [ով ապստամբի], ևս ձեր թշնամին թող դառնա: Այդպեղ նրա դեմ անմիջապես կովեցնեք: [Եթե] ձեր դարպասի մոտ չաս[եք], ձեր փոհմակիցիև, ձեր ցեղա-

կից[իև չխնորհեցնեք, դուք կդառնաք ինձ թշնամի]» (14, հապոր XXIII, րեքսսի 72, սյունակ II, փող 36-42):

Այս խոսքերով խեթական թագավորը դիմում է Դուկամա քաղաքի առաջնորդ Ախիյային. այսինքն՝ Ազի երկրի փրակալի: Նա, ինչպես տեսնում ենք, հապուկ էր, որ Իսուվա, Պահուվա, Կումախա («Բարձր»), և Ծուխմա երկրների մարդիկ Ախիյայի փոհմակիցներն ու ցեղակիցներն են:

Դա հաստատվում է նաև Մուպիլուլիումա I-ի Եգիպտոսի փարավոն Ամեն-հոփես III-ին հասցեագրած նամակով, որտեղ գրված է. «[իմ ներկայացուցիչը] Նայասա երկրից [վերադարձավ]: [Իմ ներկայացուցիչը] Ալգիյա երկրից վերադարձավ: [Թշնամի երկրները ամ]րողջությամբ են գրավեցի: [Բանակը] Կասկա երկրի սկսեց հարձակում գործել» (14, XIX, 20, I, 2-5):

Ըստ այս հաղորդման, ինչպես երևում է, Նայասան, որը նույնպես խզել էր հարաբերությունները Խափիի հետ, գրավել է լեռնաշխարհի արևմտյան մասում հարավից սահմանակից էր Տիգրիսի վերին ավազանի Ալգիյա (հայկ. Աղձնիք) և հյուսիս-արևելքում Կասկա երկրին (Արևելապոնոփական լեռների շրջան. 39, էջ 143 և ծան. 323):

Այսպիսով, Նայասա երկիրն ընդգրկել է Ազի, Կումախա («Բարձր»), Իսուվա, Պահուվա և Ծուխմա նահանգները և գրադեցրել է լեռնաշխարհի արևմտյան հարավածը՝ Նայկական Տավրոսի, Եփրատ գետի և Սև ծովի միջև: Նրա արևելյան սահմանների մասին խեթական սեպագիր աղբյուրներում տեղեկություններ չկան:

Այսպիսի մենք անդրադարձանք Նայասա երկրի գրադեցրած փարավոնի հարցերին: Իսկ Նայասա թագավորության սահմանները հաճախ չեն ընդգրկել էշված բոլոր նահանգները, որոնցից մի քանիսը մերթընդմերթ նվաճվել են խեթական թագավորների կողմից և մտնում էին Խափիի կազմի մեջ: Դա ակնհայտ է դառնում հայասա-խեթական ռազմաքաղաքական փոխհարաբերությունները ուսումնասիրելիս:

2. Նայասա երկրի ազգաբնակչությունը

Նայասա երկրի բնակիչների լեզվով որևէ գրավոր աղբյուր չի պահպանվել: Ուարի դրա մասին կարելի է պատկերացում կազմել միայն նրանց հապուկ անունների ուսումնասիրությամբ, որոնք հիշատակված են խեթական սեպագիր փրեսքերում:

Գ. Ղափանցյանը, դրանց մի մասը համեմատելով Միջագետքի Նուզի հիև քաղաքի աստորական սեպագիր արխիվից հայտնաբերված անձնանունների հետ, որոնց մի մասը խուռիական է, իսկ մյուս մասը՝ աստորական, գտնում է, որ Նայասայում խուռիներ են ապրել (32, էջ 64-73):

Այդ հետադարանի անունների արմատները հայտնի չեն: Նաճախ պարզ չի լինում անգամ անձնանվան լեզվական պարկանելիությունը: Ուստի դրանց և հայաստանյան հասարակ անունների միջև զուգահեռներ անցկացնելը քիչ թե շատ հավասարի արդյունքներ չի փայլի (8):

Ի. Դյակոնովը, համաձայն լինելով Գ. Ղափանցյանի փեսակեպին, այնուամենայնիվ նշում է, որ ազգաբնակչության լեզուն որոշելիս հայաստանյան փեղանունները խեթականների նման վարահելի չեն, քանի որ դրանք մ. թ. ա. XIV-XIII դարերի բնակիչներին ևսխորդամ այլ ազգության ժողովրդի («բնիկների») սփռված բառաձևեր են (29, էջ 213 և ծան. 58):

Խեթերը, ինչպես հայտնի է, գրավել են խապերի երկիրը և նրանց մի մասին ձուլել են իրենց. մյուսներին էլ՝ երկրից դուրս մղել: Բնիկների երկրի անունը, այնուամենայնիվ, կվաճողները պահպանել են: Սակայն ոչ սեպագիր աղբյուրները, ոչ էլ հնագիտական ուսումնասիրությունները մեզ չեն ընձեռում որևէ փաստ, որից կարելի լիներ ենթադրել, թե Նայասայի բնակիչները գրավել են այլ ցեղի տարածք: Ուստի Ի. Դյակոնովի նշած փաստարկը անհիմն է:

Նեղիևակը գրում է նաև, որ խեթական թագավոր Արնուվանդաս III-ի դաշնագրի մեջ հիշատակված Իսուվա, Պախուվա, Կունախա և Ծուխմա երկրների ավազների անունները խեթա-լուվական են, ուրեմն այդ տարածաշրջանի բնակիչները նույնպես խեթա-լուվական ցեղեր են եղել (29, էջ 86, ծան. 30):

Սակայն վավերագրում նշված է, որ այդ ավազները ուղարկվել են Խապիից որպես կառավարիչներ: Բնականաբար այդ մարդկանց անունները պետք է լինեն խեթա-լուվական լեզուներով:

Արամանի գետի ստորին ավազանում հայտնաբերվել են լուվիական գաղափարագիր արձանագրություններ: Ի. Դյակոնովը դրանից եզրակացնում է, թե այդ տարածաշրջանը բնակեցված է եղել լուվիացիներով: Սակայն հետևելով այս տրամաբանությանը՝ չենք կարող մտածել, թե Նայաստան, օրիևակ, ինչ-որ ժամանակ բնակեցված է եղել հույներով, արաբներով, քանի որ այնպեղ գրվել են այդ ժողովուրդների լեզուներով գրված վավերագրեր: Նեղիևակին հայտնի էլ չէ այդ փոքրաթիվ և կցկտոր գաղափարագիր արձանագրությունների բովանդակությունը:

Գ. Զահուկյանը Նայասայի հասարակ անունների ուսումնասիրության բնագավառում հանդես է բերում այլ մոտեցում: Նա դրանք համեմատում է հնդկարուսական հին լեզուների համապատասխան բառամթերքի հետ և առաջ բաշում մի փեսակետ, որի համաձայն Նայասայի բնակչությունը խոսել է այդ ընտանիքին պարկանող լեզվով (27, էջ 87):

Խեթական և աստուրական սեպագիր աղբյուրները թույլ են փայլի որոշ չափով կողմնորոշվել Նայասայի բնակչության լեզվի հարցում:

Սուպիլուլիումաս I-ի Կիծուվարեսայի (ուշ Կիլիկիա) թագավոր Սունասուրայի հետ կնքած դաշնագրում նշում է. «[Այն ժամանակ], երբ Իսուվա երկիրը՝ Արևայինիս ծառան, Արևայինիս նկատմամբ սկսեց թշնամանալ, և՛ Արևա-

յիևս. գնացի նրա դեմ կովելու: Իսուվա երկիրը, նրա փերը, ազգաբնակչությունը Իսուվայի, Արևայիևս առջև փախուստի մաքսակեցին. նրանք իջան Խուոի երկիր» (10, էջ 36-37): Տեքստից բխում է այն փաստը, որ խեթական թագավորը Իսուվա երկիրը չի համարում խուոիական: Այդպիսին եղել է նրա հարավային հարևան երկիրը, որտեղ ապաստան են գտել փախուստի մաքսաված խուվագիները:

Խուոիի փրակալները խուոիների մասին հիշատակում են միայն որպես Տիգրիս գետի վերին ավազանի և հյուսիսային Միջագետքի բնակիչներ: Նրանք Նայասա և Խուոի երկրները միմյանցից հստակ զանազանում են: Նույնը կարելի է ասել Ասորեստանի թագավորների վերաբերյալ: Թուրուլթի-Նինուրթա I-ը, մ. թ. ա. 1244թ. նվաճելով Տիգրիսի վերին ավազանի շուբարիական, այսինքն՝ խուոիական երկրները, անցնում է անմապչելի լեռները (Նայակական Տավրոս) և կոչում Նաիրի երկրների դեմ (28, N 3):

Այն, որ ևս Շուբարի և Նաիրի երկրները որոշակիորեն փարբերում է իրարից, երևում է նաև իր փիպղոսաշարից. «Թուրուլթի-Նինուրթան, աշխարհի թագավորը, հզոր թագավորը, Ասորեստանի թագավորը, Շումերի և Աքքադի թագավորը, Սիպարի և Բաբելոնի թագավորը, Դիլմունի և Մելուխի թագավորը, Վերին և Ներքին ծովերի թագավորը, լեռների և լայնարձակ փափաստանների թագավորը, շուբարիների (խուոիներ), կուփիների և բոլոր Նաիրի երկրների թագավորը» (28, N 7):

Ավելին, խեթական սեպագիր աղբյուրներում URU «բաղաք, բնակավայր» շումերերեն գաղափարագիրը, ի փարբերություն աստորական արձանագրությունների, դրվում է նաև որոշ երկրների անունների առջևից՝ դառնալով, փաստորեն, ազգաբնակչության ցուցիչ: Գ. Մելիքիշվիլին գտնում է, որ խեթերը, օրինակ, սու Kaska գրելիս նկատի են ունեցել Կասկա երկրի ժողովրդին (35, էջ 74):

Իսկապես, Խաթի, Խուոի, Նայասա, Միծրի (Եգիպոս), Կիծովապեսա, Արձավա և այլ երկրների անունները հաճախ գրված են լինում նշված որոշիչով, միևնույն դրանցում համանուն քաղաքներ չեն եղել:

Որքան սու Hajaša և սու Huarri գրելով խեթերը նկատի են ունեցել երկու փարբեր ժողովուրդների: Այսինքն՝ նրանք այդ երկու ազգերին իրարից զանազանել են:

Ha-ja-ša և Նայք անունների նմանությունը վաղուց արժանացել է մասնագետների ուշադրությանը: Ոմանք իրավագի կերպով պնդել են, թե դրանք միևնույն անվան փարբեր դրսևորումներն են: Սակայն վերջին փաստաձևակներում փարածված է Ի. Դյակոնովի պնտակեպը, որի համաձայն այն բաղկացած է haya- արմատից և -sa խեթական ամանցից, իսկ Նայք բառի հիմքակազմ ձայնավորը ո է (սեռ. հ. Նայոց) և ոչ ա: Ուափի և դրանք կապ չունեն իրար հետ: Նա, զարգացնելով իր այդ պնտակեպը, գտնում է, որ Նայասան կապ չունի հայ անվան հետ նաև այն պատճառով, որ նրանում առկա է իս և ոչ հ հնչյունը: Նեղիկակր միևնույն ժամանակ ենթադրում է, թե հայ անունը առաջացել է Hatti-ից օյ հնչյունափոխությամբ (29, էջ 211-214):

Եթե մի կողմ թողնենք այն, որ այս սպուգարանությամբ հայերենին վերագրվում է ոչ բնորոշ խ > հ հնչյունափոխություն, ապա անհասկանալի է, թե Սաադի և հայ (սեռ. հայո-) ձևերում հիմքակազմ փարբեր ձայնավորների (ի և ո) առկայությունը այս անգամ ինչպես է, որ չի խոչընդոտում մի բառաձևը մյուսից բխեցնելուն:

Ինչպես գտնում են խեթագետները, խեթերենի ք-ն կոկորդային հնչյուն է (24, էջ 245): Այն հնդեվրոպական նախադեզվից է եկել և, որպես այդպիսին, հիմնականում պահպանվել է խեթերենում ու հայերենում:

Խեթերը հարևան երկրների փեղանունները, որոնց մի մասը պարունակում է խ, իսկ մյուսները՝ հ, գրության մեջ արտահայտել են մինևույն ք ունեցող վանկի սևպանշանով:

Խեթական փեղանուններում -aša ածանցը հաճախ է հանդիպում: Օրինակ, *Haršanaša* բնակավայրը հիշատակված է նաև *Haršanhila* ձևով, որի մեջ *hila* «բակ, հարսություն» խեթերեն բառը փոխարինում է -aša ածանցին: Կամ *Parminaša* և *Parminija* փեղանուններում հերթագայում են նույն լեզվի -aša և -ija մասնիկները: Իսկ *Hijašaša* բնակավայրի անվան արմատը հանդիպում է նաև *Hijašuwanta*-ի մեջ, որտեղ առկա է խեթերենի -wanta ածանցը և այլն (16):

Գ. Ջահուկյանը նույնպես գտնում է, որ Նայասա անվան մեջ առկա է խեթերենի ածականակերպ -aša ածանցը (27, էջ 69): Նեղիսակը հայասերները գեղակցորեն կապում է հին հնդեվրոպական (26), փոքրասիական (76) լեզուների և ապա հայերենի հետ (27):

Սակայն ինչ ծագում ունի հայ արմատը: Այն խեթերենում չի հանդիպում, հեփուրաբար այդ լեզվի նյութով չենք կարող բացատրել: Ուրևան խեթերը օտար արմատին, որը հարևան ժողովրդի ինքնանունն է, ավելացրել են իրենց ածանցը: Մի բան, որ լեզուներում շարք փարսածված երևույթ է (հմմտ. ռուս-Ռուսաստան): Այս անունը մեր ժողովրդի ինքնանունը լինելուց բացի հայերենում գործուն հիմք է բազմաթիվ հին և նոր կազմությունների համար (հմմտ. հայել «նայել», հայելի, հայացք, հայեկ «նավի դիտանոց» և այլն): Դրանից բացի այն հանդիպում է մի շարք հայկական հին փեղանունների մեջ և մտարևազույց անուն փեղանքի երևացող, փեսանեյի լինելը՝ շրջակայքի համեմատ: Ինչու չի կարելի մտածել, որ լեռնաշխարհն էլ փեսանեյի է բոլոր կողմերից և կարող էր շարք հնում կոչվել հայ, որից էլ առաջանար ժողովրդի անունը: Այս փեսակերպի օգտին է խոսում նաև լեռնաշխարհի երկրների աստուրական Նաիրի անվանումը՝ «լեռնաշխարհ» իմաստով (փես ստորև):

Նայասայի նահանգներն են եղել, ինչպես վերը նշվեց, Ազին, Կումախան («Բարձր»), Իսուվան, Պախուվան և Ծոխման:

Ազին (*Azzi*), կարծում ենք, որպես փեղանուն կազմված է հայ. հ.-ն. ազ- (հմմ. ազազիլ «չորանալ») արմատից, որն առկա է Բարձր Նայքի և Գողթի Ազա, Սպերի Ազանց, Դիարբեքի Ազիք, Սղերդի Ազին և միջնադարի այլ հայկական փեղանունների մեջ:

Կումախան (*Kumakhha*), որը հանդիպում է նաև Կումախանու ձևով և հայկա-

կան Կամախն է, կարծում ենք, կազմված է հայ. կամախ «ընձա» արմապից (հմմ. Կամախ. գյուղ Բիթլիսի շրջանում, Կամախ՝ բերդ Տայբում և այլն):

Ի դեպ, այդ փրկանունը ունակ բխեցնում են կմախ բառից՝ պապճառաբանելով, որ Արշակունիների գերեզմանոցն այնպեղ է. Լոկ (32, էջ 49-50): Իսկ չէ՞ որ դա շատ ավելի ուշ ժամանակի փաստ է. և կապ չունի մ. թ. ա. XIV դարի հետ:

Իսուվա անունը (Isawa), ինչպես առաջարկում է Ի. Դյակոնովը, կազմված է ուրարտերենի isani «այն կողմ» արմապից և խոտիերենի -we ամանցից (29, էջ 86): Նախ, ուրարտացիների համար այդ երկիրը գետի (փվյալ դեպքում Եփրատի) ոչ թե այն, այլ ճիշտ հակառակ՝ այս կողմում էր: Առավել նս, որ նրանք այն կոչում էին ոչ թե Իշուվա, որև, իբր, ուրարտերեն է, այլ Ծուպակի: Իսկ վերջինս հայկական Ծոփք անվան ուրարտական հորջորջումն է:

Այն կազմված է հայերենի ծուպ «երիզ» արմապից: Եվ, իրոք, այդ ևսահանգը կորարված է Արածանիի և Եփրատի վտակներով: Նայկական լեռնաշխարհում այս արմաքով կան այլ փրկանուններ (հմմ. Ծուպ՝ գյուղ Գուգարքում, Ծուպիս՝ բերդ Բյուրակնի լեռներում և այլն):

Ինչ վերաբերում է Իսուվա և Սոֆենե հորջորջումներին, ապա դրանք օգտար ձևեր են:

Պախուվան (Pakhwa), ուշ միջնադարի հայկական Պահ-արկանի (67, բարբեզ) և ժամանակակից Պախի հետ է նույնանում: Նայկական ձևում կարելի է առանձնացնել պահ «պահպանություն» և արկ «արկանել, ձգել» արմաքներից, որոնք իրանական ծագում ունեն և նշանակում են «պահ լրված, պահպանված»: Նայասայի բնակիչները դրանք կարող էին վերցնել հին իրանական լեզուներից: Իսկ խեթերը այդ անվան վրա ավելացրել են իրենց -uwa ամանքը (հմմ. Պահու բերդ՝ Բաղքում, Պահավանք՝ Ծմակում և այլն):

Ծոխմա ևսահանգի անունը (Zuxma), որը հանդիպում է նաև Ծոխասպա ձևով, կարծում ենք, կազմված է հայերենի ծուխ արմապից (հմմ. խեթ. տհս (wa) i, ծուխ, 75, էջ 314), որի վրա խեթերը ավելացրել են մի դեպքում -ma ամանքը, մյուսում քա «այն կողմ» բառը (հմմ. Ծխիլ՝ գյուղ Թորթումի, Ծխառ՝ Մուշի, Ծխակերպ՝ Բասենի գավառներում, Ծխանխաք՝ բերդ Ծիրակում և այլն, հմմ. 35, էջ 89):

Անդրադառնակք Նայասա երկրի բաղաբանների ու բնակավայրերի անունների սպուգաբանություններին:

Արձիյան (Arzija, հայկ. Արձն), կարծում ենք, կազմված է հայերենի հեղեղ-բուրական նախալեզվից եկող արձ-նախասպես «սպիտակ» նշանակող արմապից, որը հանդիպում է Բագրևանդի Արձակ, Կոզովիսի Արձաի, Վանի Արձկն և այլ հին գյուղերի անունների մեջ:

Խախան (Hahha, հայկ. Խախ) բաղկացած է հայ. խախ «չոր» բառից, որն առկա է Թորթումի Խախու, Նախիջևանի Խախ, Օլթիի Խախկերպ և այլ հին փրկանուններում (հմմ. Չորակ, գյուղ):

Ինգալավան (Ingalawa, հայկ. Նիգալ), հավանաբար կազմված է հայ. հ.-և. նիգ «դռան եզրի սողնակ» և ալ-ք «խորք, խորունկ փեղ» արմաքներից: Խև-

թերը կրանում ի հեջյունը դրափոխել են՝ ավելացնելով իրենց լեզվի -awa (r) ամանցը: Իրոք, Նիզպը ճորոխի սյորին հովկրում է եղել, որը խոր կիրճերով հարուստ է (հմմ. Նիզ գավառ՝ ժմկ. Արագածի շրջան, Այ՝ գյուղ Ջանգեզուրի և Արդահանի):

Ծանծալիյան (հմմ. Ծանծալ՝ գյուղ Բասենում), թերևս, բաղկացած է հայ. ծանծաղ «ոչ խոր» (չրի, հողի համար) արմարից և -եա ամանցից:

Կանուվարան (Kannuwara, հայկ. Կան) իր հիմքում ունի հայ. կան «ոլորք, պտույտ, շրջան» արմարը, որի վրա խեթերը ավելացրել են - awar (a) ամանցը: Այն հանդիպում է Սպերի, Արդահանի, Սյունիքի Կան հին բնակավայրերի անունների մեջ և վկայում է փեղում գեպի ոլորանի առկայության մասին:

Պալիսնան (Pališna, հայ. Պալունիք) պարունակում է հայ. հնդեվրոպական նախալեզվից եկող պալ «բարածայր» բառը, որի վրա խեթերն ավելացրել են - isna (<-isar) մասնիկը:

Ուրա փեղանունը (Ura, հայ. Ուրեն) իր մեջ ունի հայ. ուռ «ճյուղ, ընծյուղ» սցմապը, որը հանդիպում է Վայոց ձորի Ուրիկ, Ծղուկի Ուռական, Ծիրակի Ուռուտ միջնադարյան բնակավայրերի անուններում:

Խալիմանա (Halimana, հայ. Մանյա այրք) բաղկացած է հայ. ման «պտույտ, ոլորք, գալար» բառից, որի վրա ավելացված է խեթերենի hali «պահակ» բաղադրիչը (26, էջ 73): Այն կրկնվում է ճորոխի ավազանի Մանս և Սյունիքի Մանաշ ու միջնադարի փեղանունների մեջ:

Բիլեյարիգան (Bittejariga, հայ. Բթայարիճ) կազմված է հայ. հ.-ե. բուլթ «հաստ, գուլ, թավ» և առիճ «գյուղ, շեն» արմարներից: Այն հիշեցնում է Վասպուրականի Բուր և Բայազետի Բութակ գյուղերի անունները:

Արավանա երկրի անունը (Arawanna, հայ. Արավանյանք նախարարական փուն), կարծում ենք, բաղկացած է իրանական լեզուներից վաղ շրջանում փոխառված արվան «բնակավայր, բնակություն» բառից և առ «կողքին, դեմը, առջև» նախդիրից: Այն հանդիպում է Նիկոն գավառի Արավան հին փեղանվան մեջ:

Գազու [...] (Grazu [...]), հայ. Գազ) բնակավայրի անունը, կարելի է ենթադրել, որ հիմքում ունի հայ. գազ «աքցան» արմարը, որը կրկնվում է Բիթլիսի և Խոփրոցուրի Գազեր, Ալաշկերտի Գազգազք, Սասունի ու Վանի Գազիկ փեղանունների մեջ: Նևարավոր է, որ դրանք այդպես կոչվել են փեղի բնական պաշտպանվածության հետևանքով:

Չազիսան (Zaziša, հայկ. Չազա) կազմված է հայ. հ.-ե. ազ- բայարմարից (հմմ. ազազել «չորացնել») գրաբարյան գ- նախդիրի հավելմամբ: Իսկ -isa-ն խեթերի կողմից ավելացված ամանց է:

Այս նախդիրը հաճախ է հանդիպում հայկական փեղանուններում, ինչպես՝ Չակոսակոս (գյուղ Վանի նահանգում), Չերվանդանց < Երվանդ (գյուղ Վանի գավառում):

Սյունիքի վանքներից մեկի՝ Տաթևի անունը հանդիպում է նաև Ըսփաթև (գՏաթև) ձևով: Չազա անունով բնակավայրեր եղել են Վանի շրջանում, Բու-

բերդում, Սերասափայում և այլն:

Տայասայի Արնիա (Arnia) բնակավայրը, կարծում ենք, Սպերի շրջանի Առնուս է: Նրա անվան մեջ բացի խեթերի կողմից ավելացված -ia մասնիկից, առկա է հայ. հնդեվրոպական ծագմամբ առն «վայրի խոյ» արմարը: Այն հիշեցնում է Գեղարթունիքի Առնեղ, Ծաղկոսի Առնիկ, Վասպուրականի և Խնուսի Առնիս հին փեղանունները:

Արիպաս (Aripša, ուշ Արաբ-կալե) կարելի է համեմատել հայ. առ «կողքին, առջև» ևսխդիի և ալի արմարի հետ: Այսպիսի ստորգնաբանության օգտին է խոսում այդ բնակավայրի ջրով շրջապարված լինելու հանգամանքը, որի մասին վկայում են խեթական սեպագիր աղբյուրները: Տևարավոր է, որ այն կոչվել է *Առախս, իսկ օտար հորջորջմամբ՝ Արիպաս (հմմ. Ախուրյանի շրջանի Առափի, Մակուի Առափ-լար, Բորչալուի Առափ-լը փեղանունները):

Դուկամա (Dukkamma, Duggama, Dukkamana) բաղաբի անունը Գ. Զահուկյանը բիւցնում է խեթերենի dukk-//dugg- «պեսսանելի լինել» բայարմարից (75, էջ 335): Կարծում ենք, նրանում առկա է -ama (r) (-awar)՝ բայսահմբերից գոյական կազմող խեթական ածանցը, որը բառերի տրական հոլովաձևում դառնում է -amana. Դուկաման Թորթումի շրջանի պատմական Տայ գյուղի անվան խեթերեն թարգմանությունն է:

Դանկուվան (Dankuwa) խեթերենի dankui «մութ» բառի տրական-փեղական հոլովաձևն է: Այն Երզնկայի շրջանի միջնադարի հայկական Մթնի բնակավայրի անվան խեթերեն թարգմանությունն է: Մթնին հայերենում ունի նույն իմաստը (մութ և -նի ածանց):

Արիսիտան (Arhita) խեթերենի arha «սահման» բառի գործիական հոլովաձևն է: Այն, կարծում ենք, պարսկական Տաշտյանք գավառի Երիզա ավանի անվան (հմմ. հայ. երեզ «եզր») թարգմանությունն է:

Խալմեսան (Halmešna) խեթերենի halmeša «երգ» բառի տրական-փեղական հոլովաձևն է, որն իր հերթին Դերսիմի պատմական Երզնեռն գյուղի անվան թարգմանությունն է:

Արջին ջրս բնակավայրերը գտնվել են ոչ թե Խալսիի, այլ Տայասա երկրի տարածքում: Ուրեմն խեթերը թարգմանել են օտար փեղանուններ, որոնք ըստ էության հայկական են:

Գիսնականները փարբեր փեսակներն են հայրենի Տայասայի դիցանունների մասին:

Ուգուրը Ի. Դյակոնովի կարծիքով գրված է շումերերեն գաղափարագրերով (Ս. GUR), ուստի նրա բուն անունը հայտնի չէ (27, էջ 213): Շումերերենում, սակայն, նման գաղափարագրեր չկան: Ավելին, խեթական սեպագիր աղբյուրներում հանդիպում է U-uk-ku-ra անձնանուն գրված վանկերով: Ուրեմն Ուգուրը նույնպես հնչյունագրով է արտահայտված:

Գ. Ղափանցյանը այն կապում է հայ. ոգոր-իլ «կովել, մարտնչել» բայարմարի հետ (32, էջ 90-91):

Խերթական Սուպիլուիումաս I թագավորի՝ Նայասայի հեպ կերթսմ դաշնագրում այդ երկրի ասարվածների անունների ցուցակի մեջ Ուգուրը գրավում է առաջին տեղը: Սովորաբար հին արևելյան այդ կարգի գանկերում նշված փեղր միշտ զբաղեցնում է ամպրոպի ասարծու անունը: Ուստի Գ. Ղափանցյանի սարագաբանությունը համոզիչ է:

Տերիտիտունի (Teritituni) ասարծու անունը Գ. Ղափանցյանը համեմատում է խեթ. *teri* «երևթ» և հայ. **տրուրն** (տրուն) արմատների հեպ (32, էջ 94): Սակայն Գ. Ջահուկյանը նշում է, որ մեկ անունը երկու լեզուների բառամթերքով չէր կարող կազմվել (75, էջ 329):

Կարծում ենք, խնդրո առարկա անվան մեջ առաջին բաղադրիչը հայ. **տիր** «խիստ, պինդ» արմատն է:

Ունագաստայի (Unagasta) անունը Գ. Ղափանցյանը գտնում է, որ բաղկացած է հայ. **ունակ** «ընդունակ» բառից և **-աստ** ածանցից: Կարելի է ենթադրել, որ այդ անվան երկրորդ բաղադրիչը ոչ թե **-աստ** ածանցն է, այլ հայ. **աստանել** «քննել» բայի **աստ-** արմատն է: Նեպեսբար այն նշանակում է «ունակ քննիչ», որը և հարկանշական է ասարծու համար:

Բալտայիկը (Baltaik) կարելի է բխեցնել հայ. հնդեվրոպական ծնագումով **բալ** «մեզ, մշուշ» արմատից, որին ավելացել է **-իկ** ածանցը:

Ջակակին (Zakka[ni]), կարծում ենք, հայ. գակունի «հողմաշապ վայր» բառն է:

Ուշադրության են արժանի նաև Նայասայի Մարիյա, կարանի, Խուկանսա թագավորների և Դուկանսա թագաբի առաջնորդ Ախիյայի անունները:

Գ. Ջահուկյանը Մարիյան (Marija) համարում է հնդեվրոպական և համեմատում է իռլանդերենի *mar* և սլավոնական - *мер* (Вѣстимерь), արմատների հեպ (75, էջ 326-327): Պետք է ավելացնել, որ **մար** հայերենում նշանակում է «տեր», որը, սակայն, Ն. Աճառյանը համարում է ասորական փոխառություն: Այնինչ հին սեմական լեզուներում (օրինակ, ասսուրերենում) մարը այդ իմաստը չունի, այն նշանակում է «որդի» (31, էջ 112): Ուստի ասորերենը այն ձևք է բերել հերթագայում փոխառելով հայերենից: Այդ են վկայում նաև արմատի վերջի նշված հնդեվրոպական զուգահեռները: Ի դեպ, խեթերենում այդ արմատը չի հանդիպում: Նեպեսբար Մարիյան կազմված է հայ. **մար** հնդեվրոպական արմատից և **-եայ** ածանցից: Մարիյա անունը դարձել է Նայասայի հաջորդ թագավորների համար տիրոջ (տես ստորև):

Կարանի անունը (Karanni) Գ. Ղափանցյանը բխեցնում է խոտիերենի *kar* արմատից, որի իմաստը հայտնի չէ (32, էջ 67-69): Գ. Ջահուկյանը այն համեմատում է մի շարք հին հնդեվրոպական լեզուների համապատասխան արմատների հեպ (75, էջ 326): Կարծում ենք, Կարանի անունը կազմված է հայ. **կար** «պետք» արմատից և **-անի** ածականակերպ ածանցից:

Խուկանայի անունը (Hukkanna) Գ. Ղափանցյանը համեմատում է հայ. **խուկ** «խորհուրդ, մտածություն» արմատի հեպ, որին ավելացվել է **-ան** մասնիկը (32, էջ 71): Այն հիշեցնում է միջնադարի հայկական Շնորհք, Իմաստան, Խելոք

անձնանունները:

Անիյան (Aniija) Գ. Ղափանցյանը բաղդատում է խուռիերեն Անիյա անձնանվան հեյր (32, էջ 73): Ն. Աճառյանը Անձնանունների բառարանում բերում է Անիա անհայր ծագումով մի անուն, որը եւս համեմատում է Անի րեղանվան հեյր:

Կարծում ենք, Անիյա անվան մեջ առկա է հայ. անիացեալ «խնամյալ» բայի **անի-** արմատը և նույն լեզվի **-եայ** ամասնը:

Աիսիյան (Aišiya), կարելի է ենթադրել, որ բաղկացած է հայ հեթանոսական **Այս** դիցանունից, և **-եայ** ամասնից (հմմ. հայ. **այս** «քամի, հողմ»):

Վերև ասվածից կանրի է եզրակացնել, որ Տայասա երկրի բնակիչների ինքնանվանումը եղել է **հայ.** իսկ լեզուն՝ հայերեն: Այդ են վկայում եւս Տայասայի հայրուկ անունների վերը նշված ստուգաբանությունները:

3. Տայասա թագավորության ռազմաքաղաքական պատմությունը

19. Պախուվայի բանակը այդպեղ նույնպես ձեր բանակի հեպ թող շարժվի: Ձեզ համար օգնության գործ նույնպես [կլինի]:

20. Օգնության գործի դեպքում ինչպես դուք պետք է առաջ խոյանաք, նույնպես էլ պախուվացիները պետք է առաջ [խոյանան]:

21. Ով Արևայինիս թշնամի է, պախուվացիների համար նրանք նույնպես թող թշնամի համարվեն: Իսկ թշնամի սուրհանդակ,

22. թշնամու պատկանող սուրհանդակ նրանք իրենց դարպասի մոտ չպետք է թողնեն: Երբ թշնամին ձեզ այդպեղ սուրհանդակ ուղարկի,

23. նրանք դրան պետք է Արևայինիս մոտ ուղարկեն: Իսկ դրանից հեպո նրա հեպ ինքնուրույն չպետք է վարվել» (14, XXIII, 72):

Արևուվանդասը պահանջում է, որ Իսովա, Պախուվա, Ծուխամ և Կումախա գավառները Խապի պետությանը ամեն փարի պետք է գինվորներ փան: Տեղերում նրանց գինվորական սպորաբաժանումները պարտավոր են միասնական լինել Ախիյայի բանակի հեպ, որպեսզի ռազմական օգնության կարիք զգացվելու դեպքում գործավիզ լինեն Խապի պետությանը: Այդ բոլորից զար խեթական թագավորը պահանջում է դաշնակցից, որ ևս փեղում ոչ մի այլ երկրի ներկայացուցիչ չպետք է ընդունի և նրա հեպ բանակից: Այսինքն ևս զրկում է դաշնակցին ինքնուրույն քաղաքականություն վարելու իրավունքից:

Արևուվանդաս III-ը նաև պահանջում է.

11, 62. «Եվ այն թշնամին, ով քաղաք է գալիս պայմանագիր կնքելու համար, նրան բերեք Խապի երկիր:

63. Խուռի երկրներ չպետք է առաջնորդեք նրան: Եվ այդ երկրներում Խապի-ից [անկախ ապաստան]ներում նրան թույլ չտաք:

64. Դրա մասին նրան չպետք է հայտնեք» (14, XXIII, 72):

Խեթական արքան պահանջում է Ախիյայից՝ Ազիի փիրակալից, որ եթե նրան ներկայանան այլ երկրների բանագնացներ, նրանց հեպ ոչ միայն չպետք է բանակցություններ վարի, այլև պարտավոր է նրանց ուղարկել Խապի և ոչ Խուռի երկրներ:

Պախուվայի մասին Արևուվանդասը դաշնագրում կշում է.

11, 27. «Նեպո Պախուվայի մարդկանցից որ օրը թշնամական խոսք լսեք, այն [օրը]

28. եկեք. Պախուվայի վրա հարձակվեք: Անմիջապես հարձակվեք, քանի դեռ Արևայինիս բանակը [չի հասել]:

29. Ձեր ձեռքով պախուվացիների արյունը անմիջապես թափեցեք» (փես նույն փեղում):

Այնուհայր է, որ խեթական թագավորը զգուշանում է Պախուվայից՝ ենթադրելով այնպեղ ապստամբության նոր բռնկում: Նա պահանջում է Ազիի առաջնորդից, որ Ախիյան նման դեպքերում ճշի Խապիի դեմ ամեն մի ընդվզում:

Խեթական թագավորը պարտադրում նրան նույնպիսի վերաբերմունք է ցուցաբերել հայկական մյուս նահանգների նկատմամբ, եթե նրանք ըմբոսպանան:

11, 36. «Ավագները Իսուվա երկրի, ավագները Պախուվա երկրի, ավագները Ծուխմա երկրի, ավագները Կումախա երկրի,

37. Մալդիա քաղաքի ավագները..... ,

38. նրանք բոլորը իմ ծառաներն են: Նրանցից ով Արևայինիս դեմ, մեծ թագուհու, [թագավորի] որդիների, թոռի, ծոռի դեմ,

39. [թագավորի եղբայրների], թագավորի թոռների, թոռ ու ծոռի դեմ, [Արևայինիս] և Խապիի դեմ իր [երկրում]

40. [ապստամբի], ես ձեզ համար թող թշնամի դառնա: Տեղում նրա դեմ անմիջապես կռվեցեք:

41. [Եթե] ձեր բերանը չի բաց[վում] և [ձեր] պոռնակիցին, ցեղակիցին [չէք սաստում....]» (14, XXIII, 72):

Եթե Ախիյան Ազիի փիրակալը, չճնշի Իսուվա, Պախուվա, Ծուխմա և Կումախա նահանգների ապստամբներին, հաշվի առնելով դրանց պոռնակից ու ցեղակից լինելու հանգամանքը, ապա կհամարվի Խապիի թշնամի:

Այդ բոլորի փոխարեն խեթական թագավորը դաշնակցին համարյա ոչինչ չի խոստանում:

11, 63..... «Եթե հեկտ մեկը ձեր երկրի դ[եմ դուրս] գա,

64. և Արևայինիս հեկտոսն բանակը, մարտակառքերը դեռ հասած չլինեն, դուք ձեր այդ թշնամու

65. արյունը [սևիս]պաղ թափեցեք: Իսկ երբ Արևայինի հեկտոսն գիևվորները, [մարտակառքերը] հասած չլինեն,

66. հենց ձեզ մոտ Խապի երկրի օգնականներ կլ[ինեն, նրանց հեկ միասին] պեպք է կռվեք» (14, XXIII, 72):

Խեթական թագավորը խոստանում է Ախիյային, իբր, զորքով օգնել, եթե նրա երկրի վրա թշնամի հարձակվի: Սակայն խեթական բանակի հապաղելու դեպքում Ախիյան պեպք է փեղի կայազորների օգնությամբ հակահարված քա հակառակորդին:

Հայկական լեռնաշխարհով անցնող առևտրական ճանապարհների ապահովության մասին այդ վավերագրում կարդում ենք.

11, 54. «ճանապարհին կնոջ, փղամարդու, աղջկա նկատմամբ՝ ոչ մեկի նկատմամբ բռնություն չպեպք է հանդես բեր[եք]: Նրան չպեպք է վնաս] քաք:

55. Քանի որ դուք եք երթնելու ճանապարհով, փղամարդու, կնոջ, փղայի, աղջկա, ծառայի, սպասավորուհու, եգ, կով, ձ[ի, ջո]րի, էշ, այծ, ոսկի,

56. բրոնզ, պղինձ ոչ ոք չպեպք է գողանա: Իսկ փախստականի և [գողի], ով այդտեղ

57. գա, լինի կա ազապ, լինի սպրուկ, սպրկուհի, նրան բռնեցեք, նրան ներկայացրեք] Արևայինիս» (փես նույն փեքստում):

Ազի երկրի փիրակալը պարտավոր է հսկողություն սահմանել լեռնաշխարհի

ճանապարհների վրա: Երեթեկողները պետք է ամեն փեսակեպից ապահով լինեն, նրանց նկատմամբ բռնություն չպետք է լինի: Այդ բոլորը իր հերթին նշանակում է, որ մ. թ. ա. XIII դարում Հայկական լեռնաշխարհի ճանապարհներով կապարվում էր աշխույժ առեփուր Փոքր Ասիայի, Ասորեստանի և Իրանական բարձրավանդակի ու Կովկասի երկրների միջև: Դրանք անցնում էին ինչպես Արամանիի, այնպես էլ Ճորոխի ավազաններով ու Եփրատի վերին հովիտով:

Ամփոփելով վերը շարադրածը կարելի է եզրակացնել, որ մ. թ. ա. XIII դարի վերջին քառորդում Հայասա թագավորությունը վերափին դառնում է Խապի պետությանը ենթակա: Այն ամփոփվում է Ճորոխի ավազանի սահմաններում և կրում է որոշ պարտավորություններ, որոնց համաձայն հայկական Իսուվա (Շուփթ), Պախուվա (Բյուրակնի լեռների արևմտյան շրջաններ), Շուխմա (նույն լեռների արևելյան գավառներ) և Կումախա (Եփրատի հովիտի՝ ակունքներից մինչև ոլորան) նահանգների գործափոխումները Ազիի բանակի հետ միասնական պետք է լինեն: Նրանք բոլորը Խապի պետությանը հարկ եղած դեպքում պետք է օգնության հասնեն և ամեն փարի զինվորներ ու մարտակառքեր ուղարկեն Խապուսա:

Ազիից բացի հայկական այդ նահանգները խեթական թագավորին նաև նվերների ձևով պետք է հարկ փան:

Սակայն որքանով է Ախիյան կապարել այդ պարտականությունները, կամ մինչև երբ է դա ուժի մեջ եղել, մեզ հայտնի չէ:

Այս դաշնագրից բացի փվյալ ժամանակաշրջանին վերաբերող սեպագիր աղբյուրներում մենք որևէ այլ փեղեկություն չենք գտել Հայասայի մասին:

Շուփով, մ. թ. ա. XII դարի սկզբներին Խեթական թագավորությունը կործանվում է Փոքր Ասիա ներթափանցած և Միգիայում հաստատված թրակափոյուզիական ցեղերի հարձակումների հետևանքով:

Այդ ցեղերի մի մասը մ. թ. ա. 1165 թվին, ներթափանցելով Հայկական լեռնաշխարհ, կործանում է նաև Հայասա թագավորությունը, որն այդ ժամանակ խիստ թուլացած էր (փես վերը): Խեթերի մեծ մասը Հալիս (Ժմկ. Կըզըլ-Իրմակ) գետի ավազանից փեղահան է լինում՝ ապաստան գտնելով մասամբ հարավարևելյան Փոքր Ասիայում, մասամբ էլ հյուսիսային Սիրիայում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ Մ. Թ. Ա. XII ԴԱՐՈՒՄ

(Նաիրի երկրներ)

Մ. թ. ա. XII դարի Հայկական լեռնաշխարհի մասին փեղեկություններ հանդիպում են միայն Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ի (մ. թ. ա. 1115-1077 թթ.) սեպագիր արձանագրություններում: Դրանք վերաբերում են նշված փարաձաշրջանի արևմտյան հատվածում այդ տիրակալի մ. թ. ա. 1112 թ. նվաճումներին, որոնց կապակցությամբ հիշատակվում են Նաիրի 23 երկրների և 17 լեռնաշղթաների անուններ:

1. Նաիրի երկրների փարաձքը

Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ը, մ. թ. ա. 1115-1113 թթ. նվաճելով Տիգրիսի վերին ավազանի խոռոչական երկրները, մ. թ. ա. 1112 թ. գործով մուտք է գործում Նաիրի, որի սահմանների մասին նրա՝ Յոնջալույում թողած սեպագիր արձանագրության մեջ կարդում ենք. «Թիգլաթպալասարը, հզոր թագավորը, աշխարհի թագավորը, Ասորեստանի թագավորը, աշխարհի չորս կողմերի թագավորը, հնազանդեցնողը Նաիրի երկրների՝ Տումմեից մինչև Դայանի, հնազանդեցնողը Խարխի երկրի՝ մինչև Մեծ ծով» (28, N 17):

Տումմե երկիրը, գտնվում ենք, որ ուրարտական սեպագիր աղբյուրներում վկայված Տումմեիշկին է՝ հայկական Թմնիս բնակավայրը՝ իր շրջանով, Եփրատ գետի ափին՝ Հայկական Տավրոս լեռների ծայր արևմտյան փեշին: Իսկ Դայանի երկիրը, ինչպես հայտնի է, հայկական Տայք նահանգն է Ճորոխի ավազանում:

Խարխի երկիրը գտնվել է Ջերմ գետի (ժմկ. Բոհրան) հարավային ավազանում: Իսկ «Մեծ» ծովը Սև ծովն է (46, էջ 64, 29, էջ 125-124 և 19, էջ 39-42): Ուրեմն Նաիրի երկրները գտնվել են Բոհրան գետի (Վասա լճից քիչ հարավ), Եփրատի (Մալաթիայից մինչև ոլորան), Սև ծովի միջև:

Անու և Ադադ աստվածների համար փաճար կառուցելու կապակցությամբ գրված Թիգլաթպալասարի սեպագիր աղբյուրում Նաիրի երկրների սահմանների մասին նշվում է. «Երրորդ անգամ ես գնացի Նաիրի երկրների դեմ, նվաճեցի լայնածավալ Նաիրի երկրները՝ Տումմեից մինչև Դայա(ե)նի, Խիմուվա երկիրը, Պաիպերին և Խարխին» (28, N 11):

Խիմուվա երկիրը մասնագետները ենթադրում են, որ գտնվել է Իսուվայի (Շոփթ) և Թեգարամայի (ժմկ. Գյուրունի շրջան՝ Մալաթիայից քիչ հյուսիս)

հարևանությամբ ինչ-որ փեղ՝ Եփրատի ոլորանին առընթեր (21, էջ 229):

Պափարթին, կարծում ենք, կարելի է նույնացնել 1912 թ. Կովկասյան ռազմական շքարթի ռուսական բարբելում նշված Նայկական Պար լեռների միջին մասի Պայդերաս բնակավայրի և նրա շրջանի հեպ: Մեր այս նույնացումը, թեքնա, հաստատվում է նրանով, որ Ասորեստանի թագավորը, փաստորեն, նշում է Նաիրի երկրների սահմանները: Տումման գրեկվ է այդ փարսաձքի հարավարևմտյան սահմանին, Դայա(և)նին՝ հյուսիս-արևելքում, Խարխի երկիրը՝ հարավում, Խիմուվան՝ արևմուտքում, իսկ Պափարթին՝ արեկեքում:

Ասորեստանի թագավորը Նաիրի երկրներում, որոնք ընկած են եղել Բոհրան գետի, Սև ծովի, Եփրատ գետի և հայկական Տավրոս լեռների միջև, հիշատակում է 16 լեռնաշղթաների անուններ: Դրանք են՝ Էլամա, Ամադանա, Էլխիշ, Շերաբեյի, Թարխունա, Թիրկախույի, Կիզրա, Թարխանաբե, Էրուա, Խաշթարան, Շախիշարա, Ուբերա, Միլիադրունի, Շուլիանգի, Նուբանաշև և Շեշև (28, N 10):

Պարզելու համար, թե այդ անուններից յուրաքանչյուրը որ լեռնաշղթային է վերաբերում, աստորական սեպագիր աղբյուրների սուղ փեղեկությունները հաշվի առնելով՝ հեփազոպողները աշխատում են գտնել նաև դրանց հեփազայի համարժեքները:

Մենք հակված ենք Էլաման համեմատելու Էլամունիի հեպ, որը ժամանակակից Խաբյարի լեռնաշղթայի մի գագաթի անունն է եղել՝ հիշատակված Թիգլաթպալասարին վերաբերող մեկ այլ սեպագիր աղբյուրում (21, էջ 253): Ուստի, կարծում ենք, Էլաման Խաբյարի լեռնաշղթայի հին անունն է: Ամադանա լեռնաշղթան, հավանաբար, Աշտուրեմիթրապալ II-ի փարեգրության մեջ հիշատակված Ամադանի սարերն են, որոնք գրեկվել են ժամանակակից Մադենի լեռնանցքի մի կողմում (28, N 23 և 21, էջ 24): Դա Նայկական Տավրոսի արևմտյան հարվածն է՝ այդ լեռնանցքից մինչև Եփրատ գետ:

Էլխիշի կապակցությամբ Ն. Նարությունյանը ուշադրություն է հրավիրում Մանագլեթրից հյուսիս Էլխիս անունով մի հին բնակավայրի անվան վրա (21, էջ 255): Դա նույն Էլքիս գյուղն է՝ Խնուսի շրջանում, Բյուրակնի լեռնաշղթայի լանջին: Ուրեմն, Էլխիշը Բյուրակնի հին անունն է: Էրուան հիշեցնում է Նայկական Տավրոսի արևելյան հարվածի Էրուա հին բնակավայրը: Ուրեմն այն նշված լեռնաշղթայի այդ մասի անունն է եղել: Թարխունա անունով մի գյուղ գրեկվ է ժամանակակից Կարգարազար լեռների փեշին: Դա հուշում է, որ Տարխունան Կարգարազարի անունն է: Վանա և Ուրմիա լճերի միջև հյուսիսից հարավ ձգվող Կոփորի լեռնաշղթայի լանջերին գրեկվ է Թարխան անունով մի գյուղ: Կարծում ենք՝ Թարխանաբեն նույնանուն է՝ Կոփորի լեռնաշղթայի հեպ: Արսիանի լեռների փեշերից մեկի վրա եղել է Շակիար անունով մի բնակավայր: Նավանաբար Թիգլաթպալասար I-ի հիշատակված Շախիշարան հենց այդ լեռներն են: Իսկ Երգրումի հարավի հին Շողանի լեռան անունը նեթադրել է փայխ, որ Շուլիանգին Կարեռ լեռներն են: Կիզրան, կարծում ենք, ժամանակակից Ալախյուզեթեր լեռնաշղթան է, որի ամենաարածք գագաթն ալաթը էլ կոչվում է Գիսոր:

Նայկական Պարի միջին մասում գրվել է խառնար բնակավայրը: Գուցե այդ լեռնաշղթան Թիզլաթայալասարի հիշարարկած խառնարանն է: Միլիադրունին, թերևս, Ճորոխի միջին ավազանի՝ միջնադարի հայկական Մեղրաբուն լեռների անվան աստորական ձևն է: Կամայա քաղաքից 33 կմ. հարավ-արևմուտք գրվել է Թիրքիոխ անունով մի բնակավայր: Դա, կարծես, ցույց է տալիս, թե Թիրկաստուլին Մեծուրի լեռներն են: Շեշեն, ինչպես գրվում է Ն. Նարոթյունյանը, Բաթումից հարավ գրված Շավշերի լեռների անունն է (21, էջ 245):

Ատրեսպանի թագավոր Թիզլաթայալասար I-ը մ. թ. ա. 1112 թ. դեպի լեռնաշխարհի ձեռնարկած արշավանքի առիթով հիշարարկում է նաև Նաիրի 23 երկրների անուններ: Դրանք են՝ Թումմն, Թունուրե, Թուայի, Քինդարի, Ուզուլա, Ունգամունի, Անդիարե, Պիլակինի, Աթուրգինի, Կուլիբարգինի, Շինիրինի, Խիմուա, Պաիպերի, Ուիրամ, Շուրուրիա, Աբաէնի, Ադաէնի, Կիրինի, Ալբայա, Ուզինա, Նագարիա, Աբասիունի և Դայա(Լ)նի (28, Ո10):

Ինչպես վերը նշվեց, Թումմեն հենց Թմիսն է եղել իր շրջանով Եփրատի արևելյան ափին, Նայկական Տավրոսի ծայր արևմտյան փեջին: Խիմուան գրվել է Եփրատի ոլորանի շրջանում: Իսկ Պաիպերին հայկական Պար լեռնաշղթայի միջին հատվածի մի գավառ է եղել, որի անունը պահպանվել է. հետագայում փեղի Պայդերան բնակավայրի անվան մեջ:

Թունուրե երկիրը Ն. Ադունցը փեղադրում է Մադենի լեռնանցքից քիչ հյուսիս: Ուզուլան նա նույնացնում է Պալուի և Պադինի միջև գրված ժամանակակից Իսոլ գյուղի և նրա շրջանի հետ: Իսկ Նագարիա, Անդիարե և Շուրուրիա երկրների անունները հեղինակը համեմատում է հռոմեական ճանապարհացույցներում նշված ժամանակակից Մելագզերպի և Ուլքիլիսեի միջև գրված համապատասխան Նասաբի, Աբաբա և Սորուս կայանների հորջորջումների հետ: Ն. Ադունցը գրեում է, որ Սորուս հայկական Շորեր գյուղն է. իսկ Շինիրինի երկիրը՝ Բալուից հյուսիս գրված անտիկ ժամանակների Շինիրբա բնակավայրն է իր շրջանով (46, էջ 58-62):

Քինդարի երկիրը Ն. Նարոթյունյանը նույնացնում է ժամանակակից Կինդար բնակավայրի և նրա շրջանի հետ (27, էջ 110): Ն. Ադունցը Պիլակինի երկիրը փեղադրում է Պարդունուի քարտեզում քրված Բելիսան բնակավայրի և նրա շրջանի փարածքում, որը գրվել է խառնարի դաշտում (46, էջ 33):

Թուայի երկիրը, կարծում ենք, Կադզվանի շրջանն է, որի մասին հուշում է նշված փարածքի միջնադարի հայկական Թուայ բնակավայրի անունը:

Աթուրգինին, հավանաբար, կազմված է Ադդուրու լեռան (ժմկ. Էրջիչից անմիջապես հյուսիս) անունից, որի վրա ավելացված է խուռիերենի -(i)ոն անանցը: Ատրեսպանցիները քվյալ դեպքում օգտագործել են դրա խուռիական հորջորջումը: Նախարավոր է, որ Աթուրգինի երկիրը ժամանակակից Էրջիչի շրջանն է եղել:

Կուլիբարգինի երկիրը, թերևս, ընկած է եղել Զդի գետի վերին ավազանում: Դա փեղի պատմական Կողորերդ բնակավայրն է՝ իր շրջանով հանդերձ:

Ուիրամը, գուցե, Ռոմեա երկիրն է՝ Ուրմիս լճի արևմտյան ավազանում:

Աբաեկին հնարավոր է, որ գտնվել է Վանա լճի արևմտյան ափին: Դրա մասին է վկայում փեղի հիև Աբա գյուղի անունը:

Ադանին, թերևս, Մանազկերպի շրջանն է, որտեղ եղել է հին Ադա բնակավայրը:

Աբայա երկիրը, գուցե, Մուշի շրջանն է, որի Ադրանիս բնակավայրի անվան մեջ հայերենի **-անի** մասնիկը փոխարինված է ասորերենի **-ja** ամանցով:

Կիրիկի երկիրը ուսումնասիրողները փեղադրում են Կարիկի շրջանում նույնանունով դրանց անունները (21, էջ 111):

Այսպիսով, վերը բերված փեղագրական փվյալները նույնպես հաստատում են, որ Ատրեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ի հիշարակած Նաիրի երկրները գտնվել են Բոհրան գետի (Վանա լճից քիչ հարավ), Սև ծովի և Եփրատի միջև արևելքում ձգվելով մինչև Կաղզվան:

2. Նաիրի երկրների ազգաբնակչությունը

Նայքը, որը ինթական սեպագիր աղբյուրներում հիշարակված է Նայասա անունով, Ատրեստանի թագավոր Թուրուլթի-Նինուրթա I-ը կոչում է Նաիրի երկրներ, որոնք ընկած են եղել Նայկական Տավրոս լեռների, Եփրատ գետի և Սև ծովի միջև: Այդ փարամաշրջանի բնակիչները, ինչպես վերը պարզեցինք, հայեր են եղել:

Այդ են վկայում նաև Թիգլաթպալասար I-ի հիշարակած Նաիրի երկրների և լեռնաշղթաների անունների սպուգաբանությունները: Ի. Դյակոնովի կարծիքով դրանք խոտիերեն բառեր են: Նեղիսակը այդ փեսակեպը հիմնավորում է այն փաստով, որ Աթուրգիևի, Կուլիբարգիևի, Աբաեևի և Ադանեի երկրների անուններում առկա է խոտիերենի **-ո** ամանցը (29, էջ 125):

Կարծում ենք, որ աստրեստանցիները փվյալ դեպքում գործածել են հարևան խոտիների օգտագործած՝ դրանց ձևերը, որոնց մեջ, բնականաբար, պետք է լինեն այդ ամանցը: Այդ փեղանունները խոտիերեն չեն, հերևարար, այդ փարամաշրջանը խոտիներով բնակեցված չի եղել, ինչը վկայում են փեղանունների սպուգաբանությունները:

Նաիրի երկրների լեռնաշղթաներից մեկը կոչվել է Էլամա (Elama): Կարծում ենք՝ այն կազմված է հայ. հնդեվրոպական ել «վեր բարձրանալը, զառիվեր» և ամ- (հմմ. ամալ «լցնել») արմատներից ու նշանակել է «զառիվեր լանջերով հարուստ»:

Այդ նույն ել և ուլ «վիզ, պարանոց» հ.-ն. արմատները մենք փեսնում ենք Էլուլա (Elula) լեռնաշղթայի անվան մեջ: Նավանարար, այն նշանակում է «զառիվեր պարանոցներով»:

Էլիսիշը (Elhisš, Բյուրակի լեռներ, հմմ. փեղի Էլիսի գյուղ), թերևս, բաղկացած է հայ. հ.-ե. ել «գառիվեր» և խիսպ (օտարները այդ անվան մեջ վերջին փ հնչյունը չեն ընկալել) բառերից ու կշակակում է «խիսպ գառիվեր» (հմմ. Ելան՝ լեռնազագագաթ Գեղամա լեռներում, Ելանի՝ լեռ Նախիջևանում):

Ամադանի (Amadani) լեռնաշղթայի անունը (Նայկական Տավրոսի արևմտյան հարված, հմմ. ժմկ. Մադեն գյուղ), գուցե, կազմված է հայ. հ.-ե. մապ «մոպ կամ առաջ գնալ» արմատից և -ան ամանցից, ինչը վկայում է լեռնանցքի գոյությունը: Դա ժամանակակից Մադենի լեռնանցքն է, որի մի կողմի լեռները կրել են այդ անունը:

Թարխունան (Tarhuna. ժմկ. Կարգաբազար լեռներ, հմմ. փեղի Թարխունի գյուղ), կարծում ենք, պարունակում է հայ. թարխ «նախագիծ, օրինակ, ուրվական բանդակների» բառը և -ուն ամանցը ու վկայում է լեռների ձևի մասին:

Թարխանաբե անունը (Tarhanabe. Կոպուրի լեռներ, հմմ. փեղի Թարխան գյուղ), հավանաբար, կազմված է այդ նույն թարխ արմատից և -ան ամանցից:

Շախիշարան (šahišara. Արսիանի լեռներ, հմմ. փեղի Շակշիար գյուղ), գուցե, բաղկացած է հայ. շահ «պար. և շար «շարվածք» արմատներից ու ընդգծում է լեռնաշղթայի շարված պարի նմանվելու հատկանիշը:

Շուլիանզի (Šulianzi. Կարնո լեռներ, հմմ. փեղի Շողան լեռ), թերևս, պարունակում է հայ. շող արմատը և ներկայացնում է հին հայերենի *Շողեանց ենթադրվող ձևը:

Կիզրա լեռնաշղթայի անունը (Kizra կամ Kisra. ժմկ. Ալախյուզեբեր, հմմ. փեղի Քար գագաթ) կարելի է համեմատել հայ. կիզարեալ «նվազած» բայի արմատի հետ (հմմ. կէզ, կիզել):

Խաշտարուսեն (Haštarae. Նայկական պար, հմմ. փեղի Խաշտար գյուղ), գուցե, պարունակում է հայ. խաշն «ոչխարի հոփ» և դար «բարձրավանդակ» արմատներն ու վկայում է այդ լեռների ոչխարների համար հարուստ արոտավայրեր ունենալու մասին:

Միլիադրունի (Miliadruni), թերևս, միջևադարի հայկական Մեդրաբուն լեռնաշղթայի անվան աստորակական ձևն է (թ բաղաձայնը դարձել է դ և դրափոխվել):

Թիրկախուլի լեռնաշղթայի անունը (Tirkahuli, Մնձուրի լեռներ, հմմ. փեղի Թիրքիոխի գյուղ), կարծում ենք, բաղկացած է հայ. հ.-ե. թեր «կողմ», կախ «կախված» և ուլ «պարանոց» արմատներից:

Շերաբելի (Šerabeli), գուցե, կազմված է հայ. շառափ «լույս, փայլ» արմատից և -ելի ամանցից:

Երկրների անուններից Թումմեն (Tumme. հմմ. հայկ. Թմնիս գյուղ), հավանաբար, պարունակում է հայ. հ.-ե. թումբ «գեփի առաջ շինված պարեն» արմատը: Իրոք, Թմնիսը գտնվել է Նայկական Տավրոսի Եփրատ գեփին պարենշող հարվածում:

Թունուբեն (Tunube), գուցե, կազմված է հայ. թոն «անձրև» արմատից և

վկայում է այդ գավառի անձրևոտ լինելու մասին:

Թուալին (Tuali), կարելի է ենթադրել, որ բաղկացած է հայ. հ.-ե. թով «կախարդություն» արմարից և -ալի ամանցից ու հուշում է փեղի թովիչ բնություն ունենալու մասին (հմմ. Թու կամ Թով. գյուղ Վասպուրականում, Թով՝ Մյունիքում):

Անդիաբեն (Andiabe. հին Բայազետի գավառ, հմմ. փեղի Այնթափ գյուղ), գուցե, իր մեջ ունի հայ. այն «ակն, ակունք» և թափ «հափակ, խորք» արմարները:

Կուլիբարզինի (Kulibarzini) երկրի անունը, հավանաբար, պարունակում է հայ. հ.-ե. կող «լանջ» և բարձու «բարձր» արմարները: Ներագայում դրա համանուն կենտրոնը ժողովրդական սրուգաբանության հեղուկանքով կոչվել է Կողորբերդ (հմմ. Կողբ. գյուղ Կաղզվանում, Բարձան՝ Մուշի գավառում, Բարձանց Լոռիում):

Շինիրիրնին (Šinibirni), թերևս, կազմված է հայ. շեն «շինություն» և հ.-ե. բիր «մսհակ» արմարներից (հմմ. Բռնաշեն, գյուղ Սասունում, Վասպուրականում):

Շուրուրիան (Šururia. Այաղաղ լեռների շրջան, հմմ. փեղի Շորեր գյուղ) կարելի է համեմատել հայ. շորոր «շարժել» բառի հետ (հմմ. Երևուրթ, գյուղ Շիրակում):

Պաիփերի երկրի անունը (Paiteri. Տայկական Պար լեռների միջին շրջան, հմմ. փեղի Պայդերան գյուղ) բաղկացած է հայ. պայթ «ճմբել» արմարից: Նշված փարածքը հայտնի է Թոնդուրեք հրաբխային լեռնազագաթով:

Ուիրամը (Uiram), որը հայկական Որմեա երկրի անունն է, կարծում ենք կազմված է հայ. որմ «պայտ» բառից և -եայ ամանցից (հմմ. Որմի բաղաբ Որմեայ ծովի՝ Որմիայի արևմտյան ափին):

Ալբայան (Albaja, Մուշի գավառ, հմմ. փեղի Աղբակս գյուղ) պարունակում է հայ. աղբ «գոմաղբ» հ.-ե. արմարը և -եայ ամանցը (հմմ. Աղբի. գյուղ Սասունում, Աղբանոց՝ Բաբերդի շրջանում. Աղբակ. գավառ Վասպուրականում): Այն վկայում է փեղի հողերի պարարտ լինելու մասին:

Աթուրգինի (Aturgini) երկրի անունը, գուցե իր մեջ ունի հայ. աթոռ բառը: Այն կազմված է Ադդուրու լեռան անունից (հմմ. Աթոռիկ. ձոր Իջևանի շրջանում, Աթոռ Ասահպա. լեռ Երզնկայի գավառում):

Խիմուա (Himua) երկրի անունը, թերևս, կապ ունի Երզնկայից 15 կմ դեպի հարավ-արևմուտքում գտնված մի հին բնակավայրի հետ, որը կոչվել է Տիմսոր (< *Տիմձոր): Այն, գուցե, կազմված է, հայ. հիմ «հիմք» արմարից:

Դայա(ե)նին (Daja (e) ni), կարծում ենք, բաղկացած է հայ. դայ «թաց» արմարից և -անի ամանցից (հմմ. Թացու. գյուղ Ուրմիա լճի ավազանում և Վանի շրջանում): Ուրարտագիները այն օգտագործել են Դիաու(ե)խի դրափոխված ձևով՝ -անի ամանցը փոխարինելով իրենց լեզվի - (ու) խի մասնիկով (հմմ. 35, էջ 111): Տին հույները, նրանցից վերցնելով այդ փեղանունը, դարձրել են Տառխ պահպանելով ուրարտերենի - (ու) խի ամանցի հետքը (հմմ. 29, էջ 16, ծան. 15):

Այսպիսով, Տայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները, որոնք մ. թ. ա. XII դարում ասորեստանցիները հիշատակում են Նաիրի երկրներ անունով, բնակեցված էին հայերով:

3. Քաղաքական պարմության հարցեր

Ատորեսպանի թագավոր Թիգլաթպալասար I-ը մ. թ. ա. 1112 թ. գորքով անցնում է Հայկական Տավրոս լեռները և մուտք գործում Նաիրի, որի 23 թագավորները Արամանիի հովիտում փորձում են միացյալ ուժերով դիմադրություն ցույց տալ թշնամուն:

Այդ ճակատամարտում Նաիրի երկրները դուրս են բերել 22000 զինվոր, սակայն պարություն են կրել (28, N10 և 29, էջ 124-125): Դրանից հետո նրանք համալրում են իրենց ուժերը. հակառակորդի դեմ դուրս են գալիս նաիրի 60 երկրների թագավորներ և նրանց օգնության եկած այլ արքաներ՝ իրենց գորամիավորումներով: Սակայն ասորեսպանի գորքը պարության է մատնում նրանց: Նաիրյան բանակը ևահանջում է Ճորոխի ավազան՝ Դայաննի, որտեղ էլ թշնամին նրա նկատմամբ նորից հաղթանակ է փանում:

Թիգլաթպալասարը գերևարում է նաիրի 23 թագավորների: Սակայն նա դրանց ազատ է արձակում Ատորեսպանի գերիշխանությունը ընդունելու պայմանով (19, էջ 43-45):

Թշնամին այդ արշավանքի ժամանակ ձեռք է բերում մեծ ավար՝ կողոպտելով ու ավերելով Նաիրի երկրները:

Ի դեպ, Հայկական լեռնաշխարհի արևմտյան հարվածում Ատորեսպանի փրակալ Թուբուլթի-Նինուրթա I-ը մ. թ. ա. 1244 թ. ձևափոխված արշավանքի կապակցությամբ ելում է 43 Նաիրի երկրների գոյության մասին: Իսկ Թիգլաթպալասարը հայտնում է, որ իր դեմ դուրս էին եկել Նաիրիի 60 և նրանց օգնության եկած այլ երկրների թագավորներ:

Կարծում ենք՝ այդ փարամաշրջանում 60 զավառներ ղեկավար թե լինեին:

Վարչաքաղաքական բաժանման հիմքում ընկած են եղել լեռնաշխարհի ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկությունները: Ամեն մի զավառ ներկայացնում էր մի անջատ և ուրույն փարամք՝ պայմանավորված լինելով լեռնային երկրի առանձնահատկություններով: Ուստի և կարելի է ենթադրել, որ Ատորեսպանի գորքի դեմ միավորվել էին նաև լեռնաշխարհի արևելյան հարվածի որոշ զավառներ:

Արտաքին թշնամու ներխուժման ժամանակ այդպիսի միասնություն հանդես բերելը հազվագյուտ երևույթ էր այն ժամանակ: Այդուհանդերձ հայոց իշխանները մ. թ. ա. 1112 թ. չեն կարողացել դիմակայել Ատորեսպանի բանակին, պարտվել են՝ փախելով մեծ կորուստներ: Հիմնական պարճառն այն էր, որ Նաիրի երկրները, հավանաբար, մեկ միասնական պետություն չէին կազմում: Բացի այդ, նրանց բանակը՝ ռազմաբեխիկական կարողությամբ հզոր Ատորեսպանի գորքին չէր կարող դիմակայել:

Թեպետ Նաիրյան երկրները չեն կցվում Ատորեսպանին, բայց դառնում են հարկատու՝ կախյալ վիճակով:

ԱՐԵՎԵԼԱՐԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Մ. Թ. Ա. XI-IX ԳԱՐԵՐՈՒՄ

1. Տայկական թագավորության հիմնադրումը Արարապյան հարթավայրում

Մ. թ. ա. 1112 թ. պարսություն կրելով լեռնաշխարհ ներխուժած Ասորեստանի զորքից՝ նախորդական իշխանները, բնականաբար, կծգտեին ձեռք բերել քաղաքական միասնություն: Սակայն նրանք, հաշվի առնելով նախկին թագավորության՝ Տայքի (խեթ. Տայասա) ոչ կոտ պետություն լինելու հանգամանքը, պետք է որ նոր ձևեր մտածեին այդ բացը լրացնելու համար: Դա, կարծում ենք, նախարարական փոխարինումն էր ստեղծելու ուղին է եղել: Գավառների միավորումով պետք է ստեղծվեին ավելի խոշոր վարչական կառույցներ, որով կհեշտանար լեռնաշխարհում փարածքների կապը և ղեկավարումը կազմակերպելը:

Որպեսզի այդ նոր միավորները կենտրոնաձիգ լինեին, հավանաբար, իշխանները ինչ-որ ձևով համաձայնության են եկել, որ դրանց ղեկավարները նշանակի թագավորը իր փոխմիջ: Այսպես են ձևավորվել Տայաստանում նախարարական հաստատությունները: Նման ենթադրության համար հիմք են ծառայում Մովսես Խորենացու համապատասխան հաղորդումները:

Ըստ հայ պատմիչի՝ Տայքի որդի և թագավոր Արմենակը իր եղբայրներ Խոռոհի, Մանավազին ու նրա որդի Բազին Արածանիի միջին ավագանում հարկացնում է գավառներ, որոնք ստեղծում են համապատասխան Խոռոխոռոնի, Մանավազյան և Բզնունի նախարարական փոխարինող (71, II, Ժբ): Մեր թվագրմամբ դա փոխարինող է ունեցել Թիգլաթպալասարի մ. թ. ա. 1112 թ. արշավանքից հետո: Ըստ Մովսես Խորենացու, այդ նախարարությունները կոչվել են նշված անձերի անուններով: Սակայն մեկ այլ առիթով պատմահայրը գրում է, թե հայոց Վաղարշակ թագավորը, գտնելով Տայքի զարմից մարդիկ, նրանց համար ստեղծում էր նախարարություններ, որոնք կոչում էր գավառների ու բնակավայրերի անուններով (71, II, ը): Ուրեմն, Խոռ, Մանավազ և Բազ նախարարները նույնպես կոչվել են փոխանուններով:

Այնուհետև Արմենակը, թողնելով Տայք գավառը (Վանա լճից հյուսիս), իր արքայապոռնով փեղափոխվում է Արարապյան հարթավայր ու բնակություն հաստատում Արագած լեռան ստորոտում (71, I, Ժբ):

Անշուշտ, նա այդ քայլին դիմում է նախարարական փոխարինում ստեղծելու ճանապարհով լեռնաշխարհի արևելյան հարավում պետական իշխանություն հաստատելու համար: Տայք արքան և իր հաջորդները պետականություն ստեղծե-

լու գործում փեղացիների կողմից ոչ մի դիմադրության չեն հանդիպում: Ուրեմն, այդ փարաձառյալների բնակիչները հայեր էին:

Ի դեպ, Արմենակը մեր թվագրմամբ իշխել է մ. թ. ա. 1085-1040 թթ.՝ Նայկ նահապետից մոտ 150 փարի հետո: Նեփևաբար, նա ոչ թե Նայկի որդին, այլ նրա սերունդից էր:

Մովսես Խորենացին Նայկի լեռնաշխարհի գալու հարցում փութք է փվել «Ասրվաձառյալ» արձարձված ժողովուրդների ծագման մի հին վարկածի, որի համաձայն, իբր, բոլոր ազգերը առաջացել են Բաբելոնի աշտարակի փլուզումից հետո ու փարաձվել աշխարհով մեկ: Ուստի և Նայկը Բաբելոնից է եկել, ու նրանից են ծագել հայերը: Իսկ փեղում այդ ժամանակ ապրել են սակավաթիվ մարդիկ (71, I, Ժբ): Այդ մասին հայ պատմիչը գրում է Արմենակին վերաբերող հաղորդման մեջ ցանկանալով ասել, որ լեռնաշխարհի արևելյան հարավ-ծում նրանից և իր սերունդներից էլ գոյացել են հայերը: Ելակետ ունենալով այդ և Արմենակի և նրա հաջորդների անուններից էլ բխեցնում է այդ փարաձառյալների փեղանուններն ու նախարարական փների հորջորջումները:

Նայ պատմիչը գրում է, թե Արմենակը իր անունով կոչել է լեռը Արագած, իսկ գավառը՝ Ուրն Արագածոյ:

Արագած անունը, կարծում ենք, կազմված է հայ. **արագազ** «որսի ցանց, որոգայթ» արմարից: Իրոք, այդ լեռան գագաթների միջև եղած անդունդը որոգայթ է: Նեփևաբար, հայոց արքայի գալու ժամանակ Արագածոտնում (Աշտարակի շրջան) ապրել են հայեր, որոնք իրենց լեզվով այդ լեռն անվանել են Արագազ (հմմ. 55, էջ 119):

Արմենակից հետո նրա որդի Արամայիսը (մ. թ. ա. 1040-1001 թթ.) Արարաբյան դաշտում հիմնում է Արմավիր քաղաքը (71, I, Ժբ): Արմավիր անունը, կարծում ենք, բաղկացած է հայ. **հ.ե. արմ** «գարմիկ» և **ավիր** «իշխան (<ավրի > օրի) արմավներից ու նշանակում է «փոհմիկ իշխան»: Ի դեպ, **արմ** բառը առկա է նաև Արամայիս (Արմայիս), Արամանյակ (Արմենակ) և Արամ անուններում, որոնցից առաջինի մեջ կարելի է նկատել նաև հայկական հեթանոսական Այս աստծու հորջորջումը:

Արամայիսը, ինչպես գրում է Մովսես Խորենացին, Արմավիր քաղաքը հիմնելուց հետո իր որդի Շարային հանձնում է հյուսիսային մի արգավանդ դաշտ, որն, իբր, նրա անունով կոչվում է Շիրակ (նույն փեղում):

Նայոց արքան նախարարական փուն է ստեղծում նշված փարաձառյալում: Սակայն ովքեր էին ապրում այդ ժամանակ Շիրակում, և արդյո՞ք Շարայի անունով է կոչվել այն: Այդ հարցերին, կարծում ենք, պատասխան են փայլապատմաբան իսկ հիշարակած անունները:

Շարա անունը, թերևս, բաղկացած է հայ. **շար** «շարվածք» արմարից և **-այ** անանցից: Իսկ Շիրակը, կարծում ենք, կազմված է **հայ. շիր** «կաթ» և **ակ** «աղբյուրի ակ» բառերով ու նշանակում է «կաթնաղբյուր»:

Ի դեպ, ինչպես գրվում են ուսումնասիրողները, հնում հայոց լեզուն 2 հնչյու-

նով սկսվող բառեր չի ունեցել: Դա հեպո և հայտնվել այդ լեզվում փոխառյալ բառերի միջոցով: Կարծում ենք՝ մ. թ. ա. XI դարի վերջին այդպիսի օտար բառաբանություններ, որոնք ունեին շարժյուններ և ներթափանցել էին հայերենի մեջ:

Տարևաբար, հայոց թագավորի որդին, Շիրակում դառնալով նախարար, կոչվել է փոխ ընկալապետի անունով Շարա: Այսպես հնարավոր էլ չէր լինի, որ Արամայիսը իր որդուն այնպեղ թագավոր նշանակեր: Եթե ընկալությունը օտար լիներ, չէր ընդունի կրակ:

Արամայիսից հեպո Արմավիրում թագավոր է դառնում Ամասիան (մ. թ. ա. 1001-970 թթ.), որը պակաս կառավարությունը փարածում է Մասիսի հյուսիս-արևելյան փեշերի գավառներում: Մովսես Լորենացին գրում է, որ նա լեռը իր անունով կոչում է Մասիս, իսկ իր որդիներից Յուլակին հանձնում է այդ փարածքի մի մասը, որպես ընկալապետ է կառուցում և կոչում նրա անունով Յուլակերպ: Իսկ մյուս մասը պալիս է Փառոսիս, որի անունով ևլ, իբր, կոչվում է փեղում կառուցում ավանք Փառախոս (71, 1, Ժ):

Մասիս անունը, կարծում ենք, կազմված է հայ. մաս «կտոր, մաս» բառից հին հայերենի հոգևակի հայցական հոլովի - (ի) ս վերջավորությամբ (հմմ. Մասիք, Մասնաց): Իրոք, այդ լեռը երկու գագաթներ ունի:

Փառախոսքը, թերևս, պարունակում է հայ. վառ «բազուկ (լեռան)» և իտպարմապները: Իսկ Յուլակերպն իր մեջ ունի հայ. ցուլ «ցուր» և ավելի հինում իրանականից փոխառյալ կերպ բաղադրամասերը (հմմ. Լուսակերպ, ավերակ գյուղ Նախիջևանի շրջանում, Լուսուք՝ Բարերոյի մոտ, Լուսորմ Տարունում և այլն):

Ուրեմն, Ամասիայից դեռ շատ առաջ Մասիսի հյուսիս-արևելյան փեշերին ապրել են հայեր, որոնք իրենց լեզվով անվանել են այդ լեռը և դրա լանջերի նշված ընկալապետները: Տայոց թագավորն էլ, իր երկու որդիներին դարձնելով այդ շրջաններում նախարար, կոչել է նշված ընկալապետների անուններով:

Այնուհետև Արմավիրում գահը ժառանգում է Գեղամը (մ. թ. ա. 970-921 թթ.), որը որոշ ժամանակ սեղ, այն փոխանցելով Նարմային (մ. թ. ա. 921-891 թթ.), գնում է հյուսիս-արևելքում գտնվող մի ծովակի ափ, մոտիկ լեռն, իբր, իր անունով կոչում է Գեղ, իսկ ծովակը և գավառը՝ Գեղարքունիք:

Դրանից հետո նա իր որդի Միսակին պալիս է այդտեղից հարավ գտնվող շրջանները մինչև այլև դաշտը, որ Երասի գետը, ճեղքելով լեռները, դուրս է գալիս: Նրա անունով, իբր, երկիրը կոչվում է Սյունիք, բայց պարսիկներն անվանում են Միսական (71, 1, Ժ):

Գեղ լեռան և Գեղարքունիք գավառի անունները բաղկացած են հայ. հ.-ե. գեղ «գեղեցկություն» արմապից ու բնութագրում են փեղակերպ: Դրանցից երկրորդի մեջ -ակունիք բաղադրամասը, որը հայ. մասնիկների միացություն է, ժողովրդական պոեզիայում դարձել է -արքունիք:

Գեղամ թագավորի անունը, կարծում ենք, վերցված է փեղանունից՝ հայ. հ.-ե. ամալ «ցեղ» բայի արմապի հավելումով ու նշանակում է «գեղալի»:

Սյունիք նահանգը, հավանաբար, այդպես կոչվել է փեղում սյունաձև ժայռե-

րով, իսկ Միսականը՝ սիսով (հմմ. սիս «հայկավ») հարուստ լինելու պատճառով:

Նայոց պեպրական իշխանությունը ևսխարարական փնտր սպեղծելու միջոցով հասարակվում է Սյունիքում, Սևանի ավազանում, Շիրակում մինչև Արաքսի հովիտը, Մասիսի հյուսիս-արևելյան լանջերին և, բնականաբար, Արարատյան հարթավայրում: Այդ բոլոր շրջաններում ապրում էին հայեր, ուստի և հայոց արքունիքի և փեղագինների միջև ոչ մի ընդհարում փնդի չի ունեցել: Նայոց պեպրական իշխանության փարածումն ու հասարակությունը այդ զավառներում բնացուցել է խաղաղ ճանապարհով մ. թ. ա. 1085-891 թթ.:

Մովսես Խորենացին գրում է, թե Միսական գունդը Վաղարշակ թագավորի օրոք ժառանգում է Աղվանից դաշտը՝ Երասխ գետից մինչև Նևարակերպ ամրոցը, որը կոչվել է Աղվանք բնության բաղադրության պատճառով (71, I, Ժը): Այդ անունը, իրոք, կազմված է հայ. հ.-ն. աղու «բաղցր, քնքուշ» (< աղ) արմափից և -ան ու -ք մասնիկներից: Նուն հայերը այդպես անվանել են ոչ միայն Արցախը, այլ նաև լեզգիական գեղերի երկիրը՝ ընկած Կովկասյան լեռների, Քուր գետի, Կասպից ծովի և Վրաստանի միջև: Լապին հեղինակները, Աղվանք անունը ձևափոխելով, դարձրել են Ալբանիա: իսկ հին պարսիկների մոտ այն դարձել է Առան, որն անցել է հայերենին որպես փոխառություն (52, էջ 168-178):

Աղվանք անունով երկու երկրներ կոչելը շփոթ է առաջացրել, որն էլ, կարծում ենք, պատճառ է դարձել հայկական Աղվանքը վերանվանելու Արցախ: Միջևադարում այդ անվանը փոխարինել է Կարաբաղը, որը Կովկասյան թաթարների կողմից սխալ կերպով ընկալվել է որպես կարա «սև» և բաղ «այգի»: Դա, անշուշտ, ժողովրդական ստուգաբանություն է, ուստի և կեղծ է, բանի որ այգին սև լինել չի կարող:

Կարաբաղ անունը, թերևս, կազմված է հայ. կարի «շատ» և հ.-ն. բաղ «մշուշ» (< բալ) արմափներից -ա- հոդակալով: Դա հասարակվում է Կարաբաղ փեղանվան անկայությամբ միջևադարյան Նայաստանի մի շարք զավառներում Արդահանի, Դիարբեքի, Կասանի, Սալմաստի, Կաղզվանի և Էջմիածնի շրջաններում:

Մովսես Խորենացու վկայությամբ Գուգարքում ևույնպես ևսխարարություն սպեղծվել է Վաղարշակի օրոք (71, I, Ժը):

Ի դեպ, Գուգարք (Գոգարք) անունը, կարծում ենք, կազմված է հայ. գոգ «փեշ» արմափից:

2. Արևելահայկական թագավորության հզորության ժամանակաշրջանը

Արևելահայկական թագավորությունը սպեղծվեց Արմենակի ջանքերով և աստիճանաբար զարգացավ Արամայիս, Լ՛մասիա, Գեղամ և Նարնա արքաների փիրակալության փարիներին:

Նարմայի (մ. թ. ա. 921-891 թթ.) իշխանության վերջին փարիսերին Միդիան նվաճում է Նայասփանի ինչ-որ զավառներ: Նրա հաջորդը Արամը (մ. թ. ա. 891-834), հակահարված է փռլիս թշնամու: Այդ մասին Մովսես Խորենացին գրում է. «Այս Արամը Նիսուսի Ասորեսփանիև և Նինվեիև փրելուց քիչ փարիներ առաջ, շրջակա ազգերից նեղվելով, հավաքում է հարազատ, քաջ և աղեղնավոր մարդկանց մի բազմություն՝ մոտ 50 հազար մարդ, վարժ նիզակավոր շար ուժեղ երկփասարդներ, հաջողակ ձեռքերով, սրտոտ ու հմուտ պատերազմող»:

Նա հանդիպում է հայոց սահմանների մոտ գրկվող մեղացիների քաջերին, որոնց առաջնորդում էր մի ոմն Նյուքար Մադես, հպարտ և պատերազմասեր մի մարդ, ինչպես ցույց է փռլիս նույն պատմագիրը: Դրանք մի անգամ քուշանների նման ասպատակելով սմբակներով ուրնակոխ արեցին Նայասփանի սահմանները և Մադեսը երկու փարի իրեն ենթարկեց այն:

Արամը հանկարծորեն նրա վրա հարձակվեց արևը ծագելուց առաջ՝ կոտորեց նրա բազմաթիվ ամբոխը և իրեն՝ Նյուքարին էլ, որ Մադես էր կոչվում, ձերբակալելով բերեց Արմավիր և այնտեղ պարսպի աշտարակի ծայրին հրամայեց պարիս վարսել, երկարի ցից մեխելով ճակատի մեջ՝ ի ցույց դնելով անցորդներին և բոլոր այնտեղ եկողներին, իսկ նրա երկիրը մինչև Զարասպ կոչված լեռը, իրեն հպատակեցնելով՝ հարկատու դարձրեց մինչև Նիսուսի թագավորելն Ասորեսփանի և Նինվեի վրա» (71, I, 69):

Նայոց թագավորը իշխանության սկզբի փարիներին հավաքում է ընտիր գիկվորներ և սրեղծում 50 հազարանոց բանակ: Այնուհետև նա հարձակվում է մեղացիների գորքի վրա, որին զլխավորում էր Նյուքար Մադեսը, պարտության մատնում և վերջինիս կալանավորելով բերում մայրաքաղաք Արմավիր, մահապարտի ենթարկում, իսկ նրա դիակը ամրացնել է փռլիս պարսպի աշտարակի վրա՝ ճակատին մեխ խփած:

Արամը, հեղ վերցնելով թշնամու կողմից նվաճված ինչ-որ զավառներ, մինչև Զարասպ (ժմկ. Զեյլաշին՝ Ուրմիա լճից քիչ հարավ-արեմուտք) լեռը (Պարսկահայք և Մակուի շրջան) մտցնում է Նայասփանի կազմի մեջ, որոնք այդ վիճակում մնում են մինչև Նիսուսի գահակալելը՝ մ. թ. ա. 859 թիվը:

Արամի հաջորդ ռազմական գործողությունների մասին հայ պատմիչի աշխատության մեջ գրված է. «Նույն այս Արամը, արևելցիների հեղ ճակատամարտը վերջացնելուց հեղո նույն գորությամբ շարժվում է Ասորեսփանի կողմերը, այնտեղ ևս գրկում է իր երկրի մի ուրիշ ապակակիչ՝ Բարշամ անունով, հսկաների ցեղից, 40 հազար սպառազեն հեղնակով և հինգ հազար հեղյակներով. նա խիստ հարկերով սաստիկ նեղելով անասպար էր դարձրել բոլոր շրջակայքը: Արամը պատերազմելով ընդհարվում է նրա հեղ և հաղածում է նրան Կորդուսի միջով ու շարտում Ասորեսփանի դաշտը՝ շարերին կոտորելով, իսկ Բարշամը նրա գիկվորներին հանդիպելով սպանվում է: Այս Բարշամին ասորիները երկար ժամանակ աստվածացրած պաշտում էին իր բազմաթիվ քաջագործությունների պատճառով: Իսկ Ասորեսփանի դաշտերի մեծ մասը Արամը

հայաբնակության մեջ պահեց երկար ժամանակ» (71, I, Ժդ):

Նայոց արքան, ավարտելով պարտերազմը արևելքում մեղացիների դեմ, իր բանակով գնում է արշավանքի դեպի Ասորեստան: Նա Կորդուբից (Տիգրիս գետին խաբուրի խառնվելու փեշից հյուսիս ընկած փարածք) դուրս է բշտում Ասորեստանի գործին, որին առաջնորդում էր Բարշամ թագավորը: Վերջինս այդ պարտերազմում զոհվում է: Փաստորեն, Արամը Տիգրիսի վերին ավազանի խոռոչական երկրները, որոնց փիրանալու համար ասսուրական փիրակալը ձեռնարկել էր արշավանք, նվաճում ու միացնում է Նայոց թագավորությանը:

Նայոց արքայի այս պարտերազմը տեղի է ունեցել Միդիային հաղթելուց հետո: Եթե Արամը գահ է բարձրացել մ. թ. ա. 891 թ., ապա մարերի դեմ նրա պարտերազմը, հավանաբար, թագավորից պետք է խլեր գոնե մի քանի փարի, եթե նկատի ունենանք, որ նա դրան պետք է լուրջ նախապատրաստվեր:

Ասորեստանում մ. թ. ա. 890-884 թթ. իշխել է Թուրուլթի-Նինուրթա II-ը, որից հետո մինչև 859 թ. Աշտուրաձիրապալ II-ը: Իսկ այդ ռազմական ընդհարումներից, ինչպես նշում է Մովսես Խորենացին, տեղի են ունեցել Նինուսի գահ բարձրանալուց (մ. թ. ա. 859 թ.) առաջ:

Ուստի Բարշամ անունը վերաբերում է Ասորեստանի թագավոր Թուրուլթի-Նինուրթա II-ին, որը մ. թ. ա. 884 թ. ավարտել է իշխանությունը՝ զոհվելով Արամի դեմ պարտերազմելիս: Թուրուլթի-Նինուրթայի զոհվելու մասին ասսուրական գրավոր աղբյուրներում հիշատակություններ չկան:

Դա հաստատվում է նաև ասսուրական սեպագիր աղբյուրների փյվյակներով, որոնց համաձայն Թուրուլթի-Նինուրթան, անցնելով Կաշիարի լեռները (Ժմկ. Մարդին), կարողանում է մուտք գործել միայն Ամիդի շրջան (Ժմկ. Դիարբեքիր): Տիգրիսի վերին ավազանը նա չի կարողանում նվաճել (29, էջ 151):

Արամը Ասորեստանին հաղթելուց հետո գնեքն ուղղում է Կապադովկիայի դեմ. «Սա դեպի արևմուտք շարժվելով, առաջինի վրա 40 հազար հեթանակ և երկու հազար հեծյալ (ավելացնելով), հասնում է Կապադովկիայի կողմերը, մի տեղ, որ այժմ Կեսարիա է կոչվում: Այստեղ նրան պարտերազմով հանդիպում է Տիփանյան Պայապիս Քադյան, որը բռնացել և գրավել էր փարածությունները երկու մեծ ծովերի միջև, այսինքն՝ Պոնտոսի և Օվկիանոսի: (Արամը) նրան ընդհարվելով վանում և փախցնում է մի կղզի ասիական ծովում. աշխարհի (պահպանության) համար թողնելով Մշակ անունով մեկին իր ցեղից և 10 հազար զորք՝ ինքը վերադառնում է Նայաստան» (71, I, Ժդ):

Այսպիսով, Արամը 90 հազար հեթանակ զինվորներով և չորս հազար հեծյալներով նվաճում է Կապադովկիան, որն ընկած էր Սև և Միջերկրական ծովերի միջև: Այդ երկրի թագավոր Պայապայը (Պայապիս) փախուստի է դիմում և ապաստան գտնում Միջերկրական ծովի մի կղզում:

Նայոց թագավորը Կապադովկիայում կուսակալ է նշանակում Մշակ անունով մեկին, որի մոտ թողնում է փաստագրող զինվոր՝ երկրի պաշտպանության համար:

Մ. Աբեղյանը Պայապայ անունը կապում է հին հունական դիցաբանության Պայ առասպելական էակի հորջորջման հետ: Նա ուներ այժի ուրբեր և մարդու կերպարանք: Մովսես Խորենացին Կասպադովկիայի առաջնորդի անվան կողքին դնում է դրա հայ. թարգմանությունը՝ Քաղեայ, որը կազմված է հայ. բառ «արու այժ» բառից և ~~հայ~~ ամանցից:

Մ. Աբեղյանը, հենվելով այս փաստերի վրա, գտնում է, որ Պայապայը պարմական անձանավորություն չի եղել, քանի որ նրա անունը դիցաբանական ծագում ունի:

Այնուհետև Մ. Աբեղյանը պնդում է, թե քանի որ Բարշամի անունը նշանակում է «երկնքի որդի», և այդ թագավորը հեթազայում պաշտվել է ասորիների մեջ որպես աստված, ևս էլ իրականում գոյություն չի ունեցել: Եվ որովհետև Արամի հակառակորդները իրական չեն եղել, ուրեմն ևս էլ պարմական անձնավորություն չէ: (45, 24-25 էջ):

Պետք է նկատի ունենալ, որ նշանավոր թագավորները հնում մահից հետո աստվածացվել և պաշտվել են: Այդպիսին է եղել խեթական փրակալ Սուպիլիլիումնա 1-ը, որի անունը խեթական սեպագիր աղբյուրներում նրա մահից հետո հիշարակվում է աստված նշանակող ցուցիչով:

Ծիշյու է, Պայապայը առասպելական էակի անուն է, իսկ Բարշամը դիցանուն:

Այդ նույն ձևով Ասորեստանի թագավորների մեծ մասը կոչվել է աստվածների անուններով (հմմ. Թուրուլթի-Նինուրթա, Ադադ-Ներարի, Աշշուր-Լամիթապալ, Շամշի-Ադադ, Աշշուր-դան և այլն): Սակայն նրանք եղել են իրական պարմական անձեր՝ թագավորներ: Ուստի այդ կարգի մեկնաբանությունները բոլորովին հիմք չեն փայլա ինչպես Պայապային ու Բարշամին, այնպես էլ հայոց Արամ թագավորին համարել ոչ իրական անձեր:

Արամի կապարած հաջորդ գործերի մասին հայ պարմիչը գրում է. «Որովհետև ևս արևելյան և հարավային (կողմերը) նվաճել և հանձնել էր այս երկու ցեղերին՝ արևելքը Սիսակյաններին և Ասորեստանի կողմերը՝ Կադմուսի փան հաջորդներին. այլևս ոչ մի տեղից կասկած չունեն, ուստի երկար ժամանակ մնաց արևմուտքում» (71, 1, Ժ):

Նայոց թագավորը արևելքում Միդիայից հետո նվաճած շրջանները հանձնում է Սյունիքի Սիսակյան ևսիարարական փան, իսկ հարավում Տիգրիսի վերին ավազանի խուռիական գավառները՝ Կադմուս փան (խուռիական Կադմուսի, Ժմլ. Մարդին լեռների հյուսիս-արևելյան փեշերին) իշխանի տնօրինությանը:

Այս բոլորից նաև պարզ է դառնում, որ Արամի ժամանակ լեռնաշխարհի արևմտյան հայկական գավառները արդեն ներգրավվել էին նրա թագավորության կազմի մեջ, որին ենթարկվում էր նաև Կասպադովկիան: Այն գտնվում էր Եփրատ գետից անմիջապես արևմուտք՝ Սև և Միջերկրական ծովերի միջև:

Արամի այդ հսկայաձավալ Նայկական թագավորությունը, որն ընդգրկում էր ամբողջ լեռնաշխարհը՝ որոշ հարակից փարսիներով հանդերձ, չէր կարող անհայր մնալ ժամանակի աստորական փրակալներին: Դրանցից Աշշուրնամի-

րապալ II-ը (մ. թ. ա. 883-859 թթ.), որն իշխել է Արամի ժամանակ, մ. թ. ա. 879 թվականին վերագրվող մի սեպագիր արձանագրության մեջ ամբողջ լեռնաշխարհը, ի փարբերություն իր կախորդների, հիշատակում է որպես մեկ միասնական Նաիրի երկիր: Այդ անունը փվյալ դեպքում առաջին անգամ փոքրվում հանդիպում է եզակի թվով (28, N26 և 19, էջ 80): Ուրեմն, այդ Նաիրի երկիրը, որով Ասորեստանի թագավորը եկափ ունի Հայկական լեռնաշխարհը, Արամի ժամանակի Հայկական թագավորությունն է:

Աշշուրնաձիրապալ II-ը չի հաշտվել Արամի նվաճումների հետ, որոնք վերաբերում էին Տիգրիսի վերին ավազանի խոռոչական երկրներին: Նա զորքով սկզբից հայտնվում է Նիբոր (ժմկ. Ջուդի) լեռան շրջանում և ապա Կադմուխի երկրում (Կադմյապուն): Այնուհետև Ասորեստանի թագավորը մտնում է Խաբիսի երկիր (ժմկ. Բոհյան գետի հարավային ավազան) և ապա՝ Խուբուշկիա (ևույն գետի հյուսիսային հովիտ): Ընդ որում նա դրանք համարում է Նաիրի երկրներ:

Այդ բոլորով հանդերձ Հայկական թագավորությունը, որոշ փարսածքային կորուստներ կրելով հարավում, շարունակում էր մնալ որպես հզոր պետական միավոր մինչև ասսուրական հաջորդ փիրակալ Նինուսի՝ Սալմանասար III-ի գահ բարձրանալը՝ մ. թ. ա. 859 թիվը:

3. Արևելահայկական թագավորության անկումը և օտար՝ քիսյանական պետության վերելքը

Նինուսը՝ Սալմանասար III-ը, մ. թ. ա. 859 թ. Ասորեստանում դառնալով թագավոր, ևույն փարսում ձեռնարկում է արշավանք դեպի Տիգրիսի վերին ավազան, Բոհյանի հովիտում գրավում է Խուբուշկիա երկիրը և ապա հարձակվում Վանա լճից անմիջապես հարավ-արևելք գտնվող Արամն ուրարտացու Սուգու-նիա ամրոցի վրա (28, N27):

Դա, ինչպես հայտնի է, Ուրարտու պետության և նրա սրբա Արամնի մասին առաջին հիշատակությունն է գրավոր աղբյուրներում:

Ասորեստանի այդ փիրակալը մի քանի փարսի անց՝ մ. թ. ա. 856 թ. , վերադառնալով դեպի Սիրիա ձեռնարկած արշավանքից, զորքով մտնում է Ալզի երկիր (Տիգրիսի վերին հովիտ), այնտեղից անցնում է Խուվա՝ Արամանիի ստորին ավազան, շարժվելով դեպի արևելք, հասնում Սուխմու երկիր, որը գտնվում էր Բյուրակնի լեռների արևելյան փեշերին, նվաճում այն, ապա ներխուժում Դայա-նի, որից հետո, թեքվելով հարավ, Վանա լճի ավազանում հարձակվում է Ուրարտուի վրա, գրավում նրա Արձաշկու մայրաքաղաքը (հայկ. Արճեշ), պարտության մատնում Արամնի (Արամու) զորքին և հարուստ ավարով վերադառնում է Ասորեստան (28, N27, II):

Ենթադրվում է, որ Սալմանասարի այս արշավանքի հետևանքով Հայկա-

կան թագավորությունը կորցնում է և՛ Կապադովկիան, և՛ Տիգրիսի վերին ավազանի՝ նախապես գրաված խոռիական երկրները: Իսկ Նայասարանի արևմտյան գավառները թշնամու հարձակման հերևանքով թալանվում ու ավերվում են: Վանի նահանգում էլ առանձնացել էին Ուրուարրի երկրից (Տիգրիս և Խարուր գետերի միջև) ժամանակին այնպեղ սպասարան գրամ ուրարտացիները, որոնք Արամնի գլխավորությամբ սրբեղծել էին թագավորություն (տես ստորև):

Արամի համար դա նա մեծ կորուստ պարբ է համարվել:

Տավանաբար, Սալմանասար III-ի՝ Նինոսի այս արշավանքին է վերաբերում Մովսես Խորենացու «Նայոց պատմության» հեղինակ հաղորդումը. «Իսկ Նինոսը Նինվեում թագավորելով մտքում պահում ուներ իր նախնիի՝ Բելի վրեժի հիշատակը, գրույցներից լսած լինելով, և երկար փորձեր մտածում էր վրեժխնդիր լինել, դիպելով ու սպասելով նայասարավոր ժամանակի, որպեսզի քաջ Նայկի սերունդներից ամեն մի ճեպ ոչնչացնի: Բայց կասկածելով, թե այդպիսի ձեռնարկությունը կարող է նրա թագավորության կործանման պարճառ դառնալ, իր չար խորհուրդը թաքցնում է, (Արամին) հրամայում է առանց կասկածի իր իշխանությունը վարել, իրավունք է փալիս մարգարտե վարսակալ կրել և երկրորդը կոչվել» (71, I, Ժդ):

Կարծում ենք՝ այսպեղ կցկտուր կերպով ներկայացված է Սալմանասար III-ի մ. թ. ա. 856 թ. Նայասարան կարարած արշավանքը, որի մասին հայ պատմիչը միայն ակնարկ է անում:

Ատրեսարանի արթան իր այդ արշավանքի ժամանակ Դայանեի երկրից՝ Տայրից չի գալիս դեպի Արարապյան դաշտ, որպեղ գրկվում էր հայոց Արմավիր մայրաքաղաքը: Նա գորքով թեքվում է դեպի հարավ: Դա, կարծես, հաստատում է հայ պատմիչի այն վկայությունը, որի համաձայն Ատրեսարանի փրակալը հաշտվում է Արամի հետ, նրան համարում է երկրորդը իրենից հետո և թույլ փալիս կրել մարգարտե վարսակալ:

Նայասարական այս փոխհարաբերությունների մասին մեր պատկերացումներն ավելի համակողմանի են դառնում Դիոդորոս Սիկիլիացու «Ղարմական գրադարան» աշխատության հերևակալ վկայությամբ. «Այնուհերև նա (Նինոս), մեծ գորքով ներխուժելով Արմենիա, և մի շարք քաղաքներ ավերելուց հետո կտորեց րնդի բնակիչներին, ոստին նրանց թագավոր Բարզանեսը, տեսնելով, որ ինքն ի վիճակի չէ նրա դեմ կռվելու, առապ կվերևերով դիմավորեց նրան և սասաց, որ ինքը կկատարի նրա բոլոր հրամանները: Իսկ Նինոսը նրան վերաբերվեց մեծառոգաբար և համաձայնվեց, որ նա փրիի Արմենիային և, մնալով իր բարևկամը, գորք ուղարկի և միջոցներ իր բանակի համար» (63, էջ 36):

Եթե Նինոսը Սալմանասար III-ն է, իսկ դա այդպես է, ուրեմն Դիոդորոսի (մ. թ. ա. I դ.) հիշատակած Բարզանեսը՝ Արմենիայի թագավորը, հայոց արթա Արամ է: Բարզանես բարը, կարծում ենք, հայ. բարձ «պարիլ» արմարն է: նույն լեզվի -անի ածանցով և Արամի փրիդոսն է եղկ, որը և հին հունարենում պերբ է հնչեր կշված ձևով:

Նկարի ունենալով այս և հենվելով վերը բերված հաղորդման փվյալների վրա՝ կարելի է ենթադրել, որ երբ Նինոսը՝ Սալմանասար III-ը, նվաճում է Դա-յաննին՝ Տայքը, Արամը գնում է ընծաներով կրան քնդառաջ, և երկուսի միջև փե-րի է ունենում համաձայնություն, որ Նայասարանը Ասորեստանին զինվորներ և միջոցներ մատակարարի: Հավանաբար, դրա համար էլ Նինոսի գորքը այլևս չի մտնում Արարարյան հարթավայր:

Նրանց միջև կայացած այդ պայմանավորվածությունը նպատակաուղղված պետք է լիներ առաջին հերթին Վանի նահանգի նորաստեղծ Ուրարտու պետու-թյան դեմ, քանի որ և՛ մեկի, և՛ մյուսի համար այն բարեկամ պետություն չէր:

Չնայած այն հանգամանքին, որ Նինոսը համաձայնվում է, թե Արամը կախկի-նի նման փրփի ողջ Նայաստանին, վերջինս շատ շուտով կորցնում է իր արևմու-յան գավառները:

Այսպես, երբ Սալմանասար III-ը մ. թ. ա. 844 թ. վերստին ձեռնարկում է արշա-վանք դեպի Նայկական լեռնաշխարհ, այս անգամ արդեն ուղղված միայն Ուրար-տուի դեմ, վերջինիս թագավոր Արամեն այդ ժամանակ արդեն նվաճել էր արևմու-յան Տիգրիսի և Եփրատի ակունքների միջև ընկած տարածքները (28, N31):

Դա նշանակում է, թե Նայկական թագավորությունը արդեն կորցրել էր Արա-մանի և Եփրատի վերին ավազանի իր գավառները: Դրանք նվաճվել և կցվել էին Ուրարտու պետությանը:

Այդ արշավանքից մեկ տարի անց Վանում սկսում է գահակալել Մարդուրի I-ը (մ. թ. ա. 843-825 թթ.), որի իշխանության տարիներին ասսուրա-ուրարտա-կան ռազմական ընդհարումները կատաղի բնույթ են կրում:

Արամի մահից հետո Արմավիրում գահը փոխանցվում է Արա Գեղեցիկին (մ. թ. ա. 834-809 թթ.), որի մասին Մովսես Խորենացու աշխատության մեջ կար-դում ենք. «Արան Նինոսի վախճանվելուց թիչ տարիներ առաջ խնամակալ դար-ձավ իր հայրենիքին՝ Նինոսից նույնպիսի շնորհի արժանանալով, ինչպես իր հայր Արամը» (71, I, Ժ):

Նայկական թագավորությունը, որն ամփոփված էր լեռնաշխարհի արևելյան շրջանների սահմաններում, Արա Գեղեցիկի ժամանակ շարունակում էր մնալ որպես Ասորեստանին ենթակա պետություն:

Հայ պարամիչը գրում է, որ այդ ժամանակ երկիրը Արայի անունով կոչվում է Այրարապ: Այն ունի նաև Արայարպ տարբերակը:

Այրարապ անունը նշանակում է Արայի արպ «մշակելի հող»:

Այդ ժամանակ Բիայնիլիի (Ուրարտու) թագավոր Իշպուիսին (մ. թ. ա. 823-811 թթ.) առաջին անգամ Նայկական լեռնաշխարհի արևելյան շրջանները՝ Այրարապը հիշատակում է Էփիուսի անունով (36, N20), որը, կարծում ենք, բաղկացած է խուրի-ուրարտական eti «անձ» արմատից և - (u) ni անձանցից ու նշանակում է «անձնական»: Հավանաբար, Էփիուսին Այրարապ անվան անուղղակի թարգմանությունն է: Այդ երկիրը կոչվել է Արայի անձի անունով, ուստի և ուրարտացիները կարող էին այն անվանել Էփիուսի «անձնական»:

Արա Գեղեցիկի ժամանակ (մ. թ. ա. 834-809 թթ.) հայ-ուրարպական փոխ-հարաբերությունները ավելի են սրվում:

Մոտ մ. թ. ա. 824 թ. Իշայունոնիսին իր որդի Մենուայի հետ ձեռնարկում է արշավանք դեպի Էփրոսի՝ Այրարատ և նվաճում նրա Ռիփերուխի (Նայկական Պար լեռների հյուսիս-արևելյան լանջեր), Լուշա (հմմ. Ճորոխի ավազանի հարավի Լուսինք գյուղ) և Կապարգա (հայկ. Կղարջք՝ Ճորոխի սպորին հովտում) երկրները, որոնց օգևության էին եկել Էփրոսիի գորամիավորումները (36. N20 և 19, էջ 146-150):

Վանի թագավորի ռազմական գործողությունները, ուղղված Էփրոսիի դեմ, կրկնվում են նրա իշխանության հաջորդ փարիսների ընթացքում:

Մ. թ. ա. 810 թ. Ասորեսրանում Շամշի-Ադադ V-ի մահից հետո գահը անցնում է նրա դեռահաս որդի Ադադներարի III-ին, որին փոխարինում է մայրը՝ Շամմուրամաթը (մ. թ. ա. 810-806 թթ.):

Ասորեսրանի թագուհին բանակցություններ է սկսում Նայասրանի հետ. «Իսկ Նինոսի վախճանվելուց կամ Կրեպե կղզի փախչելուց հետո, ինչպես համոզված եմ, Շամիրամը իր ախար համարձակ պատվելով՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում ընձաներով ու նվերներով և շատ աղաչանքներով ու պարգևների խոսպումով խնդրում գալ Նինվե իր մոտ կամ իրեն կին առնել ու թագավորել այն ամենի վրա, որոնց փրկում էր Նինուր, և կամ նրա ցանկությունը կատարել ու մեծամեծ նվերներով խաղաղությամբ իր տեղը դառնալ» (71. 1. Ժն):

Կարծում ենք, խիստ կասկածելի է հայ պատմիչի ներկայացրած այս սիրային պատմությունը: Սակայն մի բան ակնհայտ է, որ Ասորեսրանի թագուհին բանակցություններ է վարել Նայկական թագավորության հետ, որը փակուղի է մտել: Նայոց արքան, օգտվելով առիթից, ցանկացել է Ասորեսրանի գերիշխանությունից ձերբազատվել, ինչն էլ սրել է նրանց հարաբերությունները:

Այդ նույն տարում մ. թ. ա. 810 թ., Վանում Մենուան դառնում է թագավոր: Շամմուրամաթը, ի տարբերություն Ասորեսրանի նախորդ փրակալների, ոչ մի ռազմական գործողություն չի ձեռնարկում Վանի թագավորության դեմ: Նրա իշխանության տարիներին, ինչպես երևում է աստուրական և ուրարպական սեպագիր աղբյուրներից, այդ երկու երկրների միջև թշվառական հարաբերություններ չեն եղել:

Մովսես Խորենացին նշում է, որ Շամիրամը Վան է ուղարկում բազմաթիվ բարի, պղնձի, երկաթի մասնազեպներ և կառուցել է փալիս մի մեծ ջրանցք, որը կոչվում է նրա անունով (71. 1, Ժգ): Նայ պատմիչը նրան է վերագրում Վանի շրջանում այդ ժամանակ իրականացված բոլոր կառույցներն ու նույնիսկ սեպագիր արձանագրությունները:

Այդ բոլոր շինությունները և ջրանցքը, ինչպես հայտնի է ուրարպական սեպագիր արձանագրություններից, Մենուան է կառուցել փվել:

Կարծում ենք, ավելի ճիշտ կլինի մտածել, որ Շամիրամը, բարեկամանալով Վանի թագավորության հետ, մեծ օգևություն է ցուցաբերել նրա փրակալին՝

դրանք իրականացնելու համար: Առանց հզոր Ասորեստանի գործուն ւաջակցության հնարավոր չէր լինի կառուցել Շամիրամի անունով կոչվող ջրանցքը:

Թագուհու իշխանության փարիսերին Վանի արքա Մենուսն միայն մեկ անգամ է արշավանք ձեռնարկել դեպի Արարատյան դաշտ: Դա փնդի է ունեցել մ. թ. ա. 809 թ. , որի ժամանակ նա կվաճել է Մասիսի հյուսիս-արևելյան լանջերի Էրիկուախի երկիրը և առաջ խաղալով գորթով հասել է Արաքս գետը: Դրա մասին Ցոլակերպում նրա թողած սեպագիր արձանագրության մեջ կան հանգամանալից փվյալներ (36, N30, N 31, 19, էջ 155):

Նայաստանի վրա արշավել է նաև Շամիրամը. «Երբ պարզամավորները շատ անգամ երթնեկություն կարարեցին, և Արան չհամաձայնվեց, Շամիրամը սաստիկ չարանալով, պարզամավորությունը դադարելուց հետո, վերցնում է իր գորբի բազմությունը և շփալում է գնալ հասնել Նայաստան Արայի վրա: Բայց որքան դեմքից կարելի էր գուշակել, շփալում էր ոչ այնքան նրան սպանելու կամ հալածելու, որքան կվաճելու կամ իր ձեռքը գցելու.....: Շփալով գալիս հասնում է Արայի դաշտ, որ նրա անունով կոչվել է Այրարատ: Ճակատամարտը պարտաստելիս նա իր գորապետներին պարվեր է փախիս, եթե դեպքը բերի, պկար է ջանալ կենդանի պահել Արային: Կովի ժամանակ Արայի գորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պարերազմի մեջ Շամիրամի կրտիճներից.....: Իսկ երբ հայոց գորքը պարտաստվում էր նորից պարերազմել Շամիրամ փիկնոջ հետ, Արայի մահվան վրեժն առնելու համար (Շամիրամն) ստում է. «Ես իմ աստվածներին հրամայեցի նրա վերքերը լիզել, և նա կկենդանանա»: Եվ նրա մասին այսպիսի լուրեր փարածելով մեր Նայոց երկրում և բոլորին համոզելով խռովությունը խաղաղեցնում է» (71, I, ժե):

Կարծում ենք՝ հայ պարմիչի աշխատության մեջ ինչպես ջրանցքի և մյուս կառույցների շինարարությունն է Մենուայի փոխարեն վերագրված Շամիրամին, այնպես էլ՝ Վանի թագավորի մ. թ. ա. 809 թ. արշավանքը, որի ժամանակ նա հասել էր Արաքս գետը:

Կարելի է ենթադրել, որ այդ ռազմական գործողությանը Շամիրամն իր գորախմբով մասնակցել է: Նայոց թագավոր Արան, հավանաբար, զոհվել է հենց այդ պարերազմում:

Նավանաբար, Շամիրամի կողմից վարվող այդ քաղաքականությունը՝ Վանի թագավորության հետ դաշնակցելը ընդդեմ Նայաստանի, նրա նախորդների համար խորթ էր և մերժելի: Դա այն էական պարճառներից մեկն էր, որը նպաստեց թագուհու կործանմանը: Նրա որդի Նինվասը, հավանաբար, փոքր գորախմբով գալիս է Վան մտրը պարժելու համար, որը փախուստի է դիմում: Մուսերավորները հասնում և սպանում են Շամիրամին (71, I, ժը, ժթ):

Դրանով իսկ վերջ է փրվում Ասորեստանի և Վանի թագավորության դաշնակցությանը:

